



ISSN 2579 - 2555

**ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ**

1

ԵՐԵՎԱՆ - 2018
www.iatc.am



ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ
INTERNATIONAL ACCOUNTANCY TRAINING CENTRE
МЕЖДУНАРОДНЫЙ ЦЕНТР ПО ОБУЧЕНИЮ
БУХГАЛТЕРИИ

ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

1 (1)

FINANCE AND ACCOUNTING

SCIENTIFIC JOURNAL

ФИНАНСЫ И БУХГАЛТЕРСКИЙ УЧЕТ

НАУЧНЫЙ ЖУРНАЛ

ԵՐԵՎԱՆ 2018

«ՀՈՒՄԿ» ՀԻՄՆԱԴՐԱՍ ՀՐԱՏԱԴԱԿՉՈՒԹՅՈՒՆ

«Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում» գիտական
հանդեսը լույս է տեսնում տարեկան երկու անգամ:
Հրատարակվում է 2018 թվականից:

The scientific journal "Finance and accounting" is published
twice a year. It has been published since 2018.

Научный журнал "Финансы и бухгалтерский учет" выходит
два раза в год. Издается с 2018 года.

Խմբագրություն՝

Գլխավոր խմբագիր՝ Արմեն Ճուղուրյան (տ.գ.դ., պրոֆ.)

Գլխ. խմբագրի տեղակալ՝ Հասմիկ Սահակյան

Պատասխ. քարտուղար՝ Մելինե Մխիթարյան

Պատասխ. խմբագիր՝ Անի Առաքելյան

Խմբագրական խորհուրդ.

Աշոտ Թավադյան (տ.գ.դ., պրոֆ.), Արմեն Հակոբյան (տ.գ.դ.)

Լիանա Գրիգորյան(տ.գ.դ., պրոֆ.), Մելս Սահակյան (ֆ.-մ.գ.թ.,

պրոֆ.), Նոննա Խաչատրյան (տ.գ.թ.)

© ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ • FINANCE
AND ACCOUNTING • ФИНАНСЫ И БУХГАЛТЕРСКИЙ УЧЕТ

Edition:

Editor –in-chief: Armen Tshuguryan (Sc.D. in Economics, Professor)

Deputy editor –in-chief: Hasmik Sahakyan

Executive Secretary: Meline Mkhitaryan

Managing Editor: Ani Arakelyan

Editorial Board:

Ashot Tavadyan (Sc.D. in Economics, Professor), Armen Hakobyan (Sc.D. in Economics), Liana Grigoryan (Sc.D. in Economics, Professor), Mels Sahakyan (Ph.D. in Phys.- Math. Sciences, Professor), Nonna Khachatryan (Ph.D. in Economics)

Редакция:

Главный редактор: Армен Джугурян (д.э.н., проф.)

Зам. главного редактора: Асмик Саакян

Ответственный секретарь: Мелине Мхитарян

Ответ. редактор: Ани Аракелян

Редакционная коллегия:

Ашот Тавадян (д.э.н., проф.), Армен Акопян (д.э.н.), Лиана Григорян (д.э.н., проф.), Мелс Саакян (к.ф.-м.н., проф.), Нонна Хачатрян (к.э.н.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Մահակյան «ՀՈՒՄԿ» հիմնադրամ Լուսինե Մնացականյան «ՀՈՒՄԿ» հիմնադրամ	Հաշվապահների վերապատրաստման գործընթացում որոշումների կայացման ռիսկերը	6
Ատոմ Մխիթարյան ՀՀ ԲՈՀ փոխնախագահ	Ոչ նյութական ակտիվների հաշվառման հիմնախնդիրները որոշումների կայացման համատեքստում	15
Համեղ Միրզայի ԵՏԿԱ	Գիտության էթիկայի նորմեր և մտավոր սեփականություն	24
Թամարա Հովակիմյան ԵՊՀ	Հարկային հաշվառման էությունը	31
Թամարա Հովակիմյան ԵՊՀ	ՀՀ Հանրային հատվածի հաշվառման և հաշվետվողականության հարցեր	39
Նոննա Խաչատրյան, ԵՊՀ Վահան Գևորգյան, ԵՏԿԱ	Ֆինանսական միջոցների վերահսկողության կատարելագործումը ԲՈՒՀ-երում	47
Հայաստան Հակոբյան ԵՀՀ	Արտահիվանդանոցային բուժօգնության ֆինանսավորման մեխանիզմների բարելավման ուղիները	55
Նարինե Մելիքյան ԿԿԿ	Տնօրենների խորհուրդը որպես կորպորատիվ որոշումների պատասխանատու	66

Կարեն Ալավերդյան ՀՊՏՀ Րաֆֆի Ալեքսանյան ԵՊՀ	Հանրային վերահսկողության դերը ՌԴ-ում արտաքին առդիտի կարգավորման հարցում	81
Գայանե Ղուկասյան ԵՊՀ Վեհանուշ Մարուխյան «ՀՈՒՄԿ» հիմնադրամ	Ներդրումային նախագծի արդյունավետության գնահատումը ռիսկի և անորոշության պայմաններում իմիտացիոն մոդելավորմամբ	96
Մելս Սահակյան ԵՊՀ, «ՀՈՒՄԿ» Աննա Բաղդասարյան ԵՊՀ	Հայաստանի առևտրային բանկերի գործունեության արդյունավետության գնահատում	109
Սոնա Բալոյան «ՀՈՒՄԿ» հիմնադրամ Արման Ասրյան Յինխուայի համալսարան	Տվյալների պարփակման վերլուծության կիրառությունը կազմակերպությունների կորպորատիվ գործունեության ֆինանսական գնահատման խնդրում	128
Անի Առաքելյան «ՀՈՒՄԿ» հիմնադրամ	Որակի ապահովման գործիքակազմը ԲՈՒՀ-երում	140

Հասմիկ Սահակյան

«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն»,
գործադիր տնօրեն

ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Հիմնաբառեր – մասնագիտական կողմնորոշում, աշխատաշուկա, գործազրկություն, մարդկային կապիտալ

Հաշվապահների վերապատրաստման գործընթացը, որոշումների կայացման առումով, ռիսկեր է պարունակում, որոնք կարելի է ներկայացնել երեք խմբով՝ հանրային (պետական), մասնավոր (ուսանող) և համալսարանական (բուհ): Որակյալ հաշվապահների պահանջը միշտ էլ աշխատաշուկայում իրեն զգացնել է տալիս, և այդ մասնագիտությանը ձգտում են ոչ միայն դպրոցի շրջանավարտները, այլև նախկինում այլ որակավորում ստացած ավագ սերնդի ներկայացուցիչներ, որոնք, վերակավորվելով, փորձում են հաշվապահի աշխատանք գտնել: Այս գործընթացում խնդիր է առաջանում կայացնել այնպիսի որոշումներ, որոնք կպարունակեն ռիսկայնության փոքր չափաբաժին: Փորձը ցույց է տալիս, որ, վերապատրաստման ընթացքում ծախսելով դրամային և ժամանակային ռեսուրսներ, անհատին ոչ միշտ են հասանելի դառնում ցանկալի աշխատանքին անցնելու նպատակադրումները:

Աշխատուժի շուկայում մրցակցային բարենպաստ դիրքերում են հայտնվում հիմնականում այն մասնագետները, որոնք արագորեն արձագանքում են գործատուի կողմից ներ-

կայացվող նորանոր պահանջներին: Եվ, բնականաբար, աշխատուժի շուկայում ձևավորված արդիական պահանջներին առավելապես ձկուն վերաբերմունք են ցուցաբերում երիտասարդները, որոնք հեշտությամբ են գնում վերապատրաստումների, ինովացիոն գաղափարական ընկալումների: Այս առումով, եթե տեղի է ունենում մարդկային կապիտալի երիտասարդացում, ապա որոշակիորեն կրճատվում է մարդկային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման ռիսկերը երկրի ներքին շուկայում:

Մակայն, մյուս կողմից, մարդկային կապիտալի երիտասարդացումը գրավիչ է արտաքին շուկաների համար և մրցակցային մարտահրավերներ է առաջացնում երկրի ներսում, քանի որ երիտասարդ մասնագետները առավել արագ են արձագանքում տնտեսական արտաքին ազդակներին, ճրկուն կողմնորոշում ունեն վերաորակավորվելու և արտերկրներ մեկնելու ճանապարհով կարերիայի աճը ապահովելու ուղղությամբ:

Հետևաբար, պետական շահերից ելնելով, մարդկային կապիտալի երիտասարդացման գործընթացի ռիսկերի կառավարումը պետք է թիրախավորվել հետևյալ ուղղություններով.

- ինչպե՞ս է կանխարգելվելու երիտասարդ մասնագետների արտագաղթը երկրից,
- ինչպե՞ս է մեղմվելու գործազրկության մակարդակը երիտասարդ մասնագետների շրջանում,
- ինչպե՞ս է կարգավորվելու գործատու-երիտասարդ փոխադարձ ակնկալիքների շրջանակը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործազուրկների մեջ բարձրագույն կրթություն ունեցողների թիվը

տարեցտարի ՀՀ-ում դանդաղ տեմպերով ավելանում է:¹ Եվ, այն դեպքում, երբ գործատուների մեծ մասը շարունակում է կարևորել թեկնածուների մոտ բարձրագույն կրթության առկայությունը, անկախ սվյալ ոլորտում պահանջվող իրական մասնագիտական որակներից, գիտելիքներից և հմտություններից:

Բնականաբար, հայրենիքում պարապուրդի մատնվող մարդկային կապիտալի երիտասարդ հատվածը պետք է փորձի աշխատանք որոնել արտերկրում: Արտագնա աշխատանքի մեկնելու ռիսկերն ուրվագծելու համար փորձ է կատարվել հասկանալու, թե երիտասարդները որքանով են հոգացել արտագնա աշխատանքի հետ կապված հարցերը, և ինչպիսին են այն մեխանիզմները, որոնցով երիտասարդները ներգրավվում են արտագնա աշխատանքի համակարգում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ից մեկնել ցանկացողների 61%-ն արական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 39%-ը՝ իգական:² Ընդ որում, մեկնելու ցանկություն հայտնողների բաշխվածությունը ներկայացվել է հետևյալ կտրվածքով.

- 16-20 տարիքային խումբ՝ 15%
- 21-25 տարիքային խումբ՝ 46%
- 26-30 տարիքային խումբ՝ 39%

Մեկնողների գրեթե կեսը 21-25 տարիքային խմբի ներկայացուցիչներ են: Նվազագույն են 16-20 տարիքային խմբի մեկնողները: Սա կապված է ուսումնական հաստատություններում սովորելու և դեռևս մասնագիտություն չու-

¹ ՀՀ ԱՎԾ, պաշտոնական կայք, //armstat.am

² ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Եր., 2013, էջ 45

ներնալու հետ: Այն հարցին, թե արդեն իսկ եկող երիտասարդներն ինչ քայլեր են ձեռնարկել արտագնա աշխատանքի մեկնելու հետ կապված, ստացվել է հետևյալ պատկերը.

- մեկնելու պայմանավորվածություն ենք ձեռք բերել՝ 55%
- ընդգրկվել եմ այն աշխատանքային խմբում, որը պետք է մեկնի՝ 11%
- դիմել եմ երկրի դեսպանատուն, ուր ցանկանում եմ մեկնել՝ 9%
- արդեն իսկ գտել եմ աշխատանք՝ 16%
- այլ՝ 9%³

Հետևաբար, մարդկային կապիտալի վերարտադրության կառավարումը միգրացիոն ռիսկերի համատեքստում անհրաժեշտ է թիրախավորել նաև երկրում առկա աշխատուժի երիտասարդացմանը: Համեմատաբար երիտասարդ աշխատանքային ռեսուրսների արտահոսքը տնտեսական անվտանգության հիմնախանդիրներ է առաջացնում հետևյալ առումներով.

- Նախ, պետության կողմից մարդկային կապիտալի համալրմանն ուղղված ռեսուրսները երիտասարդների արտագաղթի հետևաքնով սկսում են աշխատաել ի նպաստ այլ երկրների շահերի:
- Երկրորդ, արտագաղթող երիտասարդները լուրջ պոտենցիալ են երկրի ներսում մարդկային կապիտալի հետագա վերարտադրման համար, որի կորուստը տնտեսական անվտանգության խնդիրներ է առաջացնում:

³ Նույն տեղը՝ էջ 40

- Երրորդ, մարդկային կապիտալի «ծերացումը» դժվարությամբ է արձագանքում երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական արագընթաց փոփոխվող պահանջների մարտահրավերներին, ուստի, ձգտումը դեպի աշխատուժի երիտասարդացմանը, միշտ էլ արդարացված պետք է համարել երկրի տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից:

«Հաշվապահության Ուսուցման Միջազգային կենտրոն» կրթական հիմնադրամը շուրջ քսան տարի լուրջ աշխատանքներ է իրականացնում հաշվապահների վերապատրաստման առումով: «Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական հիմնադրամը հիմնվել է Երևանում, 1998թ. ապրիլին Եվրոմիության «Tacis» FINAR 9601 ծրագրի շրջանակներում: Հիմնադիրն է IFOA իտալական խորհրդատվական, ուսումնական կենտրոնը: Կենտրոնի կայացմանը նպաստել են նաև Լոնդոնի գործարարության դպրոցը (LBS) և «Անգլիայի և Ուելսի Երդվյալ Հաշվապահների ինստիտուտ» (ICAEW) կրթական հաստատությունները:

Ներկայումս կենտրոնը պատրաստում է բարձր որակավորում ունեցող մասնագետներ հաշվապահական հաշվառման, աուդիտի, ֆինանսների կառավարման բնագավառներում, որոնք հիմնված են ֆինանսական հաշվառման ժամանակակից հիմնադրույթների վրա: Այդ հիմնադրույթներն իրենց արտացոլումն են գտել մեր ուսումնական ծրագրերում, որոնք թվով 25-ից ավելի են:

Այսօր մենք կարող ենք հպարտությամբ ասել, որ շատ ձեռնարկություններ, որոնք գործում են Հայաստանի տարածքում, ընտրել են «ՀՈՒՄԿ» հիմնադրամը որպես իրենց հաշ-

վապահների և ֆինանսիստների մատակարար: Հայաստանի լավագույն ֆիրմաներում այժմ աշխատում են մեր մագիստրոսական ծրագրի շրջանավարտները, և նրանց թիվը գնալով աճում է:

Ավելի քան 250 ուսանող ամեն տարի վերապատրաստվում է կենտրոնում: Մեծամասնություն են կազմում այն ունկնդիրները, որոնք արդեն ունեն աշխատանքային փորձառություն, և նրանք կենտրոն են հաճախում խորացնելու իրենց գիտելիքները նեղ մասնագիտական բնագավառներում:

Իր գոյության տարիների ընթացքում, «ՀՈՒՄԿ» հիմնադրամի ծրագրերը փոփոխման և դիվերսիֆիկացման են ենթարկվել: Այժմ կենտրոնը հանդիսանում է հաշվապահական հաշվառման և ֆինանսների բնագավառում մասնագիտացված միավոր, որի ծրագրերը համապատասխանեցված են ազգային՝ ՀՀԱԱ և միջազգային որակավորման (ACCA - Association of Chartered Certified Accountants) մարմինների ծրագրերին և կրթական շուկայի պահանջներին:

«ՀՈՒՄԿ»-ն առաջարկում է դասընթացներ տարբեր բնագավառներում, ինչպիսիք են՝ ֆինանսական և կառավարչական հաշվապահությունը, ֆինանսական կառավարումը, տնտեսաիրավական և հարկային համակարգերը, տեղեկատվական վերլուծությունը, աուդիտը և այլ դասընթացներ: Մեր դասընթացները և կրթական ծրագրերը բավականին ճկուն են և դրանց տևողությունը տատանվում է 15 ժամից մինչև 3 ամիս:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ քսան տարիների ընթացքում հիմնադրամը վերաորակավորել է ավելի քան 5000 հաշվապահի: Այստեղ կցանկանայինք ներկայացնել մեր

մի շարք դասընթացներ, որոնք հնարավորություն են ընձեռում հաշվապահ մասնագետների էլ ավելի լավ վերադասավորվել աշխատանքի շուկայում: Ահա դրանցից մի քանիսը. «ՀՀ Հարկային օրենսգիրք», Ֆինանսական կառավարումը որպես բիզնեսի խթանման գործիք», «Ֆինանսական վերլուծություն և մոդելավորում» «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ՖՀՄՍ)» թեմայով խորացված դասընթաց / IFRS, «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում», «Ինքնարժեքի հաշվառում», «ՀԾ-Հաշվապահ» և «1C Ձեռնարկություն» հաշվապահական համակարգչային ծրագրեր:

Սակայն, հարկ է նշել, որ վճարովի կրթական ծառայությունների մատուցման պարագայում վերապատրաստվող ուսանողը բախվում է ֆինանսական ռիսկերի, քանի որ, երկու տարի վճարելով ուսման վարձ, փորձում է արագ փոխհատուցել այն՝ աշխատանքի անցնելով:

Ներկայումս ձևավորվել է մի իրավիճակ, երբ բարձրագույն կրթությամբ շրջանավարտների մասնագիտական հմտություններն ու կարողություններն արագորեն «հնանում են» և չեն բավարարում գործատուների պահանջներին: Համալսարանական ավանդական կրթությունը, որն առնվազն չորս տարով է իրականացվում, ինդիյր ունի ժամանակին արձագանքելու գիտելիքահեն տնտեսության առաջընթացի պահանջների բավարարմանը:

Հետևաբար, համալսարանական կրթությունը հետըզհետե ընդգրկում է ակադեմիական ճկուն համակարգեր՝ հնարավորություն ստեղծելով անհատի մեջ զարգացնելու ինչպես կարիերայի ձևավորման ուղիների բազմազանություն, այնպես էլ մրցակցային աշխատաշուկայում արագ

կողմնորոշվելու և վերապատրաստվելու ունակություն: Այդ ամենն իրականացվում է շարունակական կրթության համակարգի կիրարկման պայմաններում:

Փորձը ցույց է տալիս, որ առավել արդյունավետ է գործում շարունակական կրթության այն մոդելը, համաձայն որի ուսանողը մասնակցում է կարճաժամկետ որակավորման դասընթացների (թրեյնինգների): Գործատուներն այս դեպքում նույնպես շահագրգիռ են առավել կարճատև, էժանագին ծրագրերի արդյունքում որակավորված աշխատուժ ունենալ:⁴

ԱՄՓՈՓՈՒՄ

Վերաորակավորման կրթության համակարգային ներդրումը ուղիներ է ստեղծում ինտեգրելու մասնագիտական կրթություն մատուցող տարբեր հաստատությունների (պետական, թե մասնավոր, ավանդական կամ այլընտրանքային) գործունեությունը և դրանով իսկ բացահայտելու ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման ռեզերվները: Դա է պատճառը, որ Բոլոնիայի գործընթացի գործիքակազմը վերանայելիս ներկայումս լուրջ տեղ է հատկացվում շարունակական կրթության համատեքստում ոչ միայն ակադեմիական կրեդիտների ճանաչման փոխվստահության, այլև վերաորակավորման գործընթացում դրանց կուտակմանը:

⁴ Խաչատրյան Ն.Ն., Շարունակական կրթության հիմնախնդիրները, //Էկոնոմիկա, 2010, 2010, #3 , 52 էջ

Hasmik Sahakyan

International Accountancy Training Centre,
Executive Director

RISKS OF DECISIONS MAKING IN THE PROCESS OF ACCOUNTANTS PROFESSIONAL RETRAINING

Keywords – vocational orientation, labor market, unemployment, human capital

Professional retraining includes numerous risks from the point of view of the state and also students. Spending significant temporary financial resources for retraining, students expect to start a good job, which often does not happen. In turn, the government also assesses the migration risks and the likely outflow of retraining human capital. The article discusses the risk factors in the decision-making process within the scope of re-trainings of accountants.

Асмик Саакян

‘Международный Центр по Обучению Бухгалтерии’,
Исполнительный Директор

РИСКИ УПРАВЛЕНЧЕСКИХ РЕШЕНИЙ В ПРОЦЕССЕ ПЕРЕКВАЛИФИКАЦИИ БУХГАЛТЕРОВ

Ключевые слова – профессиональная ориентация, рынок труда, безработица, человеческий капитал

Профессиональная переквалификация включает многочисленные риски с точки зрения государства и студентов.

Затрачивая существенные временные финансовые ресурсы на переквалификацию, студенты рассчитывают на успех приступить хорошей работы, что зачастую не происходит. В свою очередь, государство также оценивает миграционные риски и вероятные оттоки переквалифицированного человеческого капитала. В статье рассматриваются факторы рисков в рамках принятых решений в процессе переквалификации учащихся в программах бухгалтерский учет.

*Ներկայացվել է՝ 20.03.2018 թ.
Ընդունվել է սպազորության՝ 19.04.2018 թ.*

Լուսինե Մնացականյան
«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն»,
Ֆինանսների մագիստրոս

**ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

***Հիմնաբառեր** – տնտեսական օգուտների ներհոսք, ֆինանսական հաշվետվություններ, մտավոր սեփականություն, մարդկային կապիտալ*

Ոչ նյութական ակտիվները կարող են որպես ակտիվ ճանաչվել այն դեպքում, երբ ակնկալվում է, որ այդ ակտիվի օգտագործումից տնտեսական օգուտներ կներհոսեն դեպի կազմակերպություն: Այնուամենայնիվ, երբեմն դժվարություններ են առաջանում պարզելու համար ապագա տնտեսական օգուտներ ստանալու հավանականությունը: Հետագո-

տության ծախսումները, մարքեթինգը և այլն, հավանաբար, կբերեն դրական դրամական հոսքերի առաջացման, հետևաբար, կարող են դասակարգվել որպես ոչ նյութական ակտիվներ: Մակայն, այդ դրամական հոսքերի անորոշ լինելը հանգեցնում է նրան, որ այդ ոչ նյութական ակտիվները չճանաչվեն որպես ակտիվներ հաշվապահական հաշվառման ժամանակ:

Ինչպես գիտենք, ակտիվը ճանաչվում է այն դեպքում, երբ դրա արժեքը հնարավոր է արժանահավատորեն որոշել: Մարքեթինգային և հետազոտության ծախսումների արժեքը երբեմն հնարավոր չէ արժանահավատորեն որոշել: Բացի այդ, ոչ նյութական ակտիվների արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, քանի որ շատ դժվար է որոշել, թե որ կոնկրետ ակտիվների ստեղծմանն են նպաստել այդ ծախսումները: Օրինակ, մարքեթինգի վրա կատարվող ծախսերը կարող են նպաստել ոչ նյութական ակտիվների առաջացմանը: Այնուամենայնիվ, մարքեթինգի վրա կատարվող ծախսերը կարող են կատարվել բոլոր տեսակի մարքեթինգային գործողությունների համար, և, կոնկրետ որ ոչ նյութական ակտիվի ստեղծմանն են նպաստել, հաճախ անհնար է լինում որոշել: Հնարավոր է, որ այդ ծախսերը նպաստեն բրենդի ստեղծմանը, նոր սպառողների ձևավորմանը, կամ էլ սպառողների հետ հարաբերությունների ամրապնդմանը: Հետևաբար, եթե դժվար է լինում որոշել, թե ծախսերը կոնկրետ որ ակտիվի ստեղծմանն են նպաստել, ոչ նյութական ակտիվները չեն կարող ճանաչվել:

Ոչ նյութական ակտիվների հաշվառման ժամանակ ծագող խնդիրների պատճառով որոշ ոչ նյութական ակտիվներ չեն ճանաչվում որպես այդպիսին կազմակերպություն-

ների հաշվեկշիռներում: Ոչ նյութական ակտիվները կարող են չճանաչվել ապագա տնտեսական օգուտների անորոշ լինելու պատճառով: Արդյունքում, շատ կարևոր ոչ նյութական ակտիվներ չեն արտացոլվում կազմակերպությունների հաշվեկշիռներում, բազմաթիվ կարևոր արժեքներ թաքնված են ներդրողներից և ֆինանսական հաշվետվությունների այլ օգտագործողներից: Քանի որ ոչ նյութական ակտիվները արժեքի ձևավորման կարևոր գործոն են դարձել այսօրվա գիտատար տնտեսությունում, ուստի դա լուրջ խնդիր է: Նրանց համար, ում տեղեկատվություն է անհրաժեշտ կազմակերպության մասին, լուրջ դժվարություններ են առաջանում, քանի որ կազմակերպության առավել կարևոր ակտիվներ չեն արտացոլվում ֆինանսական հաշվետվություններում:

Որպեսզի հասկանալի լինի ոչ նյութական ակտիվների կարևորությունը, ներկայացնենք կազմակերպության փոխհարաբերությունը Էդվինսոնի և Մելրոուսի ծառի միջոցով⁵: Պատկերացրեք ծառի տեսանելի հատվածները՝ ծառի բունը, ճյուղերը, տերևները, որոնք ներկայացնում են կազմակերպությունը, ինչպես ներկայացվում է ֆինանսական հաշվետվություններում և ինչպես ընկալվում է շուկայում: Ծառի պտուղները կազմակերպության շահույթն է և արտադրանքը, որը աճեցվել է ներդրողների և սպառողների միջոցով: Խելացի ներդրողները նայում են ծառին, որպեսզի գտնեն քաղելու համար հասած մրգերը: Այնուամենայնիվ, ենթադրելը, որ մեր առջև ամբողջական ծառ է, միայն այն բանի համար, որ տեսանլի հատվածներ ունի, մեծ սխալ է: Առնվազն ծառի կե-

⁵ Edvinsson, L. and Malone, M.S. Intellectual Capital: Realizing your Company's True Value by Finding Its Hidden Brainpower, Harper Business, New York, 1997. – P. 18.

աը մակերեսի ներքևում է, այն է՝ ծառի արմատները: Մրգերի համը և տերևների գույնը ցույց են տալիս, թե որքան ամբողջական է ծառը այս պահին, մինչդեռ արմատները որոշում են, թե ինչքան ամբողջական կլինի ծառը ապագայում: Արմատների վնասվելու հետևանքով հնարավոր է ծառը ոչնչանա՝ անկախ այն հանգամանքից, որ ներկա պահին գերազանց վիճակում է գտնվում:

Այս փոխհարաբերությունը ցույց է տալիս, թե որքան կարևոր են կազմակերպության թաքնված ոչ նյութական ակտիվները, ինչպես նաև դրանց դերը կազմակերպության զարգացման ապագայում: Թաքնված ոչ նյութական արժեքները իրենցից ներկայացնում են ծառի արմատները, որպեսզի ծառը կարողանա ծաղկել, պտուղներ տալ, այն պետք է ունենա ամուր արմատներ: Այնպես, ինչպես պտուղների որակը կախված է արմատներից, այնպես էլ կազմակերպության ֆինանսական ներուժը մեծ չափով կաժված է թաքնված ոչ նյութական արժեքներից: Ուստի, թաքնված ոչ նյութական արժեքները, ինչպիսիք են՝ «նոու-հաուները», կազմակերպական կառուցվածքը, սպառողների հետ հարաբերությունները և այլն, կարևոր նշանակություն ունեն կազմակերպության համար:

Առանց կազմակերպության ներքին համակարգը ներկայացնող համապատասխան մոդելի, դիտորդի համար անհնար է ստանալ պատկերացում կազմակերպության գործունեության արդյունքների մասին: Ներդրողի համար կազմակերպությունը իրենից ներկայացնում է միավոր, որի նպատակը դրամական միջոցների գեներացիան է: Այսինքն, ներդրողը ընտրում է կապիտալի շուկայում, թե որ կազմակերպությունում կարող է ներդրումներ կատարել: Ներդ-

րողի համար հիմնական դժվարությունը կայանում է գնահատելու մեջ, թե ինչ առավելություններ և թերություններ ունի կազմակերպությունը իր մրցակիցների համեմատ: Ներդրողը ցանկանում է բացահայտել ոչ միայն կազմակերպության ընթացիկ գործունեության արդյունքները, այլ նաև կազմակերպության զարգացումը որոշակի ժամանակահատվածի ընթացքում:

Ոչ նյութական ակտիվների այլնորանքային հաշվառման նպատակն է օգնել ներդրողներին որոշումներ կայացնել՝ նվազեցնելով որոշումների սահմետրիան, որի առաջացման պատճառը ոչ նյութական ակտիվների դերի աճն է: Մտավոր սեփականության հաշվառման կատարելագործումը կարող է ծածկել ճեղքվածքը կազմակերպության շուկայական և հաշվեկշռային արժեքների միջև, բարձրացնել կազմակերպության հեղինակությունը: Բացի դրանից, ոչ նյութական ակտիվների այլնորանքային հաշվառումը կարևոր է նաև կազմակերպության մենեջմենթի համար: Մտավոր սեփականության չափումը կարող է օգնել կազմակերպությանը ձևավորել իր բիզնես ռազմավարությունը: Մտավոր սեփականությունը բացահայտելու և զարգացնելու շնորհիվ կազմակերպությունը կարող է ձեռք բերել համեմատական առավելություններ մրցակիցների համեմատ: Մտավոր սեփականության չափումը կարող է օգնել բիզնես միավորումների և ձեռքբերումների ժամանակ գնի գնահատման գործում:⁶

⁶ Holmen Jay, Intellectual Capital Reporting, Management Accounting Quarterly Vol. 6, No 4, 2005.

Ոչ նյութական ակտիվների այլընտրանքային հաշվառման մեխանիզմների մշակման ժամանակ հետևյալ հիմնական երկու խնդիրները պետք է լուծվեն՝

- Ոչ նյութական ակտիվները առանձին ոչ արժեք են ստեղծում, ոչ էլ աճ ապահովում, նրանք պետք է օգտագործվեն այլ արտադրական գործոնների հետ համատեղ: Կորպորատիվ հաշվառման համակարգը պետք է առավել ամբողջական պատկեր ներկայացնի, որը հնարավորություն կտա ներդրողներին և մենեջերներին գնահատել կազմակերպության ամբողջ համակարգի կատարողականը, ներառյալ տարբեր գործոնները, ակտիվները, պրոցեսները:
- Ոչ նյութական ակտիվների արժեքը կապված է ապագայի հետ: Նրանք արտացոլում են հնարավորություններ ապագա աճի համար: Ներկա հաշվառման համակարգը հիմնվում է հետահայաց տեղեկատվության վրա: Այս մտտեցումը վերանայման կարիք ունի, պետք է ուշադրություն դարձնել նաև ապագա հնարավորությունների և տեղեկատվությունների վրա:

Ֆինանսական հաշվառման նպատակը ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին տեղեկություններ տրամադրելն է կազմակերպության գործունեության մասին: Քանի որ ավանդական հաշվառման համակարգը թերաճում է կազմակերպության ոչ նյութական ակտիվների և նրանց արժեքի մասին տեղեկատվություն տրամադրելու հարցում, ուստի կազմակերպությունները ներկայացնում են, այսպես կոչված, լրացուցիչ հաշվետվություններ՝ ի համալրումն ֆինանսական հաշվետվությունների: Այս հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը կարող է անդրադառնալ բիզնես ռազմավարությանն ու բիզնես մոդել-

ներին: ԱՄՆ-ի Արժեթղթերի և Փոխանակման հանձնաժողովի աշխատանքային խումբը (SEC) և Ֆինանսական Հաշվառման Ստանդարտների հանձնաժողովը (FASB) առաջարկեցին այս մոտեցումը: Ավելին, մտավոր սեփականության հաշվետվության կիրառումն առաջարկվեց Դանիական կառավարության կողմից: Այս առաջարկները ենթադրում են այն կոնցեպցիան, որ տեղեկատվությունը, որն օգտագործվում է կազմակերպության մենեջմենթի կողմից, կարող է հիմք հանդիսանալ արտաքին հաշվետվությունների կազմման համար, որոնք պետք է առավել պակաս մանրամասն լինեն՝ մրցակցային նպատակներից ելնելով:

Տարբեր կազմակերպությունների կողմից կիրառվել են ոչ նյութական ակտիվների ներքին և արտաքին հաշվետվողականության տարբեր մոտեցումներ: 1994 թվականին, առաջին անգամ, շվեդական Skandia ապահովագրական ընկերությունը հրատարակեց լրացում ֆինանսական հաշվետվություններին: Կազմակերպությունը իր ոչ նյութական ակտիվների, մտավոր սեփականության մասին առավել լայնածավալ ինֆորմացիա հաղորդելու նպատակով ներկայացրեց ‘Skancia Navigator’ մոդելը: Ոչ նյութական ակտիվների ներկայացման մեկ այլ եղանակը ‘Balance Scorecard’-ն է, որը զարգացվել է Kaplan-ի և Norton-ի կողմից: Վերջինս, թեև օգտագործվում է կազմակերպության մտավոր սեփականության ներքին կառավարման համար, այնուամենայնիվ, հիմք կարող է հանդիսանալ արտաքին հաշվետվությունների կազմման համար: Balance Scorecard-ը կենտրոնանում է 4 հիմնական ուղությունների վրա՝

1. Ֆինանսական: Ինչպես է կազմակերպությունը ներկայանում բաժնետերերի առջև:

2. Սպառողներ: Ինչպես է կազմակերպությունը ներկայանում սպառողների առջև:
3. Ներքին բիզնես գործընթացներ: Ինչ բիզնես գործընթացների վրա պետք է կենտրոնացնել ուշադրությունը:
4. Ուսուցում և աճ: Ինչպես է կազմակերպությունը օգտագործում իր փոփոխվելու և զարգանալու հնարավորությունները:

ԱՍՓՈՓՈՒՄ

Դանիական գիտությունների, տեխնոլոգիայի և ինովացիայի նախարարությունը մի շարք զեկույցներ է ներկայացրել, որտեղ ներկայացրել է մտավոր սեփականության հաշվետվությունը⁷: Դանիական ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը պահանջում է լրացուցիչ բացահայտել ոչ նյութական ակտիվները, եթե հավանական է, որ դրանք կհանգեցնեն տնտեսական օգուտների: Այս բացահայտումը պահանջվում է բոլոր կազմակերպություններից, բացառությամբ փոքր կազմակերպությունների: Մտավոր սեփականության հաշվետվությունը բաղկացած է չորս տարրերից՝ տեղեկատվական ներածություն, կառավարչական խնդիրներ, նախաձեռնություններ, ցուցանիշների խումբ:

Lusine Mnatsakanyan

International Accountancy Training Centre,
Master of Finance

PROBLEMS OF INTANGIBLE ASSETS ACCOUNTING WITHIN DECISION MAKING CONTEXT

⁷ Holmen Jay, Intellectual Capital Reporting, Management Accounting Quarterly Vol. 6, No 4, 2005.

Keywords – inflow of economic benefits, financial reporting, intellectual property, human capital

Accounting for intangible assets becomes important when assessing the price of existing business. However, practice shows that it is not always possible to fully evaluate the businesses value and take into account the intangible assets, particularly intellectual business capital. The article suggests ways to improve the accounting for intangible assets with the purpose for efficient decision making.

Лусине Мнацаканян

‘Международный Центр по Обучению Бухгалтерии’
магистр финансов

ПРОБЛЕМЫ УЧЕТА НЕМАТЕРИАЛЬНЫХ АКТИВОВ В КОНТЕКСТЕ ПРИНЯТИЙ РЕШЕНИЙ

Ключевые слова – приток экономических выгод, финансовая отчетность, интеллектуальная собственность, человеческий капитал

Учет нематериальных активов становится важным при оценке цены действующего бизнеса. Однако практика показывает, что не всегда предприятиям удается полноценно оценивать и учитывать нематериальные активы, особенно интеллектуальный капитал бизнеса. В статье предлагаются пути совершенствования учета нематериальных активов с целью улучшения информационной обеспеченности управленческих решений.

Ներկայացվել է՝ 22.03.2018 թ.

Հնդունվել է ստաթրոնթյան՝ 19.04.2018 թ.

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՆՈՐՄԵՐ ԵՎ ՄՏԱՎՈՐ
ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**


Հիմնաբառեր – համահեղինակություն, մտավոր սեփականության պահպանում, գրագողություն, գիտական նորույթ

Գիտության էթիկան ընդգրկում է մարդկության հիմնախնդիրների նկատմամբ գիտնականի և գիտական ընկերակցության պատասխանատվության նորմերի շրջանակը: Այդ նորմերը կարգավորում են գիտություն-հասարակություն և գիտնականների միջանձնային փոխհարաբերությունների դաշտը՝ առավելապես հիմնված բարոյականության և պատշաճ վարքագծի դրսևորման սկզբունքների վրա (տե՛ս գծապատկեր 1):

Գիտական հանրության էթիկայի կարևորագույն սկզբունքը *հետազոտողի ձգտումն է դեպի նորույթի ձևավորումը*: Մյունխենի համալսարանում 1918թ. Մաքս Վեբերի «Գիտությունը որպես կոչում և մասնագիտություն» հանրահայտ դասախոսությունում⁸ նշվում է, որ «Արվեստի կատարյալ գործը երբեք չի հնանում և մնում է անզերագանցելի: Եվ, հակառակը, մեզանից յուրաքանչյուրը քաջ գիտակցում է, որ գիտության մեջ կատարած ներդրումը, միևնույն է, հնանալու է 10, 20, 50 տարի հետո: Գիտության մեջ ցանկացած նորա-

⁸ Max Weber, “Science as a Vocation”;
<http://www.wisdom.weizmann.ac.il/~oded/X/WeberScienceVocation.pdf>

մուծական գաղափար իր հետ բերում է նոր հարցադրումներ, որոնց լուծումները միտված են արդեն իսկ ձևավորված նորությունների գերազանցմանը: Յուրաքանչյուր գիտնական քաջ գիտակցում է, որ, ի վերջո, որոշ ժամանակ անց, այլոց մշակումները գերազանցելու են իր գիտական նորությը»:



Գծապատկեր 1. Գիտության էթիկայի ապահովման առանցքային նորմերը

Հետևաբար, յուրաքանչյուր գիտնական պետք է ինքնաքննադատական վերլուծություններ կատարի և ձգտի իր

կողմից *նորույթի կամ նորամուծական առաջարկների անընդհատ և հետևողական կատարելագործմանը*: Էթիկայի այս նորմը առավել արդիական է համարվում մեր իրականությունում, քանի որ ատենախոսության պաշտպանությունից հետո շատ-շատերը գիտական աստիճանի դիպլոմը պարզապես դնելով գրպանում և լուծելով իրենց կարիերայի հարցերը, պարզապես «մոռանում» են գիտության մասին և դառնում անտարբեր իրենց հետագա հետազոտություններում:

Գիտության էթիկայի առանցքային նորմերից է *հասարակության և գիտության ներդաշնակ զարգացումը*: Հասարակության շարժիչ ուժ հանդիսացող ինովացիոն մշակումները հաճախ ուղեկցվում են շրջակա միջավայրի աղտոտմամբ, բնապահպանական հաշվեկշռի խախտմամբ, մասսայական ոչնչացման զինատեսակների արտադրությամբ, առողջապահական համակարգի թուլացմամբ, որոնց կանխարգելմանը պետք է ձգտեն գիտնականները և խստագույնս պահպանեն այդ բարոյական նորմը:

Գրագողության կանխարգելումը և այլոց աշխատանքներից *մեջբերումների կոռեկտությունը* նույնպես գիտության էթիկայի կարևորագույն նորմերից են: Ցանկացած գիտական աշխատանք չի կարող համարվել լիարժեք, եթե այն հիմնված չլինի մինչ այդ իրականացված հետազոտական մշակումների վրա: Հետևաբար, գիտնականները նրբանկատորեն են մոտենում իրենց գործընկերների մշակումներին, փորձելով հնարավորինս մասնագիտական գրականությունից մեջբերումներով ընդգծել և արժևորել վերջիններիս կողմից մշակված նորույթի դրույթները, ու, հետո միայն, ձևակերպել այդ

դրույթների զարգացման սեփական մոտեցումները: Չափազանց կարևոր է, որ այս գործընթացում թույլ չտրվի պլագիատ և այլոց գիտական մշակումներն ու նորամուծությունները չներկայացվի որպես սեփական ներդրում գիտության ոլորտում:

Համահեղինակության էթիկան նույնպես որոշիչ դերակատարում ունի գիտնականների բարոյական գործելաձևի վարքագծում: Երբ գիտական խոշոր աշխատություններում նշվում է յուրաքանչյուր հեղինակի կողմից շարադրված գլուխը կամ պարագրաֆը, այս դեպքում հստակեցվում են համահեղինակության սահմանագծերը և յուրաքանչյուրի գիտական պատասխանատվությունը: Սակայն, համահեղինակության էթիկայի նորմերը դժվար իրագործելի են դառնում, երբ համահեղինակները հողված են հրատարակում և նրանցից յուրաքանչյուրը տարբեր բաժնեմասնակցություն է ունենում մտքերի շարադրման, նորույթի ձևակերպման, ինովացիոն առաջարկների վերարտադրման գործընթացում:

Հատկապես էթիկայի նորմերի կոպիտ խախտում է հանդիսանում «կեղծ համահեղինակությունը», երբ դոկտորանտները հրատարակվում են իրենց գիտական ղեկավարների հետ, կամ երիտասարդ հետազոտողները՝ գիտական ստորաբաժանումների վարչակազմի հետ, այսինքն՝ այնպիսի մարդկանց, որոնք ընդամենը ուղղորդել և նպաստել են հրատարակմանը, և ոչ թե լուրջ ներդրում ունեցել հողվածի պատրաստման գործընթացում: Ստեղծված իրավիճակում ցանկալի է փորձառու գիտնականների ազգանունը նշել ոչ թե համահեղինակների կազմում, այլ հրատարակվող նյութում

հեղինակների կողմից ուղղակի երախտագիտության խոսքեր ուղղել նրանց:

Երկու կամ ավելի գիտնականների համատեղ ստեղծագործական աշխատանքով ստեղծված ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը համահեղինակներին է պատկանում համատեղ, անկախ նրանից՝ այդ ստեղծագործությունը մեկ միասնական ամբողջություն է, թե կազմված է մասերից, որոնցից յուրաքանչյուրն ունի նաև ինքնուրույն նշանակություն⁹:

Համահեղինակների փոխհարաբերությունները սահմանվում են նրանց միջև կնքված պայմանագրով: Պայմանագրի բացակայության դեպքում համահեղինակները ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքն իրականացնում են համատեղ, իսկ հնարավոր եկամուտը նրանց միջև բաշխվում է հավասար:

Եթե համահեղինակների ստեղծագործությունը կազմում է մեկ անբաժանելի ամբողջություն, ապա համահեղինակներից որևէ մեկն իրավունք չունի առանց բավարար հիմքերի արգելել մյուս համահեղինակներին օգտագործելու ստեղծագործությունը:

Ակադեմիական չկամության հաղթահարումը և ուսուցչի հետազոտական առատաձեռնությունը նույնպես գիտության էթիկայի առանցքային նորմեր են: Մեր իրականությունում քիչ չեն դեպքերը, երբ կայացած «գիտնականները» արհեստական արգելքներ են ստեղծում երիտասարդ և խոստումնալից հետազոտողների կարիերայի աճի ճանապարհ

⁹ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-142-Ն, 15 հունիսի 2006թ.:

հին: Կայացած գիտնականի համար բարոյական նորմ է հանդիսանում ուսուցչի հետազոտական առատաձեռնության ցուցաբերումը խոստումնալից և երիտասարդ հետազոտողների նկատմամբ, կիսվելով վերջիններիս հետ նորամուծական գաղափարներով, ուղղորդելով հեռանկարային ինովացիոն գաղափարների իրագործմանը, աջակցելով նորույթների ներդրմանը և այլն:

Գիտության էթիկայի նորմերից է *մտավոր սեփականության նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ցուցաբերումը*: Մտավոր սեփականության օբյեկտներ են մտավոր գործունեության արդյունքները և ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները: Մտավոր գործունեության արդյունքների կամ անհատականացման միջոցների նկատմամբ գույքային իրավունքների տիրապետողը մտավոր սեփականության այդ օբյեկտն իր հայեցողությամբ ցանկացած ձևով և եղանակով օրինաչափ օգտագործելու բացառիկ իրավունք ունի: Հետևաբար, ուրիշ անձանց կողմից մտավոր սեփականության այն օբյեկտների օգտագործումը, որոնց նկատմամբ բացառիկ իրավունքը պատկանում է դրանց իրավատիրոջը, թույլատրվում է միայն վերջինիս համաձայնությամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մտավոր սեփականությունը ամրագրվում է հեղինակային իրավունքով, որը տարածվում է ստեղծագործական գործունեության արդյունք համարվող գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների վրա՝ անկախ

ստեղծագործության նշանակությունից ու արժանիքներից, ինչպես նաև այն արտահայտելու եղանակից: Ուստի, մտավոր սեփականության պահպանությունը ոչ միայն պետք է կարգավորվի օրենքով, այլև գիտության էթիկայի նորմերով:

Atom Mkhitaryan

Vice-chairman of the SCC of RA, Ph.D.

STANDARDS OF THE SCIENTIFIC ETHICS AND INTELLECTUAL PROPERTY

***Keywords** – co-authorship, protection of intellectual property, plagiarism, scientific novelty*

The rapid development of science creates additional problems for the protection of intellectual property of scientific researchers. From this perspective, there is a need for a clear definition of the key rules of scientific ethics, aimed at the implementation of intellectual property rights. The article analyzes the range of scientific ethics and core standards of conduct for scientists in their research activities.

Атом Мхитарян

Заместитель председателя ВАК РА, кан. физ.-мат. наук

НОРМЫ НАУЧНОЙ ЭТИКИ И ИНТЕЛЛЕКТУАЛЬНАЯ СОБСТВЕННОСТЬ

***Ключевые слова** – соавторства, защита интеллектуальной собственности, плагиат, научная новизна*

Стремительное развитие науки создает дополнительные проблемы по защите интеллектуальной собственности ученых исследователей. С этой точки зрения возникает необходимость для четкого определения ключевых норм научной этики, нацеленное на реализации прав по интеллектуальной собственности. В статье анализируется круг научной этики и ключевые нормы поведения ученых в их исследовательской деятельности.

Ներկայացվել է՝ 23.03.2018 թ.
Ընդունվել է սպառնություն՝ 18.04.2018 թ.

Hamed Mirzaei

European Regional Educational Academy, Master of Finance

THE NATURE OF TAX ACCOUNTING

Keywords – income tax, profit tax, financial and managerial accounting, tax deductions

In this world nothing can be said to be certain, except death
and taxes.

Benjamin Franklin

A tax (from the Latin *taxo*) is a financial charge or other levy imposed upon a taxpayer (an individual or legal entity) by a state or the functional equivalent of a state to fund various public expenditures. A failure to pay, or evasion of or resistance to taxation, is usually punishable by law. Taxes consist of direct or

indirect taxes and may be paid in money or as its labour equivalent. Some countries impose almost no taxation at all, or a very low tax rate for a certain area of taxation.

The United States of America is a federal republic with separate state and local governments. Taxes are imposed in the US at each of these levels. These include taxes on income, payroll, property, sales, capital gains, dividends, imports, estates and gifts, as well as various fees. However, taxes fall much more heavily on labor income than on capital income. Divergent taxes and subsidies for different forms of income and spending can also constitute a form of indirect taxation of some activities over others. For example, individual spending on higher education can be said to be "taxed" at a high rate, compared to other forms of personal expenditure which are formally recognized as investments.

Taxes are imposed on net income of individuals and corporations by the federal, most state, and some local governments. Citizens and residents are taxed on worldwide income and allowed a credit for foreign taxes. Income subject to tax is determined under tax accounting rules, not financial accounting principles, and includes almost all income from whatever source. Most business expenses reduce taxable income, though limits apply to a few expenses. Individuals are permitted to reduce taxable income by personal allowances and certain non business expenses, including home mortgage interest, state and local taxes, charitable contributions, and medical and certain other expenses incurred above certain percentages of income. State rules for determining taxable income often differ from federal rules. Federal tax rates vary from 10% to 39.6% of taxable income. State and local tax rates vary widely by jurisdiction, from 0% to 13.30% of income, and many are graduated. State taxes are generally treated as a deductible expense for federal tax computation. In 2015, the top marginal income tax rate for a high-income California resident is 52.9%.

The United States is one of two countries in the world that taxes its nonresident citizens on worldwide income, in the same manner and rates as residents; the other is Eritrea. The Supreme Court upheld the constitutionality of the payment of such tax in the case of *Cook v. Tait*, 265 U.S. 47 (1924).

Payroll taxes are imposed by the federal and all state governments. These include Social Security and Medicare taxes imposed on both employers and employees, at a combined rate of 15.3% (13.3% for 2011 and 2012). Social Security tax applies only to the first \$106,800 of wages in 2009 through 2011. However, benefits are only accrued on the first \$106,800 of wages. Employers must withhold income taxes on wages. An unemployment tax and certain other levies apply to employers. Payroll taxes have dramatically increased as a share of federal revenue since the 1950s, while corporate income taxes have fallen as a share of revenue. (Corporate profits have not fallen as a share of GDP).

Property taxes are imposed by most local governments and many special purpose authorities based on the fair market value of property. School and other authorities are often separately governed, and impose separate taxes. Property tax is generally imposed only on realty, though some jurisdictions tax some forms of business property. Property tax rules and rates vary widely with annual median rates ranging from 0.2% to 1.9% of a property's value depending on the state.

Sales taxes are imposed by most states and some localities on the price at retail sale of many goods and some services. Sales tax rates vary widely among jurisdictions, from 0% to 16%, and may vary within a jurisdiction based on the particular goods or services taxed. Sales tax is collected by the seller at the time of sale, or remitted as use tax by buyers of taxable items who did not pay sales tax.

The United States imposes tariffs or customs duties on the import of many types of goods from many jurisdictions. These tariffs or duties must be paid before the goods can be legally imported. Rates of duty vary from 0% to more than 20%, based on the particular goods and country of origin. Estate and gift taxes are imposed by the federal and some state governments on the transfer of property inheritance, by will, or by life time donation. Similar to federal income taxes, federal estate and gift taxes are imposed on worldwide property of citizens and residents and allow a credit for foreign taxes.

Under the Law on Profit Tax both residents and non-residents pay profit tax in the RA. Legal entities are deemed to be residents if they have received state registration in Armenia. Non-residents are legal entities and enterprises without legal entity status, which have been registered in another country, including international organizations. Residents are taxed on profit derived both in Armenia and abroad, while non-residents are taxed only on income within the RA. Non-residents operating through subdivisions in Armenia are taxed on profits earned from the activities in Armenia. Income received by non-residents from other sources in Armenia, e.g. dividends (for enterprises only), interest income, royalties, rental income etc. is subject to withholding at the source. Withholding may be reduced or eliminated by applying double taxation treaties.

In Armenia the annual profit tax rate is 20%. The law may establish, for certain payers, groups of payers and types of activity, a fixed payment, which substitutes for profit tax. For non-residents, for income from insurance compensations, reinsurance payments and incomes from freight the rate is 5%. For incomes received as dividends, interest, royalty, income from the lease of property, increase in the value of property and other passive incomes, as well as other income received from Armenian sources the rate is

10%.

The taxable profit is the positive difference between the gross income and the deductions allowed under the Profit Tax Law. Income and expenses shall be accounted for using the accrual method.

The following shall be considered as gross income in Armenia:

- revenue derived from the sale of products and services;
- income derived from the sale of fixed and other assets;
- interest; leasing income; royalties; dividends;
- insurance compensation;
- income received from debt or trade financing;
- income received from futures, options and other similar transactions;
- income received from compensation for damage caused;
- income received in the form of penalties, fines and other proprietary sanctions;
- income received from transactions recognized as invalid;
- amounts of accounts payable written off, etc.

The following shall be considered as expenses, particularly: material cost; labor cost; obligatory social security payments; depreciation; insurance payments; non-refundable taxes, duties and other obligatory payments; interest on loans or other borrowings; payments for guarantees, guarantee letters, L/Cs and other services of banking, insurance, and credit organizations; advertising expenses; representation and business trip expenses; auditing, legal, and other advisory information and administrative services expenses; maintenance expenses on fixed assets; research and development expenses, etc.

Contributions made to religious, public and other non-profit

organizations (but not more 0,25% of gross income) are allowable deductions. The Profit Tax law specifies that the following expenses are not deductible from gross revenue for the amount exceeding the limits specified by the government:

- payment for violation of pollution laws;
- expenses for advertising outside the RA;
- training of staff outside the RA;
- expenses for special nutrition and uniforms for the employees;
- expenses for foreign trips, and per diem for local trips;
- representative expenses;
- expenses on the maintenance of public health institutions, rehabilitation camps, culture, education and sport institutions, etc;
- gratis assets, remitted liabilities;
- expenses on services rendered by the taxpayer, which are not related to the production of goods, etc.

For the public sector in Armenia, low collection rates and high tax evasion have prompted the introduction of some strong control measures in efforts to allow the tax authorities better manage the system. The business community accepts that strong measures may be justified to address the government's concerns. However, it believes that greater consultation and transparency in the policy development process could result in more effective and better targeted laws that achieve the government's aims while not imposing onerous compliance costs on taxpayers.

Tax accounting is the accounting process that focuses on tax issues - including filing tax returns and planning for future tax responsibilities - as opposed to the preparation of financial statements. Tax accounting targeted to the preparation, analysis and presentation of tax returns and tax payments. *The method of*

accounting that focuses on tax issues; this includes all activities related to filing tax returns and planning for future tax obligations.

Currently in Armenia from point of view of enlargement of information flows of business activity, the accounting system is divided by following directions:

1. Financial accounting
2. Managerial accounting
3. Tax accounting

Although, this three direction is performing in parallel in accounting system of Armenia and taking information on double entry bases by strongly interrelations, however, simultaneously there are functional specifics, considering the motivations of accounting information different users.

Managerial accounting purposes are providing information for inter companies decision making. In this scope is making cost flow analyzing, profitability performance, capital using outcomes analyzing. Information, providing from financial accounting, is mostly using from external decision makers, such as investors, suppliers', banks, when business partners is interested about financial stability level company or commercial activity indicators. Tax accounting, mainly providing information for using governmental tax services, giving information about taxation bases, calculation of deferent taxes, companies tax obligations and tax returns, and performing also statements according tax service forms.

Tax accounting is a specialized field of accounting where accountants focus on the preparation of tax returns as well as tax planning for future taxable years. Principles of tax accounting differ from the International Financial Reporting Standards (IFRS) principles.

Tax accountants must understand the regulations contained within the Internal Revenue Code, which lists the rules for tax returns that all individuals and companies must follow. Tax accountants also must stay on top of changes in IRS regulations, which occur on a yearly basis.

Resume

Although the income tax system in US is complicated, comparing with Armenia, nevertheless its more flexible and having positive points, taking into consideration for future Armenian income taxation development. First of all, the US experience for tax deduction process is very bendy and giving more opportunities for taxpayers in process of their successfully tax planning.

Secondly, the tax credits offsetting system in US from our viewpoint, also effective tool for additional activating motivation functions of taxes. Consequently, the exploration of US tax credits framework will be constructive for development income tax system in Armenia.

Համեղ Միրզայի

Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիա,
ֆինանսների մագիստրոս

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր – եկամտային հարկ, շահութահարկ, ֆինանսական, կառավարչական հաշվառում, հարկային նվազեցումներ

Չնայած որ հարկային հաշվառումը առանձնացված տարբերակում չի գտնում տեսության մեջ, այնուամենայնիվ, գործնականում այն ունի իր յուրահատուկ գործառույթները և առանձնանում է ֆինանսական և կառավարչական հաշվառման համակարգերից: Հոդվածում ներկայացվում են հարկային հաշվառման առանձնահատուկ հատկանիշները և տրրվում է հարկային հաշվառման սահմանումը:

*Ներկայացվել է՝ 20.03.2018 թ.
Ընդունվել է տպագրության՝ 18.04.2018 թ.*

Թամարա Հովակիմյան
ԵՊՀ, տ.գ.թ., դոցենտ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

***Հիմնաբառեր** – հանրային հատված, դրամարկղային հատկացումների համակարգ, հաշվեգրման համակարգ, համախմբված հաշվետվություն, գանձապետական համակարգ*

Միջազգային փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս հանրային հատվածի հաշվառման և հաշվետվողականության հիմնահարցերը արդիական են գրեթե բոլոր երկրներում, անկախ դրանց զարգացվածության աստիճանից: Չնայած, 2008թ. կեսերից շրջանառության մեջ դրված (International Public Sector Accounting Standards IPSAS) ՀՀՀՄՍ-ներին, դեռևս հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության միասնական մոտեցում գոյություն չունի և տարբեր երկրներ կիրառում են հաշ-

վառման տարբեր համակարգեր:¹⁰ Որոշ երկրներ կիրառում են հաշվեգրման մեթոդը, համաձայն որի գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են այն պահին, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածի հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են: Որոշներն էլ, դեռևս քննարկում են անցնել հաշվեգրման մեթոդին, թե պահպանել հաշվեգրման մեթոդի վրա հիմնված դրամական հատկացումների համակարգը: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ երկրները, գրեթե բոլորն էլ լրիվ կամ մասնակի արդեն անցում են կատարել հաշվեգրման մեթոդի կիրառմանը, նույնիսկ ՏՀԶԿ անդամ չհանդիսացող մի շարք երկրներ նույնպես նախաձեռնել են հաշվեգրման մեթոդի ներդրումը: Հայաստանը ևս, սկսած 2014 թվականից, անցում է կատարել հաշվեգրման համակարգին:¹¹

Նոր Զելանդիան աշխարհում առաջին երկիրն էր, որտեղ հանրային հատվածում 1980-ական թվականների վերջին ներդրվեցին հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հաշվապահական հաշվառման և հատկացումների համակարգերը:¹² Շվեդիայում, 1993 թվականից սկսած, պետական հատվածում կիրառվում է հաշվեգրման մեթոդը: Այստեղ հաշվապահական բոլոր տվյալների հաշվառումը կատարվում է կազմակերպությունների մակարդակով, ընդ որում, նախարարու-

¹⁰http://www.ifac.org/system/files/downloads/2007_IPSAS_Russian_Translation.pdf

¹¹ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը (ՀՀՀՀՄ) Հավելված ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանի «ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ»:

¹² [Iraber.asj-oa.am/9/1/2003-2\(63\).pdf](http://iraber.asj-oa.am/9/1/2003-2(63).pdf)

թյունները նույնպես համարվում են առանձին կազմակերպություններ: Իսպանիայում հանրային հատվածի համար հաշվային նոր պլանն ընդունվել է 1994 թ. և կիրառվում է տարբեր մակարդակների (կենտրոնական, տարածաշրջանային և տեղական) մարմիններում: Միայն տարբերություններ կան հաշվային պլանի և ՀՀՄՍ-երի միջև, որոնք արտացոլում են հիմնականում հանրային հատվածին բնորոշ որոշակի գործառնությունները և իրադարձությունները: Ընդ որում, գոյություն ունի նաև հստակ տարանջատում դրամարկղային մեթոդով գործող հատկացումների համակարգի և հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հաշվապահական հաշվառման ու հաշվետվությունների համակարգերի միջև:

Ֆրանսիայում որոշվել է ներդնել հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների համակարգերը՝ պահպանելով դրամարկղային մեթոդով գործող հատկացումների համակարգը:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար Ավստրալիան, Ֆինլանդիան, Հունաստանը և ԱՄՆ-ն ամբողջապես կիրառում են հաշվեգրման մեթոդը: Կանադայում, Իսլանդիայում և Իտալիայում պետական համախմբված ֆինանսական հաշվետվությունները նույնպես կազմվում են հաշվեգրման մեթոդի հիման վրա, բացառությամբ, միայն, ակտիվների կապիտալիզացիայի կամ մաշվածքի: Նիդերլանդներում, Պորտուգալիայում, Շվեյցարիայում և Մեծ Բրիտանիայում հաշվեգրման մեթոդը կիրառվում է միայն գերատեսչությունների և հիմնարկների մակարդակով:

Ավստրալիայում հատկացումների համակարգն ամբողջովին հիմնվում է հաշվեգրման մեթոդի վրա: Կանադայի,

Ֆինլանդիայի, Իսլանդիայի և Իտալիայի հատկացումների համակարգում, բացառությամբ ակտիվների կապիտալիզացման կամ մաշվածքի, նույնպես կիրառվում է հաշվեգրման մեթոդը: Հարկ է նշել, որ Կանադան, Կորեան, Նիդերլանդները և Շվեյցարիան նախատեսում են ներդնել ամբողջապես հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հատկացումների համակարգ: Հոնկոնգի կառավարությունը պետական դրամական միջոցների կառավարումը խստացնելու, ազգային հաշիվների թափանցիկությունը բարելավելու և ծախսերի հսկողությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, սահմանել է հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հաշիվներ, որոնք լրացնում են դրամարկղային մեթոդի հիման վրա վարվող առկա հաշիվները: Էստոնիան հանրային հատվածում հաշվեգրման մեթոդի ներդրման գործընթացը սկսել է 1997 թ., իսկ պետական մարմինները, նշված մեթոդի հիման վրա, հաշվետվություններ ներկայացնում են դեռ 2001 թվականից:

Ներկայիս ինտեգրացիոն գործընթացները ենթադրում են նաև անցումային տնտեսություն ունեցող երկրներին հաշվեգրման մեթոդին անցնելու անհրաժեշտությունը: Զարգացած երկրների փորձը վկայում է, որ պետական կառավարման հատվածում հաշվեգրման մեթոդի ներդրումը պետական ֆինանսների կառավարման առումով ունի ակնհայտ առավելություններ, և, ներդրման հետ կապված, ծախսերն արդարացված են: Այս տեսանկյունից հաշվեգրման մեթոդին անցնելիս Հայաստանի Հանրապետությունը կարող է տեղայնացնել լավագույն միջազգային փորձը, միաժամանակ հաշվի առնելով անցումային տնտեսությանը բնորոշ ռիսկերի գնահատման ծախսերի ավելացումը:

Այս նպատակով, 2014 թվականի հունիսի 21-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, որտեղ սահմանված են հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները և ամրագրված է, որ «...կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ, դրամական հոսքերի մասին տեղեկատվության)՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, ... »:¹³

Անցումը հաշվեգրման համակարգին պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հայաստանում կիրառվող դրամական հատկացումների համակարգի միջոցով օրենսդիր իշխանությունը կարգավորում էր գործադիր մարմինների գործունեության ֆինանսավորումը պետական դրամական միջոցների բաշխման ճանապարհով: ՀՀ դեպքում հատկացումների համակարգը վերաբերում էր ինչպես պետության, այնպես էլ համայնքների գործառնությունների իրականացմանը, ինչը հնարավորություն չէր տալիս իրականացնել պետական դրամական միջոցների ամբողջական հսկողություն, քանի որ գործադիր մարմինները չէին կարողանում ուղղակիորեն հսկել եկամուտները, այլ, ընդամենը, կանխատեսումներ էին կատարում եկամուտների վերաբերյալ: Արդյունքում, եկամուտների ձևավորումը դուրս էր մնում գործադիր մարմինների հսկողությունից: Հատկացումների համակարգը թույլ չէր տալիս նաև արդյունավետ հսկել որոշ պայմանական պասիվների և պարտավորությունների հետ կապված շարժերը,

¹³ «ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, ընդունված 06. 21.2014թ.:

քանի որ դրանք նույնպես դուրս էին մնում ընթացիկ բյուջետային տարվա ծախսերի շրջանակներից:

Նախկին խորհրդային հանրապետություններից շատերն ընդունում են, որ գոյություն ունի (GFS 2001) ՊՖՎ 2001-ի և ՀՀՄՄ-երի միջև սերտ կապ և առաջացել է անհրաժեշտություն գերատեսչություններում հաշվեգրման մեթոդով վարվող հաշվառումը բարելավելու և այն գանձապետարանի հաշվապահական հաշվառման հետ համապատասխանեցնելու համար: Նախկին խորհրդային հանրապետությունների մեծ մասի հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունների կազմումը մինչև հիմա հիմնվում է 1987 թ. սահմանված հրահանգի վրա, որտեղ, ի լրումն դրամարկդային սկզբունքով կատարվող գործառնությունների, համակարգերում գրանցվում են նաև նյութական ակտիվները, հիմնական միջոցները, ֆինանսական ակտիվները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը: Համակարգը ներառում է նաև տնտեսական հոսքերը, օրինակ՝ մաշվածքը: Սակայն, այդուհանդերձ, գնահատման և գրանցման սկզբունքները, ի տարբերություն հաշվապահական հաշվառման ստանդարտների, դեռևս սահմանված չեն:

Սակայն, հաշվեգրման համակարգին անցնելու համար, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ուսումնասիրությունները, անհրաժեշտ է ուժեղացնել նաև դրամական միջոցների նկատմամբ կենտրոնացված հսկողությունը, ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով հաստատագրված տոկոսների և արտարժույթի ռիսկի նկատմամբ հսկողության ամրապնդումն ու կենտրոնացումը, սեփական կապիտալի հետ կապված ռիսկի նկատմամբ հսկողության խստացումը, դրամական միջոցների, բյուջետային

պարտքերի, ֆինանսական ակտիվների և բաժնեմասային ներդրումների նկատմամբ ներքին հսկողության ուժեղացումը, որոնք բավական մեծ ծախսեր են ենթադրում: Քանի որ ՀՀՀՄՍ-ների կամ ՀՀՀՄ-ների ներդրումը պահանջում են պետական ֆինանսական կառավարման մեջ գործառնությունների և տվյալների գրանցման նոր մոտեցումներ: Վերջինս էլ իր հերթին պահանջում է կառավարման գործընթացների, կառուցվածքների, ենթակառույցների վերակազմակերպում: Գործառնությունների և տվյալների գրանցման վրա ազդեցություն կունենան, ինչպես գրանցման մեթոդի փոփոխության, այնպես էլ ստացվող և մշակվող տեղեկատվության ծավալի մեծացման հետ կապված դժվարություններ: ՀՀՀՄՍ /ՀՀՀՄ-ների ներդրումը ՀՀ-ում պահանջում է նաև երկրորդ սերնդի գանձապետական համակարգի ստեղծում, որը ենթադրում է բարձր մակարդակի ավտոմատացում բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչներում (ԲՄԿ), ինչպես նաև վերջիններիս և գանձապետական համակարգի միջև մշտական ավտոմատացված կապ: Մա պայմանավորված է այն հանգամանքով, որ հաշվեգրման մեթոդի կիրառման ժամանակ լրացուցիչ ծավալի տեղեկատվության հավաքման և մշակման անհրաժեշտությունը ԲՄԿ-ում հնարավոր չէ ապահովել տվյալների հավաքագրման ներկայիս հնարավորություններով, որտեղ գրանցումների մեծ մասը դեռևս ձեռքով է կատարվում:¹⁴ Ասվածով է պայմանավորված այն հանգամանքը, որ չնայած ՀՀ ՀՀՀՀՄ-ի, «Հանրային հատված հաշվառման մասին» ՀՀ օրենքի, «Հանրային հատված հաշվառման հաշվային պլանի» ընդունմանը (2014-2015 թթ.-ից),

¹⁴ .http://lraber.asj-oa.am/30/1/2_Janjuxasjan_A._S.%2B.pdf

դրանք դեռևս չեն գտնում իրենց ամբողջական և լիարժեք կիրառումը գործնականում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվել են հանրային հատվածի հաշվառման և հաշվետվողականության միջազգային փորձը, քննարկվել են ՀՀ-ում հանրային հատվածի հաշվառման ստանդարտի կիրառմանը խոչընդոտող գործոնները և հանրային ֆինանսների օգտագործման նկատմամբ վերահսկողության համակարգերի ձևավորման անհրաժեշտությունը:

Tamara Hovakimyan

YSU, Associate Professor, Ph.D.

ACCOUNTING AND REPORTING ISSUES OF THE PUBLIC SECTOR IN THE REPUBLIC OF ARMENIA

***Keywords** – public sector, the cash distribution system, charging system, consolidated reporting, treasury system*

The paper studied the international experience in the field of accounting and reporting in the public sector, identified barriers to the implementation of accounting standards in the public sector of the Republic of Armenia and the necessity of improving the control of public finances were grounded.

Тамара Овакимян

ЕГУ, доцент, к.э.н.

ВОПРОСЫ УЧЕТА И ОТЧЕТНОСТИ ОБЩЕСТВЕННОГО СЕКТОРА В

Ключевые слова – *общественный сектор, кассовая система распределения, система начислений, консолидированная отчетность, система казначейства*

В статье изучен международный опыт в области бухгалтерского учета и отчетности в государственном секторе, выявлены факторы, препятствующие внедрению стандартов бухгалтерского учета в государственном секторе Республики Армения и обоснована необходимость совершенствования контроля над государственными финансами.

Ներկայացվել է՝ 21.03.2018 թ.

Ընդունվել է տպագրության՝ 18.04.2018 թ.

Նոնա Խաչատրյան

ԵՊՀ, դոցենտ, տ.գ.թ.

Վահան Գևորգյան

Եվրոպական տարածաշրջանայաին կրթական ակադեմիա,
ասպիրնատ

**ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ
ԲՈՒՀԵՐՈՒՄ**

Հիմնաբառեր – *բյուջետավորում, նորմատիվային ծախսերից շեղումներ, ծախսերի ձևավորման կենտրոններ, պատասխանատվության կենտրոններ*

Դրամական հոսքերի վերահսկողության արդյունավետ միջոց է հանդիսանում բուհերում իրականացվող բյուջե-

տավորումը, որը ենթադրում է յուրաքանչյուր ստորաբաժանման գծով գիտակրթական ծառայությունները սպասարկող եկամուտների և ծախսերի նախահաշիվների կազմում, և, դրա հիման վրա, բուհի գլխավոր նախահաշվի ներկայացում: Գիտակրթական գործընթացին առնչվող դրամական հոսքերը ձևավորվում են ինչպես ֆակուլտետներում, գիտական լաբորատորիաներում, այնպես էլ համալսարանական գործունեությունը սպասարկող ստորաբաժանումներում և վարչական օղակներում, որոնցից յուրաքանչյուրի գործունեությունը հնարավոր է ներկայացնել ծախսային կոնկրետ նախահաշիվներով: Այս առումով, բյուջետավորումը համարվում է արդյունավետ, եթե այն հիմնվում է ոչ թե ըստ ձևավորման ոլորտների լոկալացված դրամական հոսքերի, այլև գիտակրթական գործունեության պատասխանատվության կենտրոնների վրա: Հետևաբար, դրամական միջոցների ձևավորման և ծախսի վերահսկողությունը ընդհանուր գծերով ներկայացվում է որպես համապատասխան ժամանակահատվածի նախահաշվային ու փաստացի արդյունքների համեմատման և մոնիթորինգի գործընթաց, որի արդյունքում սահմանված նախահաշիվներից փաստացի արդյունքների ցանկացած շեղումները ներկայացվում են համալսարանների կառավարման համակարգի համապատասխան օղակին կամ պատասխանատվության կենտրոնին՝ անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման համար:¹⁵

Հենց այս տրամաբանությամբ, բուհերում նախահաշվային կենտրոնները որոշելիս կարևորվում է դրանց ներկա-

¹⁵ Востриков, А. С. Проблемы децентрализации функций при управлении вузом / А. С. Востриков, Н. В. Пустовой // Университетское управление: практика и анализ. – 2003. – № 4(27). – С. 6-15.

յացումն ըստ կառավարման պատասխանատվության կենտրոնների: Կառավարման օղակների պատասխանատուները ընդգրկվում են իրենց գործունեությանը առնչվող նախահաշիվների կազմման փուլում և, այնուհետև, լիարժեք տիրապետում դրա իրականացմանը վերաբերող վերահսկողության տեղեկատվությանը, որպեսզի կայացնեն դրամական միջոցների հոսքերի գծով արդյունավետ կառավարչական որոշումներ:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում դրամական միջոցների բյուջետային վերահսկողական համակարգի գործունեությունը պահանջում է, որ.

- որոշվեն բուհի երկարաժամկետ ռազմավարական նպատակները,
- ձևավորվի դրամական հոսքերի նախահաշիվային կենտրոնների տրամաբանական ստորաբաժանում՝ ենթադրելով, որ յուրաքանչյուր գիտակրթական ստորաբաժանման կառավարչին ներկայացվելու է նախահաշիվ, կրթական ծառայությունների մատուցման վերահսկողության ոլորտ և կառավարչական որոշումներին նպաստող տեղեկատվություն:¹⁶

Այս առումով, համալսարանի գիտակրթական գործունեության գլխավոր նախահաշիվը ձևավորվում է համաբուհական և ֆակուլտետային ծախսային կենտրոնների նախահաշիվներից: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրին կցված է նախահաշիվի կատարման պատասխանատու (վարչության պետ, դեկան, ամբիոնի վարիչ, լաբորատորիայի վարիչ և այլն):

¹⁶ Евстафьев, К. А. Методы математического моделирования финансовых потоков высшего учебного заведения при бюджетировании по центрам финансовой ответственности. // Финансы и кредит. – 2014. – № 25 (601). – С. 26-31.

Մասնագիտական գրականությունում կարևորվում է ֆակուլտետային և համաբուհական ծախսային կենտրոնների նախահաշիվների ներդաշնակեցումը, որով կանխվում են ծախսերի ուռճացված նորմավորումները և, ինչու չէ, նաև թերագնահատված բուհական գործունեության հողվածների ներկայացումը, որով վտանգվում է մատուցվող կրթական ծառայությունների որակը: Այդ իսկ պատճառով ֆինանսական հոսքերը նորմավորելիս կատարվում է նախահաշվային կենտրոնների փոխկապակցում, երբ գլխավոր նախահաշվի կազմում ինտեգրվում են կրթական ծառայությունների տարբեր բաժինները (տե՛ս գծապատկեր 1):

Հատկանաշական է, որ գիտակրթական գործունեության բյուջետավորումն ունի մի շարք առանձնահատկություններ: Բուհերում տարբերակվում են վարչարարական և կրթության սպասարկման ծախսերը, ինչպես նաև հետազոտությունների վրա ծախսված ռեսուրսները: Այնուհետև, խմբավորում են այն դրամային ծախսերը, որոնք ուղղակի առնչվում են դասավանդվող ժամաքանակի, ուսանողների թվաքանակի փոփոխման հետ, որից հետո նախահաշիվներ են ներկայացվում այն դրամային ծախսերի գծով, որոնք անուղղակիորեն են փոխկապակցվում գիտաուսումնական ծառայությունների մատուցմանը:


Այս առումով, կարևորվում է բուհերում ճկուն նախահաշիվների կազմումը, որոնք փոփոխվում են՝ ելնելով կրթական ծառայությունների շրջանակների ընդլայնման կամ կրճատման հետ: Հետևաբար, բուհերում հիմնականում նպատակահարմար է կիրառել ըստ առանձին ստորաբաժանումների դրամական հոսքերի ճկուն նախահաշիվներ, որոնք կազմվելով և գործողության մեջ դրվելով ֆինանսական տարվա սկզբին, հնարավոր փոփոխություններ են կրում հաշվետու տարվա ընթացքում:

Փորձը ցույց է տալիս, որ բուհական համակարգում ճկուն նախահաշիվների կազմումը պայմանավորված է ու-

ուումնական և ֆինանսական տարիների մեկնարկի ու ավարտի ժամանակային տարբերություններով: Ելնելով համալսարանական գործունեության առանձնահատկություններից, կրթական ծառայությունների մատուցման նախահաշվի հաշվարկը կատարվում է տարին մեկ անգամ՝ առաջին կուրսեցիների ընդունելությամբ, որոնց թվաքանակը ճշգրիտ կանխատեսելի չէ ֆինանսական տարվա սկզբին և, փաստորեն, հստակեցվում է ուսումնական տարվա մեկնարկին: Ճկուն նախահաշիվների կազմման անհրաժեշտությունը նաև բացատրվում է նրանով, որ ուսումնական տարվա ավարտին արձանագրվում է մի շարք պատճառներով ազատված ուսանողների, կամ այլ բուհից տեղափոխվածների թվաքանակ, որի հետևանքով ճշտվում է հաջորդ ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախահաշիվը:

Հետևաբար, դրամային հոսքերի բյուջետային վերահսկողությունը առավել արդյունավետ է իրականացվում, եթե բուհերում կազմվում են Ճկուն նախահաշիվներ, որոնք արագ արձագանքում են կրթական ծառայությունների մատուցման չափերի և ծավալների փոփոխությունները ուսումնական տարվա ընթացքում:

Այսպիսով, դրամական միջոցների բյուջետային վերահսկողության նկատառումներով անհրաժեշտ է նախ կազմել սկզբնական ծախսային նախահաշիվներ, այնուհետև, դրանք վերանայելով, կառավարչական որոշումներ իրականացնել՝ ելնելով Ճկուն նախահաշիվներից: Նման իրավիճակը հուշում է, որ բուհական համակարգում գլխավոր (համընդհանուր) նախահաշիվը նույնպես դինամիկ փոփոխություններ պետք է կրի, քանի որ այն փոխկապակցված է Ճկուն ենթանախահաշիվների հետ:



Գծապատկեր 1. Համալսարանի գլխավոր նախահաշվի և ստորադաս նախահաշվային կենտրոնների փոխկապակցումը

ԱՄՓՈՓՈՒՄ

Ելնելով բուհական համակարգում գիտակրթական գործունեության բյուջետավորման առանձնահատկություններից, հիմնախնդիր է հանդիսանում դրամական միջոցների նախահաշվային հոսքերից փաստացի շեղումների ժամանակին բացահայտումը՝ ըստ պատասխանատվության կենտրոնների: Կրթական ծառայությունների մատուցման ընթացքում չափազանց կարևորվում է կառավարչական որոշումների ժամանակին իրականացումը, որով բուհական գործունեության ֆինանսական հոսքերի թերություններն օպերատիվ բացահայտվում և հրատապ շտկվում են, դրանով իսկ նպաստելով բուհերի ֆինանսական պաշարների կայունացմանը:

Nonna Khachatryan

YSU, Associate Professor, Ph.D.

Vagan Gevorgyan

European Regional Educational Academy, Post-graduate student

FINANCING CONTROL DEVELOPMENT IN HIGHER EDUCATION

***Keywords** – budgeting, deviation from standard costs, the emergence of centers of costs, responsibility centers*

Financial control in the activities of higher education institutions become actual, not only in terms of identifying overruns. Current market-competition is forcing universities to assess the effect-

tiveness of money spent in the process of educational services. The article proposes a system of financial control cash flows in universities.

Нонна Хачатрян

ЕГУ, доцент, к.э.н.

Ваган Геворгян

Европейская региональная академия образования, аспирант

СОВЕРШЕНСТВОВАНИЕ КОНТРОЛЯ ФИНАНСОВЫХ СРЕДСТВ В ВУЗАХ

Ключевые слова – бюджетирование, отклонение от нормативных расходов, центры возникновения затрат, центры ответственности

Финансовый контроль в деятельности вузов становится актуальным не только с точки зрения выявления перерасходов. Рыночная конкуренция вынуждает вузам также оценить эффективность израсходованных денежных средств в система финансового контроля денежных потоков в университетах.

Ներկայացվել է՝ 22.03.2018 թ.

Ընդունվել է սպառնություն՝ 18.04.2018 թ.

**ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Հիմնաբառեր – արտահիվանդանոցային բուժօգնություն, սահմանափակված բյուջեի ծավալ, անվճար հետազոտությունների ծավալներ, շահառուներ

Ուսումնասիրելով 2015-2017 թվականների պետական բյուջեի մասին ՀՀ օրենքները, տեսնում ենք, որ ՀՀ առողջապահության ուղղվող միջոցները աճի միտումներ չեն գրանցում: Միաժամանակ, առաջիկա տարիներին առողջապահության ոլորտին հատկացվող պետական ֆինանսավորման աճ չի նախատեսվում ՀՀ կառավարության 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով¹⁷:

Անդրադառնալով արտահիվանդանոցային բուժօգնությանը, առողջապահությանն ուղղվող միջոցների շուրջ 30%-ը հատկացվում է այս ծառայությանը (շուրջ 86 մլրդ. դրամից 27,5 մլրդ. դրամ): Նշենք, որ արտահիվանդանոցային ծառայության մասով, 2015 թվականի փաստացի տվյալներով, մատուցվել է շուրջ 28,6 մլրդ դրամի, իսկ 2016 թվականին՝ 29 մլրդ դրամի բուժօգնություն: Սահմանափակված բյուջեի ծավալներից ելնելով, 2015 թվականին չի ֆինանսավորվել շուրջ 364 մլն դրամ, իսկ 2016 թվականին՝ 1 մլրդ դրամ¹⁸:

¹⁷ ՀՀ Կառավարության 7 հուլիսի 2016 թվականի N 723-Ն որոշումը «ՀՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին»:

¹⁸ ՀՀ առողջապահական Ե-Հոսպ տեղեկատվական բազա

Այս պարագայում, խնդիր է առաջանում վերանայել նախկին ֆինանսավորման մեխանիզմները, որպեսզի առկա ռեսուրսների շրջանակներում քաղաքացիներին մատուցվի համապատասխան որակի բուժօգնություն, հնարավորինս բացառելով դժգոհությունները: Անհրաժեշտ է վերանայել բուժօգնության կազմակերպման տարածաշրջանային սկզբունքները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ մարզերում բնակչության տարիքասեռային կազմում տեղի են ունեցել էական փոփոխություններ, պետք է կրճատել սպասարկման տարածքի բնակչության թվաքանակի նորմատիվները և վերանայել անվճար սկզբունքով մատուցվող ծառայությունների տեսակները (կաբինետները): Լաբորատոր-գործիքային հետազոտությունների մասով հանել ամբողջությամբ անվճար սկզբունքը և սահմանել անվճար հետազոտությունների ծավալներ և շահառուներ: Ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների համար սահմանել վճարովի բուժօգնության, խորհրդատվության, հետազոտությունների և ոչ բժշկական ծառայությունների ցանկեր՝ կանոնակարգելով նշված ծառայությունների կատարման ընթացքը:

Սույն առաջարկի ընդունումը ենթադրում է ներկայումս ամբողջովին անվճար հոչակված մի շարք ծրագրերում բնակչության որոշակի խմբերի համար պետական մասնակցությամբ իրականացվող բուժօգնության գաղափարի ներդրում և/կամ ընդլայնում, որի արդյունքում, մի կողմից պետությունը իրականում կկարողանա լիարժեք ծավալի և որակի բուժօգնություն երաշխավորել բնակչության այն խմբերի համար, որոնք կշարունակեն օգտվել ամբողջովին անվճար պետպատվերի ծառայություններից, մյուս կողմից, կընդլայնվի բնակչության այլ խմբերի պաշտոնական մասնակցությունը իրենց բուժօգնության համաֆինանսավորմանը, ինչը կբերի ոլորտում առկա ստվերային շրջանառության և կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը: Պետության մասնակցությունը այս խմբերի համար կարող է կրել տարբերակված բնույթ՝

ծածկելով բուժօգնության իրական արժեքի որոշակի տոկոսը, որի չափը կախված կլինի տվյալ սոցիալական խմբի կարիքների առաջնահերթությունների գնահատումից: Դրա հետ մեկտեղ, այս տարբերակը նույնպես պարունակում է սոցիալական դժգոհության առաջացման որոշակի ռիսկ, կապված նախկինում անվճար հոշակված ծառայությունների փաթեթի կրճատման հետ, սակայն, առաջարկվող մոտեցումները հանրությանը ճիշտ ներկայացնելու և դրանք հաշվարկներով հիմնավորելու դեպքում, այդ դժգոհությունները կարճաժամկետ բնույթ կկրեն և էական լարվածության չեն բերի:

Խնդիրը, դիտարկելով որպես երկարաժամկետ ռազմավարական ծրագիր, նպատակահարմար կլինի իրականացնել առողջապահության համակարգի հետագա օպտիմալացում, բնակչության առողջապահական կարիքների գնահատման վրա հիմնված պետական պատվերի տեղադրման նոր մեխանիզմների ներդրում:

Խնդրի համառոտ նկարագրությունը. վերջին տասնամյակում ՀՀ առողջապահության համակարգում իրականացվել են մի շարք լուրջ ներդրումային ծրագրեր, որոնցից խոշորագույնը Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացված մարզային հիվանդանոցների վերակառուցման և վերազինման ծրագիրն է: Նշված ծրագրի շրջանակներում առ այսօր շահագործման են հանձնվել Գյումրի, Մեղրի, Արմավիր, Արարատ, Ապարան, Ալավերդի, Հրազդան, Իջևան, Գորիս, Նոյեմբերյան, Գավառ, Կապան, Բերդ և Ճամբարակ քաղաքների բժշկական կենտրոնները: Դրա հետ միաժամանակ, Երևան քաղաքում զգալի մասնավոր ներդրումներ են կատարվել մի շարք բժշկական կենտրոնների կառուցման և/կամ վերազինման մեջ: Այս քայլերի արդյունքում էականորեն բարելավվել է բնակչությանը մատուցվող բուժօգնության որակը և մատչելիությունը, արձանագրվել է դիմելիության աճ: Սակայն, միաժամանակ, առաջ են եկել նոր խնդիրներ՝ կապված, առաջին հերթին, այն

հանգամանքի հետ, որ վերակառուցված մարզային բուժհիմնարկների լրացուցիչ հզորությունների պահպանումը պահանջում է պետական ֆինանսավորման ծավալների ավելացում, ինչը տեղի չի ունենում, դրա հետ մեկտեղ, ոլորտում առկա չկառավարվող մրցակցության ուժեղացումը բերում է այլ բուժհիմնարկների թերծանրաբեռնվածության խորացմանը, սակայն դրանց փակման կամ միավորման հարցերը քննարկման առարկա չեն դառնում և ժամանակին չեն լուծվում: Նոր բուժհիմնարկների մուտքը բժշկական ծառայությունների շուկա, ինչպես նաև դրանց ծառայությունների կառուցվածքն ու հզորությունները, որպես կանոն, հիմնված չեն երկրի բնակչության չբավարարված առողջապահական կարիքների գնահատման վրա, այսինքն՝ առողջապահական նոր հզորությունների ձևավորումը տեղի է ունենում չպլանավորված և անվերահսկելի ձևով:

Առողջապահության ոլորտում իրականացվող օպտիմալացման քայլերը մի շարք դեպքերում չեն հասնում իրենց վերջնական նպատակին, իսկ, հաճախ նաև, ընթացքում վերանայվում և հակառակ ուղղություն են ստանում:

Առաջարկվում է հիմնովին վերանայել նոր բուժհիմնարկների լիցենզավորմանը ներկայացվող պահանջները և համապատասխան օրենսդրական դաշտը՝ դրանցում ներառելով, բացի տեխնիկական, կադրային և շենքային հագեցվածության հարցերից, նաև առաջարկվող ծառայությունների կարիքի առկայության հիմնավորումները: Առողջապահության ոլորտում մասնավոր ներդրումներ կատարելու ցանկության դեպքում դրանք պետք է հիմնականում ուղղել գործող պետական բուժհիմնարկների վերազինմանն ու հզորացմանը՝ ապապետականացման և մասնավորեցման համապատասխան մեխանիզմների միջոցով (կարող են լինել բացառություններ՝ մարզերի համաչափ զարգացման ապահովման կամ երկրում գոյություն չունեցող նոր բժշկական տեխնոլոգիաների ներդրման կարիքներից ելնելով): Անհրաժեշտ

է կրկին անդրադառնալ առողջապահության ոլորտի օպտիմալացման վերաբերյալ նախկինում ընդունված, այնուհետև բազմիցս վերանայված և փոփոխված որոշումներին, վերանայել դրանք և լուծել առանձին բուժհիմնարկների փակման, միաձուլման կամ վերապրոֆիլավորման վաղուց հասունացած խնդիրները: Պետական պատվերի տեղադրման գործընթացը պետք է դառնա ավելի ընտրողական և նույնպես պետք է հիմնված լինի բնակչության առողջապահական կարիքների, ինչպես նաև առաջարկվող ծառայությունների որակի գնահատման վրա: Ելնելով բնակչության առողջապահական կարիքների գնահատումից, որպես առաջնահերթ միջոցառումներ, առաջարկվում է իրականացնել պետական պատվերի շրջանակներում բուժօգնություն մատուցող կազմակերպությունների թվաքանակների կրճատում և ծառայությունների հնարավորինս կենտրոնացում, ինչպես նաև պետական նպատակային ծրագրերի օպտիմալացում (կրճատում) առաջարկվող հաշվարկների օրինակով (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

ՀՀ պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի ծրագրերում առաջարկվող օպտիմալացում

2016 թվականի բյուջեով հաստատված ծրագրեր	2016 թվականի ճշտված բյուջե	Առաջարկվող ծրագրեր	2017թ. Բյուջե
1	2	3	4
Ընդամենը, այդ թվում՝	29,633,025.1	Ընդամենը, այդ թվում՝	29,847,746.50

Դեղագործական ապրանքներ, այդ թվում՝	2,074,972.5	Դեղագործական ապրանքներ, այդ թվում՝	2,401,372.5
ՀՀ առողջապահության նախարարություն	2,074,972.5	ՀՀ առողջապահության նախարարություն	2,401,372.5
Արտահիվանդան ոցային ծառայություններ, այդ թվում՝	27,558,052.6	Արտահիվանդանոցային ծառայություններ, այդ թվում՝	27,446,374.00
Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	11,195,557.9	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	11,004,912.7
Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ	4,099,084.2	Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ	4,113,609.4
Մանկաբարձագինե կոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	1,630,449.2	Մանկաբարձագինե կոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	1,627,043.0
Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ	133,000.0	Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ	133,000.0

Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ	258,863.8	Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ	258,863.8
Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ	1,980,049.5	Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ	2,080,049.5
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ	284,904.0	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ	282,101.6
Անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով հակաբեղմնավորիչ ժամանակակից միջոցների մատչելիության ապահովում	45,820.0	Առաջարկվում է ծրագիրը հանել և պարագաների ձեռքբերումը կազմակերպել «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրի շրջանակներում	45,820.0
Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	781,407.1	Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	756,407.1

Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ	87,716.4	Առաջարկվում է ծրագիրը հասել	83,366.4
Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ	3,202,028.0	Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ	3,202,028.0
Շտապ բժշկական օգնության ծառայություններ	3,292,269.6	Շտապ բժշկական օգնության ծառայություններ	3,292,269.6
Զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ	566,902.9	Զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց փորձաքննություն (Առաջարկվում է բժշկական օգնության ծառայությունները իրականացնել ԱՄՊ մասնագետների կողմից)	566,902.9

ԱՍՓՈՓՈՒՄ

ՀՀ պետական բյուջեում բնակչությանը մատուցվող անվճար բժշկական օգնության և սպասարկման նպատակով առողջապահության ծախսերը արտացոլվում է հինգ հիմնական խմբերով՝ հիվանդանոցային բուժօգնություն, արտահիվանդանոցային բուժօգնություն, շտապ բժշկական բուժօգնություն, հիգիենիկ-հակահամաճարակային ծառայություններ, առողջապահական այլ ծրագրեր: 1998 թվականից մինչ այժմ առողջապահությանն ուղղվող միջոցների շուրջ 23-30%-ը հատկացվում է արտահիվանդանոցային բուժօգնությանը: Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում այցելուների թվի նվազեցմանը զուգահեռ աճում է հիվանդանոցային դեպքերի թիվը:

Հոդվածում առաջարկվում է վերանայել բնակչության մեկ շնչին ընկնող առողջապահական հանրային ֆինանսավորման սկզբունքը, քանի որ տարեկան հաստատագրված գումարում ներառված են ինչպես առողջության առաջնային պահպանման ծախսերը, այնպես էլ մասնագիտացված ամբուլատոր բուժօգնության ծախսերը: Բացի այդ, դեռևս կայացման փուլում է գտնվում ֆինանսավորման մոտիվացիոն համակարգը, ուստի բուժօգնության արդյունավետությունը մնում է ցածր:

Hayastan Hakobian

Northern University, Post Graduate Student

WAYS OF IMPROVING THE MECHANISMS OF FINANCING AMBULATORY HEALTH CARE

***Keywords** – outpatient medical care, limited budget, free surveys, beneficiaries.*

In the RA state budget, the cost of providing free medical care and services to the population is reflected in five main groups: inpatient medical care, outpatient care, emergency medical care, hygienic-anti-epidemic services, and other health projects. Since 1998, about 23-30% of expenditures are aimed at ambulatory health care. However, up to now this figure does not justify itself, since along with the reduction of ambulatory patients, the number of hospital cases still increasing.

In this regard, the article proposes to revise the calculated approach to health financing per capita, since the annual budget line includes both initial medical costs and specialized outpatient medical expenses. Moreover, the motivational system for financing health care is still in the stage of formation, which leads to a decrease in the effectiveness of medical care of the population.

Айастан Аюбян

Северный университет, аспирант

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ МЕХАНИЗМОВ ФИНАНСИРОВАНИЯ АМБУЛАТОРНОЙ МЕДИЦИНСКОЙ ПОМОЩИ

Ключевые слова – амбулаторная медицинская помощь, объем ограниченного бюджета, объем бесплатных обследований, бенефициары.

В государственном бюджете РА расходы на оказание населению бесплатной медицинской помощи и обслуживания отражаются в пяти основных группах: стационарная

медицинская помощь, амбулаторная помощь, скорая медицинская помощь, гигиенические-противоэпидемические услуги, и другие проекты здравоохранения.

Начиная с 1998 года около 23-30% расходов нацелены на амбулаторную медицинскую помощь. Однако до настоящего времени эта цифра не оправдывает себя, поскольку наряду с сокращением амбулаторных больных возрастет цифра больничных случаев.

В этой связи, в статье предлагается пересмотреть расчетный подход финансирования здравоохранения на душу населения, поскольку в годовой бюджетной статье включены как первоначальные медицинские затраты, так и специализированные амбулаторно-медицинские расходы. Более того, мотивационная система финансирования здравоохранения до сих пор находится в этапе формирования, что приводит к снижению эффективности медицинской помощи населения.

*Ներկայացվել է՝ 20.03.2018 թ.
Ընդունվել է Կապիտալ ծախսերի մասին 18.04.2018 թ.*

Նարինե Մելիքյան

Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի ղեկավար, տ.գ.թ.

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՊԵՍ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Հիմնաբառեր – կորպորատիվ կառավարում, տնօրենների խորհուրդ, տնօրենների խորհրդի անկախ անդամ, տնօրենների ինստիտուտ

Յուրաքանչյուր անձի հաջողությունների և անհաջողությունների պատճառը նրա որոշումներն են: Այս պնդումը գործում է նաև ընկերությունների դեպքում: Իրապես, ընկերությունների կենսունակությունը պայմանավորվում է դրանց կառավարման մարմինների որոշումներով: Սակայն ընկերությունների կառավարման համակարգում գոյություն ունի մարմին, որը պատասխանատու է թե՛ իր և թե՛ կառավարման այլ մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից կայացվող որոշումների համար, քանի որ նա իր որոշումներով ձևավորում է մշակույթ և «տոն» տալիս ընկերությունում որոշումներ կայացնողների համար: Այդ իսկ պատճառով, նրան հաճախ կոչում են ընկերությունների «գիտակցություն ու կամք»¹⁹:

Կառավարման այդ մարմինը տնօրենների խորհուրդն է, որն իր առաքելության շրջանակներում պարտավոր է երաշխավորել ընկերությունում հավասարակշռված ու տրամաբանված որոշումների կայացումը, հաշվետվականության, ներքին հսկողության, ռիսկերի կառավարման պատշաճ հա-

¹⁹Рентон Т. Выбор и обучение директоров. Четвертое заседание круглого стола по вопросам корпоративного управления в России. Обязанности совета директоров и роль заинтересованных лиц в области корпоративного управления. Москва, 20 – 21 июня 2001 г.

մակարգերի ձևավորումը, երկարաժամկետ տնտեսավարման վարքագծի խթանումն ու ամրապնդումը: Այդ երաշխավորության արդյունքը կորպորատիվ կառավարման որակյալ համակարգն է, որն իր հետ բերում է ընկերությունների ներդրումային գրավչության և կորպորատիվ հեղինակության բարձրացում, գործունեության արդյունավետության ու բիզնեսի արժեքի աճ, մրցակցային առավելությունների ձևավորում ու ամրապնդում, բիզնեսի և հանրության կայուն զարգացման համար նախապայմանների ձևավորում:

Այսինքն, իր առաքելությամբ տնօրենների խորհուրդը որոշիչ դերակատարում ունի ոչ միայն առանձին ընկերությունների, այլև երկրի տնտեսական համակարգի կայունության և նրա նկատմամբ վստահության ամրապնդման հարցում:

Ինչո՞վ է զբաղվում տնօրենների խորհուրդը

Հաշվի առնելով տնօրենների խորհրդի առաքելությունը և դրա շրջանակներում լուծվող խնդիրները՝ նշյալ հարցի օրինաչափությունը կասկածների տեղիք չի տալիս:

Տնօրենների խորհրդի հիմնական զբաղմունք-գործառույթը ընկերությանն առաջնորդելն է, այսինքն՝ խորհրդի անդամները պարտավոր են դուրս գալ «տրված սահմաններից», ըմբռնել, թե ինչ է սպասվում ընկերությանն ապագայում և կանխատեսել իրադարձություններն ու մարտահրավերներն ավելի շուտ, քան դրանք կարող են տեղի ունենալ, այսինքն՝ կառավարել ընկերությունն ապագայից²⁰, ինչը նյու-

²⁰ Charles E. Smith. The Merlin Factor: Leadership and Strategic Intent. Business Strategy Review. Volume 5 Issue 1. 1994. Published by Oxford University Press.

թականանում է ընկերության երկարաժամկետ ռազմավարության մեջ:

Հետևաբար, տնօրենների խորհուրդը որոշումներ է կայացնում ընկերության համար ռազմավարական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ: Մրա հետ մեկտեղ, տնօրենների խորհուրդը վերահսկում է ընկերության ընթացիկ ղեկավարման արդյունավետությունը, բաժնետերերի և այլ շահառուների շահերի պաշտպանվածությունը, կանխատեսում է շահերի հնարավոր բախումները և կարգավորում դրանք, հավասարակշռում ընկերությունում մրցակցող դիրքորոշումները²¹:

Ինչպե՞ս է գործում տնօրենների խորհուրդը

Իր առաքելությունը և հիմնական գործառույթներն իրագործելիս տնօրենների խորհուրդը մշտապես բախվում է որոշակի հակասությունների հետ, որոնց հաղթահարման հաջողությամբ էլ հենց պայմանավորվում է տնօրենների խորհրդի գործունեության արդյունավետությունը:

Հակասություն թիվ 1. տնօրենների խորհուրդը կառավարման կոլեգիալ մարմին է, այսինքն՝ այն իրենից ներկայացնում է անձանց խումբ²²: Որպես կանոն, այդ անձիք ակտիվ են, գործունյա, սոցիալական որոշակի դիրք զբաղեցնող, օժտված անձնային տարբեր հատկանիշներով և որակներով: Հետևաբար, շատ հաճախ, խորհրդի անդամները միևնույն խնդրի վերաբերյալ կարող են ունենալ տարբեր, իսկ որոշ

²¹ G20/S2ՁԿ Կորպորատիվ Կառավարման Սկզբունքներ.-Եր.: Կորպորատիվ Կառավարման Կենտրոն, 2016.-72 էջ (www.oecd.org):

²² Самосудов М. Корпоративное управление. Организация работы совета директоров. Учебно-методическое пособие. Институт международных экономических отношений. Москва. 2003г.

դեպքերում նույնիսկ հակասական մոտեցումներ, ինչը տեղիք է տալիս հայացքների, կարծիքների բախման:

Հակասություն թիվ 2. տնօրենների խորհրդի անդամները կարող են հանդես գալ որպես տարբեր խումբ բաժնետերերի կամ այլ շահառուների ներկայացուցիչներ, որոնց շահերն ի սկզբանե կրում են հակասական բնույթ: Չնայած որ տնօրենների խորհրդի անդամ դառնալու պահից անդամի հիմնական ուղենիշը պետք է լինի ընկերության և դրա բաժնետերերի ու այլ շահառուների շահը, չի բացառվում, որ տնօրենների խորհրդի անդամներն իրենց հետ խորհուրդ բերեն նախկին հարաբերությունների «շլեյֆ»:

Հակասություն թիվ 3. տնօրենների խորհրդի անդամների աշխատանքի էությունը նիստերին մասնակցության միջոցով որոշումների կայացումն է: Տնօրենների խորհրդում անդամությունը նրանց մշտական աշխատանքը չէ, այսինքն՝ նրանք ունեն այլ զբաղվածություն, ինչը նրանց հնարավորություն է տալիս ըմբռնել, թե ինչ է կատարվում ընկերության սահմաններից դուրս՝ արտաքին աշխարհում, ինչպես է կարելի այդ գիտելիքներն օգտագործել ի նպաստ ընկերության և ինչպես կարող են արտաքին միջավայրի փոփոխությունները ներգործել ընկերության վրա: Բացի այդ, տնօրենների խորհրդի անդամների բազմազբաղ լինելը սահմանափակում է նրանց անձնական շփումներն ու հաղորդակցումը:

Հակասություն թիվ 4. տնօրենների խորհրդի արդյունավետ գործունեության նախապայմանը նրա անդամների միջև գործակցային հարաբերություններն են, որոնք չպետք է տեղիք տան խմբային մտածելակերպի ձևավորման: Տնօրենների խորհրդում պետք է քաջալերվեն այլընտրանքային տեսակետները, այլախոհությունը չպետք է դիտարկվի որպես

տնօրենների խորհրդի «անդորրը» խաթարող հանգամանք: Տեղին է հիշել Գեներալ Ջորջ Ս. Փաթոնի խոսքերը. «Երբ բուլտը մտածում են նույն ձևով, դա նշանակում է, որ ոչ ոք չի մտածում»²³: Այսինքն՝ մի կողմից տնօրենների խորհրդի անդամը պետք է բաց լինի իր գործընկերների հետ հարաբերություններում, իսկ, մյուս կողմից, նա պարտավոր է պահպանել իր դիրքորոշման անկախությունը և դրսևորել ողջամիտ դատողություն:

Հակասություն թիվ 5. տնօրենների խորհուրդը տեղեկացված որոշումներ կայացնելու համար պարտավոր է քաջատեղյակ լինել և հստակ պատկերացում ունենալ, թե ինչ է կատարվում ընկերությունում տնօրենների խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում: Այդ տեղեկատվության կրողը ընկերության գործադիր մարմինն է կամ ղեկավարությունը: Հետևաբար, այդ տեղեկատվության նկատմամբ հասանելիություն ունենալու համար տնօրենների խորհրդի շահերից է բխում կանխատեսել և հաղթահարել ղեկավարության հետ հնարավոր հակասությունները, հստակ սահմանել ընկերության ռազմավարությունը և վերահսկել դրա իրագործումը՝ չմիջամտելով ընթացիկ գործունեության ղեկավարմանը, գնահատել ղեկավարության սպասումները և բուլտը այն հանգամանքները, որոնք կարող են հանգեցնել ընկերության ղեկավարության օպորտունիստական դիրքորոշման:

²³ Enhancing Board Oversight: Avoiding Judgment Traps and Biases. The Committee of Sponsoring Organizations of the Treadway Commission (COSO). March 2012.

Թվում է, թե այս հակասությունները կարող են դժվարեցնել խորհրդի աշխատանքը, նվազեցնել դրա հաջող գործելու հնարավորությունը, սակայն, իրականում, դրանց հաղթահարումը տնօրենների խորհրդի գործունեության շարժիչ ուժն է, որը նպաստում է.

➤ *բազմակարծության և քննարկումների հիմքի վրա հիմնավորված, հավասարակշռված, կշռադաստված որոշումների ընդունմանը,*

➤ *խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանը, քանի որ գործում է դրական սիներգիայի էֆեկտը, համաձայն որի՝ կոլեգիալ մարմնի օգտակար գործողության գործակիցն ավելի բարձր է, քան այն կազմող առանձին անհատներինը.*

➤ *որոշում ընդունող կոնկրետ անձանց անձնային հատկանիշներից կախվածության նվազմանը.*

➤ *փոխադարձ պատասխանատվության կորպորատիվ մշակույթի ձևավորմանը:*

Այս ամենի շնորհիվ, որպես կոլեգիալ և ոչ միատարր թիմ, տնօրենների խորհուրդն առավելագույնս արդյունավետ է ռազմավարական և ընդհանուր կառավարման հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Ինչպիսին տնօրենների խորհրդի անդամներն են, այնպիսին էլ տնօրենների խորհուրդն է.

Որպես կոլեգիալ մարմին, տնօրենների խորհուրդը չի կարող անկախ լինել իր անդամներից: Տնօրենների խորհրդի անդամների մարդկային կապիտալը, փորձառությունը, վարքագծային բնութագրիչները, անկախության աստիճանը կանխորոշում են խորհրդի որոշումների որակը, հետևաբար,

հանդիսանում են նաև ընկերության հաջողության գրավական:

Որպես կանոն, տնօրենների խորհրդի արդյունավետ գործունեությունը պայմանավորվում է նրա կազմում անկախ անդամների առկայությամբ:

Կարելի է ասել, որ ներկայումս տնօրենների խորհրդի անկախ անդամների հարցը կորպորատիվ կառավարման ամենաքննարկվող թեմաներից է: Դա ունի իր դրդապատճառները, որոնց թվում են.

Սահմանման բարդությունը. ըստ Հիգսի, ոչ գործադիր տնօրենը հանդիսանում է անկախ, եթե տնօրենների խորհուրդը նրան համարում է այդպիսին՝ հիմնվելով նրա դատողությունների և ունակությունների վրա: Սակայն Հիգսը չի սահմանափակվում միայն խորհրդի անդամի անկախ դատողությամբ: Նա առանձնացնում է որոշակի փոխհարաբերություններ և հանգամանքներ, որոնք կարող են ներգործել տնօրենի անկախության վրա²⁴: Հետևելով դրանց՝ օրենքներում և կորպորատիվ կառավարման կանոնագրքերում տրվում են տնօրենների խորհրդի անդամի անկախության տարբեր չափանիշներ, որոնք, շատ դեպքերում, հասկացության էությունը պարզաբանելու փոխարեն, այն ավելի խճճում են: Պարզության տեսանկյունից ամենադիպուկ սահմանումը Ինստիտուցիոնալ Ներդրողների Խորհրդին է, համաձայն որի, անկախ տնօրեններն այն անձիք են, ովքեր ընկերության հետ

²⁴ Derek Higgs, Review of the role and effectiveness of non-executive directors, January 2003. <http://www.ecgi.org/codes/documents/higgsreport.pdf/>. Հիգսի հաշվետվությունն ուղղված է ընկերությունների կորպորատիվ կառավարման համակարգում տնօրենների խորհրդի ոչ գործադիր անդամների դերի ամրապնդմանը:

կապված են բացառապես տնօրենների խորհրդի անդամ լինելու հանգամանքով²⁵: Հետևաբար, տնօրենների խորհրդի անդամի անկախությունը որոշելիս կարևոր է պարզաբանել խորհրդի անդամի կախյալության կամ անկախության հարցը: Եթե տարրալուծված բաժնետիրական կապիտալ ունեցող երկրներում խորհրդի անդամի անկախությունը դիտարկվում է ղեկավարության/ կառավարիչների, ապա կենտրոնացված կապիտալ ունեցողներում՝ խոշոր բաժնետերերի նկատմամբ²⁶: Նշվածից կարելի է եզրակացնել, որ տնօրենների խորհրդի անդամը պետք է անկախ լինի խորհրդի որոշումների վրա ազդելու կամ դրանք կանխորոշելու հնարավորություն ունեցող անձից կամ անձանցից:

Անկախ տնօրենի ձայնի լսելի լինելը. կորպորատիվ կառավարման փորձագետները գտնում են, որ տնօրենների խորհրդում անկախ անդամների ներկայացվածությունը պարտադիր պայման է՝ վերապահումով, որ նրանք տնօրենների խորհրդում կազմեն մեծամասնություն, որպեսզի նրանց ձայնը լսելի լինի որոշումներ կայացնելիս:

Տեղեկատվության արտահոսքի վտանգ. Ընդդիմախոսները ոչ միայն կասկածներ են հայտնում խորհրդի անդամների անկախության, այլև ընկերության տեղեկատվական անվտանգության տեսանկյունից, մտավախություն ունեն խորհրդում կողմնակի անձ ներգրավելու հետ կապված: Այս մտավախությունը փարատվում է նրանով, որ տնօրեննե-

²⁵ <http://www.cii.org>

²⁶ Костылева В., Леуэде Г. Формирование совета директоров в странах-членах ОЭСР и в России. Круглый стол ОЭСР по корпоративному управлению в России. 2012.

րի խորհրդի անկախ անդամները կաշկանդված են իրենց հեղինակությամբ, քանի որ դա նրանց՝ տնօրենների խորհրդի անդամ դառնալու հիմնական ռեսուրսներից է:

Անկախություն²⁶, թե՞ պրոֆեսիոնալիզմ. տնօրենների խորհրդի անդամների անկախությունը նրա գործունեության արդյունավետության վրա ազդող անհրաժեշտ, սակայն բավարար պայմանը չէ: Շատ հաճախ տնօրենների խորհրդում ընտրվում են անձիք, ովքեր բավարարում են անկախության օրենքով կամ կանոնագրքերով սահմանված ֆորմալ չափանիշներին, սակայն չունեն բավարար կարողություններ իրենց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար: Հետեվաբար, կորպորատիվ կառավարման թե՛ պրակտիկան, թե՛ տեսական հիմքերը կարևորում են տնօրենների խորհրդի անկախ անդամների մարդկային կապիտալը՝ պրոֆեսիոնալիզմը, ինչը նրան հնարավորություն է տալիս այս կամ այն հարցի վերաբերյալ ունենալ սեփական, անկախ կարծիք, դրանով ազդել ընկերությունում կայացվող որոշումների վրա և ապահովել դրանց տրամաբանվածությունը: Այլ կերպ ասած, տնօրենների խորհրդի անկախ անդամը պետք է ապահովի իր անկախությունն ինչպես ֆորմալ առումով, այնպես էլ փաստացիորեն. լինի ն՛ պրոֆեսիոնալ, ն՛ անկախ:

Անկախ այն հանգամանքից՝ տնօրենների խորհրդի անդամը գործադիր է, թե ոչ գործադիր/անկախ, տնօրենների խորհրդի հաջող գործունեության համար նա գործնականում պետք է տիրապետի որոշակի որակների, որոնց թվում առանձնացվում են²⁷.

²⁷ Р. Лебланк, Дж. Гиллис. Совет директоров - взгляд изнутри. Принципы формирования, управление, анализ эффективности. Перевод с английского.

Համոզելու ունակություն. Ինչպես արդեն նշվել է, տնօրենների խորհրդի հիմնական գործառույթը որոշումներ կայացնելն է: Հետևաբար տնօրենների խորհրդի անդամը պետք է ունակ լինի ազդելու այդ որոշումների, իր գործընկերների կարծիքի ու տեսակետի վրա, այսինքն՝ օժտված լինի համոզելու ունակությամբ: Իր այս շնորհը տնօրենների խորհրդի անդամը կարող է ծառայեցնել ի նպաստ ընկերության, եթե նրա կողմից բերված փաստարկներն օբյեկտիվ են ու համոզիչ, հիմնվում են խելամիտ ենթադրությունների վրա, ճկուն են իրավիճակային փոփոխությունների նկատմամբ, ընկերության զարգացումները դիտարկում են շահառուների լայն շրջանակի տեսանկյունից, հավասարակշռում են ընկերության երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակները: Բացի այդ, տնօրենների խորհրդի անդամը պետք է ունակ լինի վաստակել իր գործընկերների վստահության քվեն: Սա հնարավոր է, եթե խորհրդի անդամի խոսքն ու գործը համապատասխանում են, և դա կանոնավոր հիմունքներով ընկերության համար ապահովում է դրական արդյունքներ:

Համաձայնելու կամ չհամաձայնելու ունակություն. տնօրենների խորհրդի անդամի վարքագծային կարևորագույն որակը սեփական դիրքորոշումը հիմնավորելու, այլոց դիրքորոշումները և տեսակետներն ընկալելու, դրանց հետ

Институт профессиональных директоров. Москва. 2006. Հեղինակները հինգ տարվա ընթացքում տնօրենների խորհրդի անդամների հետ անմիջական, բաց հարցազրույցների միջոցով ուսումնասիրելով տնօրենների խորհրդի ներքին կառուցվածքները առաջարկում են լավագույն խորհուրդների ձևավորման մոտեցումներ, ինչպես նաև առանձնացնում տնօրենների խորհրդի ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ անդամների տիպարները:

հիմնավորված համաձայնելու կամ չհամաձայնելու, փոխզիջումների գնալու ունակությունն է: Այս ունակությունը գործում է, եթե տնօրենների խորհրդի անդամը ճանաչում է ինքն իրեն, օբյեկտիվորեն գնահատում է սեփական կարողություններն ու ունակությունները, որոշումներ կայացնելիս գիտակցում է այլ անձանց (շահառուների) կարիքներն ու սպասումները, ունի սեփական կարծիք, այն անկաշկանդ արտահայտելու, ուրիշներին լսելու, նրանց տեսակետը հարգելու ունակություն, ինչպես նաև երկխոսության գնալու պատրաստակամություն:

Ինքնուրույնություն. խորհրդի անդամը պետք է ունակ լինի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում աշխատել ինքնուրույն և խորհրդի նիստերին մասնակցել պատրաստված ու արդեն ձևավորված սեփական դիրքորոշմամբ: Հաշվի առնելով, որ խորհուրդը կոլեգիալ մարմին է, և որոշումներն այստեղ ընդունվում են քննարկումների և բանավեճերի արդյունքում, նիստերին պատրաստված և սեփական դիրքորոշում ունեցող խորհրդի անդամը մի կողմից խնայում է իր և իր գործընկերների ժամանակը, իսկ մյուս կողմից խթանում է քննարկումները, նպաստում է հիմնախնդրի համակողմանի բացահայտմանը, գոյություն ունեցող կարծիքների և մոտեցումների համադրմանը, ինչի արդյունքում խորհուրդը հնարավորություն է ստանում ընդունել կշռադատված և հավասարակշռված որոշումներ:

Տնօրենների խորհրդի անդամներ չեն ծնվում

Տնօրենների խորհրդի անդամներ չեն ծնվում, այլ դառնում են: Ուսումնասիրությունները վկայում են, որ ավելի հաճախ տնօրենների խորհրդի անդամի, հատկապես ոչ գործադիր անդամի, աթոռը զբաղեցնում են բանկիրներ, վենչուրա-

յին կապիտալիստներ, այլ ընկերությունների գլխավոր տնօրեններ, քաղաքական կապեր ունեցող անձիք, շահառուների ներկայացուցիչներ և այլն²⁸: Միջազգային միտումներն, իրենց հերթին, փաստում են, որ տնօրենների խորհուրդների նոր անկախ անդամների մոտավորապես քառորդ մասն ունի ֆինանսական կրթություն: Տնօրենների խորհրդում կրճատվում է ակտիվ գլխավոր տնօրենների մասնակցությունը (2015թ. կազմել է 20%՝ 2005թ. համեմատ նվազելով 12%-ով), դրա փոխարեն աճում է այլ գործադիր պաշտոնների տեսակարար կշիռը (2015թ. կազմել է 25%՝ 2005թ. համեմատ աճելով 9%-ով): Միաժամանակ, տնօրենների խորհրդում աճում է կանանց ներկայացվածությունը (2005թ. 15%-ի փոխարեն՝ 2015թ. կազմելով 20%)²⁹:

Հարկ է նշել, որ գոյություն չունի դեպի տնօրենների խորհրդի անդամի պաշտոնը տանող միասնական մոդել: Յուրաքանչյուրն իր ուղին հարթում է յուրովի:

Սակայն, կան կառույցներ, որոնք աջակցության ձեռք են մեկնում տնօրենների խորհրդի անդամներին և դրանց հնարավոր թեկնածուներին այդ բարդ ուղին հաղթահարելու, ինչպես նաև իրենց պարտականությունները պատշաճ իրականացնելու հարցում: Այդ կառույցներն ավելի շատ հայտնի են տնօրենների ինստիտուտ անվամբ: Ժամանակակից միտումները վկայում են դրանց աշխարհագրության ընդլայնման մասին: Սրանց գործունեության հիմնական առանցքը

²⁸ Adams R., Hermalin B., Weisbach M. The Role of Boards of Directors in Corporate Governance: A Conceptual Framework & Survey. April, 2009. <http://faculty.haas.berkeley.edu/hermalin/AHWSurveyRevised.pdf>

²⁹ Spencer Stuart Board Index 2015. S&P 500 Boards: Five-Year and Ten-Year Trends.

տնօրենների խորհրդի անդամների որակավորման և վարքագծային չափանիշների սահմանումն է, նրանց շարունակական պրոֆեսիոնալ զարգացման ապահովումը, ինչպես նաև տնօրենների խորհրդի հնարավոր անդամի ու ընկերության կամրջումը:

2015 թվականին ՀՀ-ն ևս համալրեց տնօրենների ինստիտուտ ունեցող երկրների շարքը: Տնօրենների Հայկական Ինստիտուտի (www.iod.am) ձևավորման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ՀՀ-ում վերոնշյալ խնդիրների լուծմամբ, այնպես էլ հայ հասարակությունում պրոֆեսիոնալ տնօրենի դերի արժևորմամբ, տնօրենի, ով, հանդիսանալով ԿԿ լավագույն գործելաոճի կրողը, ի վիճակի կլինի ստանձնել ընկերությունների ԿԿ համակարգի բարելավման պատասխանատվությունը և, ըստ այդմ, խթանել երկրի տնտեսության երկարաժամկետ կայուն զարգացումը:

Narine Melikyan

Head of Corporate Governance Center, Ph.D. in Economics

BOARD OF DIRECTORS AS RESPONSIBLE FOR CORPORATE DECISIONS

***Keywords** –corporate governance, board of directors, independent member of the board, institute of directors*

In terms of its mission, the board of directors is obliged to guarantee the balanced and logical decision-making of the company, formulation of reporting, internal control and risk management systems, initiation of long-term economic behaviour. The main function of the board of directors is the management of the company realised in its long-term strategy.

Being a collegial management body, the board of directors may not be independent of its members. Human capital, experience, competencies, behavioural traits, independence level of the board members predetermine the quality of its decisions and thereby, the success of the company.

A member of the board is not born but made. Each person paves his own way. Nevertheless, there are organisations supporting this process, more known as *“institute of directors”*.

In 2015, Armenia has joined the list of countries where the institute of directors operates. The necessity of creation of Armenian Institute of Directors is conditioned by the enhancement of the role of the board members as individuals responsible for the future of the company and economic system of the country.

Нарине Меликян

Руководитель Центра Корпоративного Управления, к.э.н.

СОВЕТ ДИРЕКТОРОВ КАК ОТВЕТСТВЕННЫЙ ЗА КОРПОРАТИВНЫЕ РЕШЕНИЯ

Ключевые слова – корпоративное управление, совет директоров, независимый член совета директоров, институт директоров

В рамках своей миссии совет директоров обязан гарантировать принятие сбалансированных и логических решений в компаниях, формирование систем отчетности, внутреннего контроля и управления рисками,

стимулирование долгосрочного экономического поведения. Основная функция совета директоров – это видение компании, которое материализуется в ее долгосрочной стратегии.

Являясь коллегиальным органом управления, совет директоров не может быть независимым от своих членов. Человеческий капитал, опыт, компетенции, поведенческие черты, степень независимости членов совета определяют качество его решений, тем самым и успех компании. Членами совета директоров не рождаются, а становятся. Каждый по-своему прокладывает свой путь. Однако существуют организации, которые поддерживают этот процесс. Они более известны под название “институт директоров”.

В 2015 году Армения пополнила список стран, где действует институт директоров. Необходимость создания Армянского Института Директоров обусловлена повышением значения роли членов совета как лиц, ответственных за будущее компаний и экономической системы страны.

*Ներկայացվել է՝ 04.04.2018 թ.
Ընդունվել է 18.04.2018 թ.*

Կարեն Ալավերդյան

ՀՊՏՀ,

Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի հայցորդ

Րաֆֆի Ալեքսանյան

ԵՊՀ, ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ

ՌԴ-ՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

***Հիմնաբառեր** – աուդիտ, հանրային վերահսկողություն, ինքնակարգավորում, կարգավորման խառը համակարգ*

Վերջին տարիներին աուդիտորական գործունեության կարգավորման ոլորտում առկա է պետական և հանրային կարգավորման մոդելների սկզբունքների միավորման միտում, որի արդյունքում ձևավորվում է, այսպես կոչված, կարգավորման խառը մոդելը, որտեղ աուդիտորական գործունեության ինքնակարգավորման սկզբունքն իր տեղը զիջում է աուդիտորական գործունեության կարգավորման մեջ պետության և մասնագիտական հանրության հավասարաչափ մասնակցության սկզբունքին:

ՌԴ-ում այս մոդելը կիրառության մեջ դրվեց 2008թ. դեկտեմբերի 30-ին, երբ ընդունվեց «Աուդիտորական գործունեության մասին» ՌԴ օրենքը³⁰: Արդյունքում ձևավորվեց մի մոդել, որը, մի կողմից հիմնվում է պետական կարգավորման վրա, մյուս կողմից էլ լայն լիազորություններ է տրամադրում աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպություններին:

Աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպություններին վերապահված լիազորությունները մի կողմից

³⁰ Федеральный закон "Об аудиторской деятельности" от 30.12.2008 N 307-ФЗ

վկայում են աուդիտորական գործունեության կարգավորման մեջ ինքնակարգավորման ինստիտուտի ճանաչման մասին, մյուս կողմից, հանգեցնում են պետական միջոցների խնայմանը:

ՌԴ-ում աուդիտի կարգավորումն իրականացնող մարմիններն են՝

- Լիազոր դաշնային մարմինը,
- Լիազոր դաշնային մարմին կից աուդիտի գծով խորհուրդը,
- Աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպությունները:

Լիազոր դաշնային մարմինն իրականացնում է աուդիտի պետական կարգավորումը, լիազոր դաշնային մարմին կից աուդիտորական գործունեության գծով խորհուրդն իրականացնում է աուդիտի խառը կարգավորում, իսկ աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպությունները՝ աուդիտի ինքնակարգավորում:

Ներկայումս ՌԴ-ում լիազոր դաշնային մարմնի գործառույթները դրված են ՌԴ ֆինանսների նախարարության վրա, որի կազմում ստեղծվել է պետական ֆինանսական վերահսկողության, աուդիտորական գործունեության, հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության կարգավորման հատուկ ստորաբաժանում:

«Աուդիտորական գործունեության մասին» ՌԴ օրենքի համաձայն՝ լիազոր դաշնային մարմինն իրականացնում է աուդիտորական գործունեության պետական կարգավորման հետևյալ գործառույթները՝

1. աուդիտորական գործունեության ոլորտում պետական քաղաքականության մշակում,
2. աուդիտորական գործունեության ոլորտում նորմատիվ իրավական կարգավորման իրականացում, այդ թվում՝ աուդիտորական գործունեության դաշնային ստանդարտների, աուդիտորների և աուդիտորական կազմակերպու-

թյունների անկախության կանոնների հաստատում, ինչպես նաև իր լիազորությունների սահմաններում աուդիտորական գործունեությունը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունում,

3. աուդիտորների ինքնակարգավորող կազմակերպությունների պետական գրանցամատյանի վարում,

4. ՌԴ-ում աուդիտորական ծառայությունների շուկայի իրավիճակի վերլուծություն,

5. աուդիտորների ինքնակարգավորող կազմակերպությունների գործունեության նկատմամբ պետական վերահսկողության իրականացում³¹:

ՌԴ ֆինանսների նախարարության շրջանակներում ստեղծված ստորաբաժանումը մշակում է աուդիտորական ծառայությունների շուկայում պետական կարգավորման պատժամիջոցների համակարգը, իրականացնում է այդ գործունեության նկատմամբ վերահսկողությունը, պաշտպանում է պետության, տնտեսվարող սուբյեկտների, աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների շահերը: Ստորաբաժանման աշխատակիցները պարբերաբար հրապարակում են խորհուրդներ անհատ աուդիտորներին և աուդիտորական ընկերություններին կազմակերպությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի անցկացման և հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում օրենսդրության կիրառման վերաբերյալ: Նման հրապարակումները օգնում են աուդիտորներին և աուդիտորական ընկերություններին ճիշտ կիրարկել աուդիտորական գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և դաշնային ստանդարտների պահանջները, ինչպես նաև պաշտպանում են հասարակության շահերը՝ անկախ վերահսկողություն իրականացնելու միջոցով: Հրապարակումները կապված են առավել արդի հիմնախնդիրների հետ, օրինակ՝ համաշ-

³¹ Федеральный закон "Об аудиторской деятельности" от 30.12.2008 N 307-ФЗ

խարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում ներքին վերահսկողության ռիսկին, անընդհատ գործելու ռիսկին, կապակցված ընկերություններում գործունեություն իրականացնելու ռիսկին մեծ ուշադրություն դարձնելու անհրաժեշտության վերաբերյալ: Աուդիտորների հետ հետադարձ կապը իրականացվում է պայմանագրային հիմունքով՝ նորմատիվ իրավական ակտերի և ստանդարտների մշակման գործընթացում մասնագետների և փորձագետների ներգրավման միջոցով:

Լիազոր դաշնային մարմինն կից աուդիտորական գործունեության գծով խորհուրդը գործում է «Աուդիտորական գործունեության մասին» ՌԴ օրենքի և ՌԴ ֆինանսների նախարարության 2009թ. դեկտեմբերի 29-ի N 146-Н հրամանի հիման վրա և պահանջներին համապատասխան: Խորհրդի կազմում ընդգրկված են

➤ հաշվապահական հաշվետվողականությունն օգտագործողների 10 ներկայացուցիչներ,

➤ ՌԴ ֆինանսների նախարարության 2 ներկայացուցիչ,

➤ 1 ներկայացուցիչ ձեռնարկատիրական գործունեության զարգացման ոլորտում պետական քաղաքականության մշակման և նորմատիվ իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից, 1 ներկայացուցիչ ՌԴ Կենտրոնական բանկից, 1 ներկայացուցիչ գործադիր իշխանության դաշնային մարմնի կողմից,

➤ 2 ներկայացուցիչ աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպություններից:

Ընդ որում, հաշվապահական հաշվետվողականության օգտագործողների ներկայացուցիչների նվազագույնը 25%-ը ենթակա է ռոտացիայի 3 տարին մեկ անգամ: Ինքնակարգավորվող կազմակերպությունների ներկայացուցիչները ենթակա են փոփոխման տարին մեկ անգամ:

Խորհրդի գործունեությունը պետք է լինի բաց և հրապարակային: Խորհուրդը կատարում է հետևյալ հիմնական գործառույթները՝

➤ դիտարկում է աուդիտորական գործունեության ոլորտում պետական քաղաքականության հարցերը,

➤ դիտարկում է աուդիտորական գործունեության դաշնային ստանդարտների նախագծերը և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոնք կարգավորում են աուդիտորական գործունեությունը, և դրանք ներկայացնում է հաստատման ֆինանսների նախարարություն,

➤ հաստատում է աուդիտորական գործունեության դաշնային ստանդարտների նախագծերի մշակման կարգը, աուդիտորների և աուդիտորական ընկերությունների անկախության կանոնները, աուդիտորների մասնագիտական էթիկայի օրենսգիրքը, սահմանում է այն ոլորտները, որոնցից կազմվում են աուդիտորների որակավորման քննությունների հարցերը,

➤ գնահատում է աուդիտորների ինքնակարգավորող կազմակերպությունների գործունեությունը աուդիտորական ընկերությունների և աուդիտորների գործունեության որակի արտաքին վերահսկողության իրականացման առումով և անհրաժեշտության դեպքում տրամադրում է առաջարկներ այն կատարելագործելու ուղղությամբ,

➤ առաջարկներ է ներկայացնում ֆինանսների նախարարություն ֆինանսարյուջետային վերահսկողության դաշնային ծառայության կողմից աուդիտորական կազմակերպությունների գործունեության որակի արտաքին վերահսկողության համար,

➤ ուսումնասիրում է աուդիտորների ինքնակարգավորող կազմակերպությունների դիմումները և համապատասխան առաջարկներ է ներկայացնում ֆինանսների նախարարություն,

➤ ֆինանսների նախարարության հրահանգով անց է կացնում աուդիտորական գործունեության կարգավորման հետ կապված իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն,

➤ գնահատում է աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների գործունեության որակի ներքին վերահսկողության վիճակը, և, անհրաժեշտության դեպքում, տրամադրում է առաջարկություններ,

➤ վերլուծում է աուդիտորների կողմից որակավորման բարձրացման ծրագրերով ուսուցման պահանջի իրականացումը, ինքնակարգավորվող կազմակերպությունների գործունեությունը այդ ուսուցման ապահովման գործում և տրամադրում է առաջարկություններ,

➤ գնահատում է աուդիտորական ընկերությունների և աուդիտորների նկատմամբ կիրառվող վարքագծային պատժամիջոցների արդյունավետությունը և առաջարկություններ է ներկայացնում լիազոր մարմնին,

➤ անհրաժեշտության դեպքում որակի արտաքին վերահսկողություն իրականացնող դաշնային մարմնին է ուղարկում առաջարկություններ, ուսումնասիրում է ստուգումների արդյունքները:

ՌԴ-ում աուդիտորական գործունեության կայացման և զարգացման ողջ գործընթացում մասնագիտական միավորումների դերը գնալով աճել է:

Մինչև «Աուդիտորական գործունեության մասին» ՌԴ օրենքի ընդունումը աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպությունների պետական գրանցման համարժեքն էր աուդիտորների մասնագիտական միավորումների հավատարմագրման գործընթացը: Հավատարմագրումը ենթադրում էր պաշտոնական ճանաչում և գրանցում աուդիտորական գործունեության կարգավորումն իրականացնող լիազոր մարմնի կողմից: 2009թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ՌԴ-ում գործում էին 5 աուդիտորների ինքնակարգավորվող կազմա-

կերպություններ՝ հավատարմագրված ՌԴ ֆինանսների նախարարության կողմից՝

1. ՌԴ աուդիտորական պալատը (այսուհետ՝ АИП)
2. Պրոֆեսիոնալ աուդիտորների ինստիտուտը (այսուհետ՝ ИПАР)
3. Մոսկվայի աուդիտորական պալատը (այսուհետ՝ МоАИ)
4. ՌԴ պրոֆեսիոնալ հաշվապահների և աուդիտորների ինստիտուտը (այսուհետ՝ ИПБР)
5. Աուդիտորների ռուսական կոլեգիան (այսուհետ՝ РКА)

Մասնագիտական միավորումները զարգացման նոր փուլ մտան 2007թ. դեկտեմբերի 1-ից հետո, երբ ուժի մեջ մտավ «Ինքնակարգավորվող կազմակերպությունների մասին» ՌԴ օրենքը, որով հստակ պահանջներ սահմանվեցին ինքնակարգավորվող կազմակերպությունների համար: Խոսքը չի գնում միայն աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպություններ են գործում անշարժ գույքի շուկայում (միավորում են գործակալներին, շինարարներին և այլն), գնահատողների, ֆինանսավարկային շուկայում (բրոքեր, դիլեր և այլն): Օրենքի համաձայն՝ աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպությունը ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծված է անդամության պայմանով և աուդիտորական գործունեության իրականացման պայմանների ապահովման նպատակով³²:

Ոչ առևտրային կազմակերպությունը ներառվում է աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպությունների պետական գրանցամատյանում, եթե բավարարված են հետևյալ պայմանները՝

³² Федеральный закон "Об аудиторской деятельности" от 30.12.2008 N 307-ФЗ

➤ կազմակերպությանը անդամագրվել են նվազագույնը 700 ֆիզիկական անձինք կամ 500 առևտրային կազմակերպություններ,

➤ կազմակերպությունն ունի ինքնակարգավորվող կազմակերպության անդամների աշխատանքի որակի արտաքին վերահսկողության իրականացման և պրոֆեսիոնալ աուդիտորների վարքագիրք,

➤ կազմակերպության կողմից ձևավորվել է փոխհատուցման հիմնադրամ՝ աուդիտորական ծառայության սպառողների և այլ անձանց նկատմամբ կազմակերպության անդամների լրացուցիչ պատասխանատվություն ապահովելու համար:

Օրենքի համաձայն՝ ինքնակարգավորվող կազմակերպությունները իրականացնում են հետևյալ հիմնական գործառույթները՝

➤ ինքնակարգավորվող կազմակերպություններին անդամության կանոնների մշակում և սահմանում,

➤ անդամների նկատմամբ պատժամիջոցների կիրառում,

➤ հաշվետվությունների միջոցով տրամադրվող տեղեկատվությամբ անդամների գործունեության վիճակի գնահատում և վերլուծություն,

➤ պետական մարմինների առջև իր անդամների շահերի պաշտպանություն,

➤ իր անդամների շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների կազմակերպում,

➤ իր անդամների գործունեության վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության ապահովում,

➤ իր անդամների մասնագիտական գործունեության նկատմամբ ստանդարտների և ընդունված կանոններին համապատասխան վերահսկողության իրականացում,

➤ աուդիտորական գործունեության դաշնային ստանդարտների մշակում:

ՌԴ-ում ինքնակարգավորվող կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը գնահատելու համար կատարենք նրանց գործունեության արդյունքների համեմատական վերլուծություն:

Նախ նշենք, որ ներկայումս ՌԴ-ում գործում են 5 աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպություններ, որոնք ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպությունները ՌԴ-ում

Ինքնակարգավորվող կազմակերպություն	Անվանման ռուսերեն հապավումը	ՀՄԴ-ին անդամակցության տարեթիվը
ՌԴ աուդիտորական պալատ	АИР	2010թ.
Պրոֆեսիոնալ աուդիտորների ինստիտուտ	ИПАР	2012թ.
Մոսկվայի աուդիտորական պալատ	МоАИ	2013թ.
ԱՊՀ աուդիտորական ասոցիացիա	ААС	2014թ.
Աուդիտորների ռուսական կոլեգիա	РКА	2008թ.

Աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպությունների առաջացմանը զուգահեռ կտրուկ աճեցին աուդիտորական կազմակերպությունների, անհատ աուդիտորների և որակավորված աուդիտորների թվաքանակը:

Մասնավորապես, 2015թ. վերջին աուդիտորական կազմակերպությունների թիվը 2009թ. համեմատ աճել է ավելի քան 20%-ով, անհատ աուդիտորների թվաքանակը`

ավելի քան 80%-ով, իսկ որակավորված աուդիտորների թվաքանակը՝ մոտ 20%-ով:


Աղյուսակ 2

Աուդիտորական կազմակերպությունների թվաքանակը
2009-2015 թթ. ժամանակահատվածում

Տարի	ԱՊՐ	ԻՊԱՐ	ՄօԱՊ	ՔԿԱ	ԱԱՑ	Гильдия аудиторов	Ընդամենը
2015	862	241	1 183	834	1 321		4 441
2014	921	295	1 108	847	1 334		4 505
2013	992	317	1 196	878	1 343		4 726
2012	1 056	346	1 236	885	1 310		4 833
2011	1 107	298	1 069	777	752	1 193	5 196
2010	1 161	298	1 087	769	722	1 154	5 191
2009	1 046	255	818	534	397	598	3 648

Գծապատկեր 1.

Աուդիտորական կազմակերպությունների բաշխումն ըստ ինքնա-կարգավորվող կազմակերպությունների 2015թ. վերջի դրությամբ



Հիմնվելով վերոնշյալ տվյալների վրա՝ կարող ենք եզրակացնել, որ աուդիտի կարգավորման խառը համակարգի ներդրումից հետո ՌԴ-ում աուդիտորական ծառայություններ մատուցող սուբյեկտների և աուդիտորների թվաքանակը աճել է: Այսինքն՝ մեծացել է հետաքրքրությունը աուդիտորական ծառայությունների հանդեպ, ստեղծվել են հավասար պայմաններ աուդիտորական ծառայություններ մատուցող բոլոր սուբյեկտների համար, ինչն էլ, իր հերթին, լրացուցիչ պահանջարկ է ձևավորել աուդիտորի մասնագիտության նկատմամբ՝ պայմանավորելով որակավորված աուդիտորների թվաքանակի աճ:

Անդրադառնանք նաև ինքնակարգավորվող կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշներին:

Այսպես, 2010թ. համեմատ 2015թ. աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից ստացված ընդհանուր եկամուտն աճել է մոտ 20%-ով, ընդ որում՝ ընդունելության և անդամության վճարներից եկամուտներն աճել են մոտ 10%-ով, իսկ աուդիտի որակի արտաքին վերահսկողությունից աճել են ավելի քան 50%-ով:

2010թ. համեմատ նվազել է նաև ընդունելության և անդամության վճարներից ստացվող եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ, իսկ արտաքին վերահսկողությունից վճարների տեսակարար կշիռն աճել է:

Ինչ վերաբերում է ծախսերին, ապա 2010թ. համեմատ 2015թ. ընդհանուր ծախսերը աճել են ավելի քան 40%-ով, ընդ որում, պահպանման ծախսերը մոտ 40 %-ով, իսկ որակի արտաքին վերահսկողության համար կատարվող ծախսերը՝ 100%-ով:

Աղյուսակ 3

Աուդիտորների ինքնակարգավորվող կազմակերպությունների
ֆինանսական ցուցանիշները 2010-2015 թթ.
ժամանակահատվածում, մլն ռուբլի

Ցուցանիշ	Տարի	ԱՊՔ	ԻՊԱՔ	ՄօԱՊ	ՔԿԱ	ԱԱԸ	Ընդամենը
Տարվա ընթացքում ստացված եկամուտները, այդ թվում՝	2015	82.2	26.4	68.3	37.7	51.8	266.4
	2014	79.6	27.1	68.3	37.7	42.8	255.5
	2013	77.9	28.2	59.1	39.5	41.4	246.1
	2012	80.1	24.2	55.6	40.8	38.0	238.7
	2011	62.0	28.2	44.9	31.3	24.9	191.3
ա) աուդիտորների և աուդիտորական կազմ. կողմից ընդունելության և անդամության վճարներ	2015	71.7	19.8	42.1	24.6	27.5	185.7
	2014	63.2	20.4	47.1	29.1	27.7	187.5
	2013	64.6	19.0	44.1	27.6	29.5	184.8
	2012	67.8	19.7	33.5	29.2	25.0	175.2
	2011	48.8	19.8	30.8	18.7	14.5	132.6
բ) որակի արտաքին վերահսկողության իրականացման վճարներ	2015	9.5	4.3	7.4	12.8	19.6	53.6
	2014	12.8	4.3	8.0	7.6	10.7	43.4
	2013	12.4	5.7	9.8	10.3	7.3	45.5
	2012	12.0	4.5	6.2	8.3	8.5	39.5
	2011	12.3	5.1	13.0	7.7	6.4	44.5
Տարվա ընթացքում կատարված ծախսերը, այդ թվում՝	2015	88.6	25.1	57.1	37.8	48.0	256.6
	2014	82.1	27.0	50.0	38.2	40.3	237.6
	2013	83.5	29.0	45.9	39.8	40.9	239.1
	2012	75.5	22.7	50.7	39.6	34.3	222.8
	2011	73.8	25.3	38.4	32.3	24.7	194.5
ա) ինքնակարգավորվող կազմակերպության աշխատակազմի պահպանման ծախսեր	2015	53.8	20.7	44.3	28.2	37.0	184.0
	2014	45.9	22.3	34.2	31.0	31.1	164.5
	2013	46.1	25.0	32.3	28.0	36.5	167.9
	2012	45.3	21.2	39.8	33.0	29.1	168.4
	2011	43.0	22.4	15.4	25.9	21.3	128.0
բ) որակի արտաքին	2015	19.3	3.7	12.4	8.5	10.7	54.6
	2014	18.9	4.2	15.2	6.4	8.8	53.5

վերահսկողության իրականացման համար կատարված ծախսերը	2013	18.6	3.6	13.2	4.2	4.0	43.6
	2012	19.1	1.4	10.3	6.6	4.9	42.3
	2011	19.7	2.1	10.2	5.1	3.1	40.2

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալ տեղեկատվությունը, կարող ենք եզրակացնել, որ ՌԴ-ում աուդիտի կարգավորման խառը համակարգի ներդրումն ունեցել է դրական ազդեցություն շուկայի կայացման և զարգացման վրա՝ հանգեցնելով շուկայում աուդիտորական ծառայություններ մատուցող սուբյեկտների ավելացմանը, աուդիտորական ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճին, որակավորված աուդիտորների թվաքանակի աճին, աուդիտի մեթոդաբանության գծով կատարվող աշխատանքների ակտիվացմանը, աուդիտորական ծառայությունների մասով եկամուտների աճին, աուդիտի որակի նկատմամբ արտաքին անկախ վերահսկողության իրականացմանը և աուդիտորի մասնագիտական պատասխանատվության ապահովագրության մատով երաշխիքների ապահովմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Վերջին տարիներին աուդիտորական գործունեության կարգավորման ոլորտում առկա է պետական և հանրային կարգավորման մոդելների սկզբունքների միավորման միտում, որի արդյունքում ձևավորվում է, այսպես կոչված, կարգավորման խառը մոդելը, որտեղ աուդիտորական գործունեության ինքնակարգավորման սկզբունքն իր տեղը զիջում է աուդիտորական գործունեության կարգավորման մեջ պե-

տության և մասնագիտական հանրության հավասարաչափ մասնակցության սկզբունքին:

Հոդվածում ներկայացվել է ՌԴ-ում գործող աուդիտի կարգավորման խառը մոդելի նկարագրությունը, միաժամանակ իրականացվել է վերոնշյալ համակարգի ներդրումից հետո ՌԴ աուդիտի շուկայում գրանցված արդյունքների վերլուծությունը՝ համակարգի ներդրման արդյունավետության վերաբերյալ եզրակացություններ կատարելու նպատակով:

Karen Alaverdyan

Armenian State University of Economics, Post Graduate Student

Raffi Aleksanyan

YSU, Post Graduate Student

ROLE OF PUBLIC OVERSIGHT IN AUDIT REGULATION IN RF

***Keywords** – audit, public oversight, self-regulation, system of mixed regulation.*

Recently there is a trend of consolidation of state and public audit regulation principles which leads to formation of so-called mixed model of audit regulation, where the principle of self-regulation gives way to the principle of equal participation of the professional community and state bodies. The article presents a description of the mixed model of audit regulation in RF, introduces analysis of the results of launching the mixed model in order to make conclusions about the effectiveness of the system.

Карен Алавердян

Армянский государственный экономический университет,
соискатель,

Раффи Александян

ЕГУ, Аспирант

РОЛЬ ОБЩЕСТВЕННОГО НАДЗОРА В РЕГУЛИРОВАНИИ АУДИТОВ В РФ

Ключевые слова – аудит, общественный надзор, саморегулирование, система смешанного регулирования.

В последнее время наблюдается тенденция консолидации принципов государственного и общественного аудиторского регулирования, что приводит к формированию так называемой смешанной модели аудиторского регулирования, где принцип саморегуляции уступает место принципу равного участия профессионального сообщества и государственных органов. В статье представлено описание смешанной модели аудиторского регулирования в РФ, проводится анализ результатов запуска смешанной модели, чтобы сделать выводы об эффективности системы.

Ներկայացվել է՝ 5.04.2018 թ.

Հնդրունվել է տպագրության՝ 18.04.2018 թ.

Գայանե Ղուկասյան
ԵՊՀ, ֆ.-մ.գ.թ., դոցենտ
Վեհանուշ Մարուխյան
Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն, ԵՊՀ
տ.գ.թ., ասիստենտ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՌԻՍԿԻ ԵՎ
ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՄԻՏԱՑԻՈՆ
ՍՈՒՑԼԱՎՈՐՄԱՄԲ

Հիմնաբառեր – ներդրումային նախագծի արդյունավետություն, գուտ ներկա արժեք, նախագծի ռիսկ, ներդրումային նախագծի արդյունավետության գնահատում, իմիտացիոն մոդելավորում, Մոնտե-Կառլոյի եղանակ:

Արդի պայմաններում շուկայական մրցակցությանը դիմագրավելու, սեփական շուկայական դիրքն ամրապնդելու և մրցակցային առավելություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպությունների համար առաջնահերթ ռազմավարական նշանակություն ունի ներդրումային գործունեության կառավարումը: Ներդրումային նախագիծը, կապիտալի օգտագործման երկարատև ժամկետով պայմանավորված պարունակում է արդյունքների անորոշության բարձր աստիճան, ուստի ներդրումների վերաբերյալ կառավարչական որոշում ընդունելու համար չափազանց կարևոր է գնահատել ներդրումային նախագծի արդյունավետությունը: Ներդրումային նախագծի արդյունավետության գնահատումը հանգում է բացարձակ և հարաբերական առումներով դրա եկամտաբերության մակարդակի որոշմանը:

Ներդրումային նախագծերի իրականացման կարևորագույն փուլերից մեկը ռիսկերի որոշումն ու գնահատումն է: Ռիսկերն առաջանում են սոցիալական, քաղաքական և

տնտեսական բազմաթիվ պատճառներով: Միայն ռիսկերի ընդհանուր գնահատման արդյունքում է հնարավոր դառնում գնահատել ներդրումային նախագծի արդյունավետությունը: Անորոշության և ռիսկի պայմաններում ներդրումային նախագծերի կառավարման արդյունավետության գնահատման համար կիրառվում են քանակական և որակական տարբեր մոտեցումներ:

Ներկա աշխատանքում դիտարկվում է ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատումը ռիսկի և անորոշության պայմաններում իմփտացիոն մոդելավորմամբ:³³

Իմփտացիոն մոդելավորման գաղափարը կարևորվում է տնտեսագիտական, տեխնիկական, սոցիալական և այլ բարդ համակարգերի հետազոտման գործընթացում: Այսպիսի համակարգերի հետազոտման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել պատահական գործոնների ազդեցությունը դրանց բնութագրերի և վարքի վրա, որը կապված է հաշվողական բարդ ընթացակարգերի հետ: Իմփտացիոն մոդելավորումը իրական օբյեկտների, գործընթացների և համակարգերի վարքագիծը նմանակող մաթեմատիկական մոդելների հետ համակարգչային հաշվողական փորձերի անցկացման թվային մեթոդ է: Փորձերի անցկացման ժամանակ իրականացվում են համակարգի ալգորիթմական մոդելի համակարգչային փորձարկումները և նրա զգայունության վերլուծությունը: Հետազոտվում է մոդելի տարբեր պարամետրերի փոփոխությունների ազդեցությունը համակարգի բնութագրերի վրա, այնուհետև կատարվում է գիտափորձերի օգնությամբ ստացված արդյունքների վերլուծություն և հետազոտվող համակարգի վարքին ու բնութագրերին վերաբերող վարկածներ:

³³ Хемди А. Таха. Глава 18. Имитационное моделирование // Введение в исследование операций = Operations Research: An Introduction. — 7-е изд. — М.: «Вильямс», 2007. — С. 697-737.

րի մշակում:

Բարդ համակարգերի ուսումնասիրության ժամանակ, որոնք ենթակա են պատահական ազդեցությունների, օգտագործվում են հավանակային իմիտացիոն մոդելները, որոնցում պատահական գործոնների ազդեցությունը հաշվի է առնվում՝ տալով պատահական մեծությունների հավանականային բնութագրիչները: Այդ նպատակով ներկայումս լայնորեն օգտագործվում է Մոնտե Կառլոյի եղանակը:³⁴ Այն կիրառվում է ինչպես ստոխաստիկ, այնպես էլ դետերմինային համակարգերի հետազոտման խնդիրներում:

Համաձայն Մոնտե-Կառլոյի եղանակի, ըստ տրված հավանականային բաշխման օրենքի, գեներացվում են պատահական մեծությունների՝ մոդելի պարամետրերի, փոփոխականների, ցուցանիշների համար պատահական թվերի հաջորդականություններ, որոնք, այնուհետև, օգտագործվում են օբյեկտի վարքը նմանակող մաթեմատիկական մոդելում: Իմիտացիոն մոդելավորման փորձի գործարկմամբ ստացված արդյունքները հանդիսանում են պատահական մեծություններ: Ուստի, գործընթացների բնութագրիչների կայուն և օբյեկտիվ գնահատումը պահանջում է փորձերի բազմակի կրկնություն և ստացված արդյունքների վիճակագրական վերլուծություն:

Ռիսկի և անորոշության պայմաններում ներդրումային նախագծերի արդյունավետությունն իմիտացիոն մոդելավորմամբ գնահատելու համար դիտարկենք հետևյալ խնդիրը. դիցուք, կազմակերպության ղեկավարությունը արտադրության կազմակերպման համար ուսումնասիրում է որոշ ներդրումային նախագիծ: Ներդրումային նախագծի արդյունավետությունը գնահատելու համար առանձնացվել են հետևյալ փոփոխականները.

³⁴ И.М.Соболев. Численные методы Монте-Карло. Изд-во «Наука». Москва, 1973.

- **դետերմինային փոփոխականներ.** հաստատուն ծախքեր (F), մաշվածության մեծություն (A), եկամտահարկ (T), դիսկոնտի նորմա (r), նախագծի ժամկետ (n), սկզբնական ներդրումներ (I_0): Այս արժեքները մնում են անփոփոխ նախագծի իրականացման ամբողջ ժամանակահատվածում:

- **ստոխաստիկ փոփոխականներ.** թողարկված արտադրանքի ծավալը (Q), արտադրանքի միավորի գինը (P), փոփոխական ծախքերը (V):

Նախագծի ռիսկը գնահատելու համար դիտարկվել են հետևյալ ցուցանիշները.

1. Նախագծի զուտ ներկա արժեքը՝ NPV-ն.

$$NPV = \sum_{t=1}^n \frac{NCF_t}{(1+r)^t} - I_0$$

որտեղ NCF_t -ն ժամանակի t պահին կազմակերպության դրամական հոսքի մեծությունն է՝ պայմանավորված արտադրանքի իրացումով, հաշվի առնելով ծախքերը, մաշվածության մեծությունը, եկամտահարկը: Դրամական միջոցների հոսքերը օգտագործվում են ընկերության եկամտի որակը գնահատելու համար, այսինքն՝ որքանով է այն իրացվելի, ինչն էլ իր հերթին կարող է ցույց տալ, թե արդյո՞ք ընկերությունը վճարունակ է պահպանելու իր դիրքերը: Ենթադրելով, որ դրամական հոսքն անուիտետ է, NCF_t մեծությունը յուրաքանչյուր t պահի որոշվում է հետևյալ բանաձևով

$$NCF = [Q(P - V) - F - A](1 - T) + A:$$

2. Նորմավորված սպասվող կորուստը.

$$NEL = \frac{EL}{EI + EL},$$

որտեղ EI -ն սպասվող դիսկոնտավորված շահույթն է, իսկ EL -ը՝ սպասվող դիսկոնտավորված կորուստը:

3. Վարիացիայի գործակիցը.

$$Var = \frac{\sigma}{E},$$

որտեղ σ -ն նախագծի զուտ ներկա արժեքի ստանդարտ շեղումն է, իսկ E -ն՝ մաթեմատիկական սպասումը:

Նախագծի պարամետրերի արժեքները տրված են

աղյուսակ 1-ում:

Դիցուք, նախագծի նախնական ուսումնասիրության փուլում փորձագետների կողմից տրվել են ստոխաստիկ փոփոխականների փոփոխման հնարավոր սահմանների փորձագիտական գնահատականներ (աղյուսակ 1), ինչպես նաև նախագծի իրականացման տարբեր սցենարների տեղի ունենալու հավանականությունները (աղյուսակ 2):

Աղյուսակ 1.

Մոդելի պարամետրերի արժեքները

Ցուցանիշ	Արժեքը
Հաստատուն ծախսեր – (F) (հազ. դրամ)	500
Մաշվածություն – (A) (հազ. դրամ)	100
Հարկեր – (T)	20%
Դիկոնտի նորմա – (r)	10%
Նախագծի ժամկետ – (n) (տարի)	5
Սկզբնական ներդրումներ – (I_0) (հազ. դրամ)	2000

Աղյուսակ 2.

Նախագծի իրականացման տարբեր սցենարների հավանականությունները (p)

Փոփոխականներ	Սցենարներ		
	Վատագույն $p = 0.25$	Լավագույն $p = 0.25$	Հավանական $p = 0.5$
Արտադրանքի թողարկման ծավալը	150	300	200
Միավորի գինը	40	55	50
Փոփոխական ծախսերը	35	25	30


Վերլուծության հաջորդ փուլը հանդիսանում է մոդելի ստոխաստիկ փոփոխականների բաշխման օրենքների ընտ-

րությունը: Առաջին խնդրում ենթադրվել է, որ մոդելի փոփոխականներն ունեն հավասարաչափ բաշխում, ապա կատարվել են 1000 անկախ պատահական փորձեր՝ յուրաքանչյուր անգամ գեներացնելով փոփոխականների պատահական արժեքներ: Ունենալով փոփոխականների գեներացված արժեքները, ուսումնասիրվել է մոդելի վարքը փոփոխականների արժեքների գեներացված մուտքային հոսքերի համար (աղյուսակ 3):


Աղյուսակ 3. Իմիտացիոն անալիզ (Մոնտե-Կարլոյի եղանակ) Հավասարաչափ բաշխում

	<i>V</i>	<i>Q</i>	<i>P</i>	<i>NCF_t</i>	<i>NPV</i>
Միջին արժեք	29.97	226.00	47.817	1474.2	3588.4
Ստանդարտ շեղում	3.249	43.30	4.668	608.05	2304.9
Վարիացիայի գործակից	0.108	0.192	0.098	0.412	0.642
Նվազագույն արժեք	25	150	40	228	-135.7
Առավելագույն արժեք	35	300	55	3328.4	10617.3
NPV<0 դեպքերի թիվը					42
Սպասվող կորուստների գումարը					-2190.4
Սպասվող եկամուտների գումարը					3607014
p(NPV<=0)					0.06

Նկար 1-ում բերված են անկախ փորձերի ընթացքում *V, P, Q* փոփոխականների համար գեներացված պատահական արժեքների ժամանակային շարքերը, իսկ նկար 2-ում՝ համապատասխան դրամական հոսքերը և զուտ ներկա արժեքները:



Նկար 1. Մոդելի պարամետրերի ժամանակային շարքերի գրաֆիկները



Նկար 2. Դրամական հոսքերի և զուտ ներկա արժեքների գրաֆիկները

Դրամական միջոցի ռիսկի ենթակա արժեքը հաշվում է տրված հավանականության դեպքում դրամական հոսքերի

անբարենպաստ շարժը որոշակի ժամանակահատվածում³⁵: Իմփտացիոն մոդելավորման արդյունքները ցույց են տալիս, որ նախագծի ռիսկը բավականաչափ փոքր է: Համաձայն գնահատման արդյունքների՝ նախագծի զուտ ներկա արժեքի մաթեմատիկական սպասումը հավասար է 3588.4, իսկ ստանդարտ շեղումը՝ 2304.98, որը չի գերազանցում զուտ ներկա արժեքի մաթեմատիկական սպասման արժեքը: Վարիացիայի գործակիցը հավասար է 0.64, որը փոքր է մեկից, և, հետևաբար, տվյալ նախագծի ռիսկը փոքր է կազմակերպության ներդրումային պորտֆելի միջին ռիսկից: Հավանականությունը, որ NPV-ն կընդունի բացասական արժեքներ, փոքր է 6%-ից: Այսինքն, 90%-ից մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ նախագծի իրականացման արդյունքում զուտ ներկա արժեքը կլինի դրական մեծություն: Դրական դրամական հոսքը ցույց է տալիս, որ ընկերության իրացվելի ակտիվները աճում են, ինչը թույլ է տալիս մարել պարտքերը, վերաներդնել բիզնեսում, վերադարձնել գումարը բաժնետերերին, վճարել ծախսերը և նպաստել ապագա ֆինանսական մարտահրավերների իրագործմանը:

Լավատեսական է նաև նախագծի դրամական հոսքերի՝ NCF_t -ի բաշխումը (NCF_t -ի ստանդարտ շեղումը կազմում է մաթեմատիկական սպասման 41.24%-ը): Վերլուծելով կորուստների և եկամուտների գումարը, կարելի է նկատել, որ նախագիծն ընդունելու դեպքում սպասվող զուտ դիսկոնտավորված կորուստը ($EL=2190.44$) անհամեմատ փոքր է նախագիծը մերժելու դեպքում զուտ դիսկոնտավորված եկամրտից ($EI=3607014.039$):

Ինչպես և սպասվում էր, փոփոխականների տատանումների ուղղությունները հստակ համընկել են, ուստի այդ

³⁵ Jia Chen, Li Jian, and Shouyang Wang “Risk Management of Supply and Cash Flows in Supply Chains” January 1, 2011,105-118pp

մեծությունների միջև գոյություն ունի ուժեղ կորելյացիոն կապ (նկարներ 1 և 2):

Երկրորդ խնդրում կատարվել են անկախ պատահական փորձեր՝ գեներացնելու արտադրության կազմակերպման համար փոփոխական ծախքերի, արտադրանքի գնի և քանակի պատահական արժեքներ՝ ենթադրելով, որ այդ պարամետրերն ունեն նորմալ բաշխում: Պարամետրերից յուրաքանչյուրի համար գեներացվել են 1000 արժեքներ.

$$V \sim N(30, 3.54), Q \sim N(212.5, 54.49), P \sim N(48.75, 5.45):$$

Կրկին հաշվարկվենք մուտքային և ելքային փոփոխականների բաշխման հիմնական բնութագրիչները (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Իմիտացիոն անալիզ (Մոնտե-Կառլոյի եղանակ) Նորմալ բաշխում

Ցուցանիշներ	<i>V</i>	<i>Q</i>	<i>P</i>	<i>NCF_t</i>	<i>NPV</i>
Միջին արժեք	29.96	211.93	48.69	1490.02	3648.36
Ստանդարտ շեղում	3.57	54.89	5.49	574.18	2176.60
Վարիացիայի գործակից	0.12	0.26	0.11	0.39	0.60
Նվազագույն արժեք	18.90	41.58	31.66	72.22	-1726.22
Առավելագույն արժեք	42.13	399.25	67.43	3899.80	12783.32
NPV < 0 դեպքերի թիվը					32
Կորուստների գումարը					-22377.40
Եկամուտների գումարը					3670737.4
$P(E < 0)$	0	0	0	0	0.05
$P(E < \min(E))$	0	0	0	0.01	0.01
$P(M(E) + \sigma \leq E \leq \max)$	0.16	0.16	0.16	0.16	0.16
$P(M(E) - \sigma \leq E \leq M(E))$	0.34	0.34	0.34	0.34	0.34

Դիտարկվող ցուցանիշների կորելյացիոն մատրիցը (աղյուսակ 5) ընդգծում է ցուցանիշների միջև առկա ուժեղ դրական կախվածությունը:

Աղյուսակ 5. Մոդելի փոփոխականների կորելյացիոն մատրիցը


	<i>V</i>	<i>Q</i>	<i>P</i>	<i>NCF_t</i>	<i>NPV</i>
<i>V</i>	1				
<i>Q</i>	1	1			
<i>P</i>	1	1	1		
<i>NCF_t</i>	0.994	0.994	0.994	1	
<i>NPV</i>	0.994	0.994	0.994	1	1

Իմփտացիոն գործընթացի արդյունքները ցույց են տալիս, որ այս դեպքում ևս նախագծի ռիսկը բավականաչափ փոքր է: Ջուտ ներկա արժեքի սպասվելիք մեծությունը հավասար է 3648.36, իսկ ստանդարտ շեղման մեծությունը 2176.6, որը չի գերազանցում NPV-ի արժեքը: Ջուտ ներկա արժեքի վարիացիայի գործակիցը (0.60) փոքր է մեկից, և, հետևաբար, տվյալ նախագծի ռիսկը փոքր է կազմակերպության ներդրումների պորտֆելի միջին ռիսկից: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հավանականությունը, որ գուտ ներկա արժեքը կընդունի բացասական արժեքներ, փոքր է 5%-ից նախկին (առաջին խնդրում ստացած) 6%-ի փոխարեն: Հավանականությունը որ *NPV* -ն կընդունի արժեքներ $[M(NPV) + \sigma; \max(NPV)]$ միջակայքից, հավասար է 16%, իսկ $[M(NPV) - \sigma; M(NPV)]$ միջակայքից արժեքներ ընդունելու հավանականությունը՝ 34%:

Հենվելով կենտրոնական սահմանային թեորեմի վրա՝ կարելի է պնդել, որ նախագծի NPV-ն ունի հավանականությունների նորմալ բաշխում: Համոզվենք դրանում. նախ կառուցենք NPV ստացված արժեքների հիստոգրամը (նկար 3),

NPV-ի նորմալ բաշխման վերաբերյալ վարկածը ստուգենք Կոլմոգորով-Սմիրնովի թեստով:³⁶

Կոլմոգորով-Սմիրնովի Test Statistic վիճականու հաշվարկային արժեքը 0.025 է: NPV-ի նորմալ բաշխման մասին զրոյական վարկածը $\alpha = 0.05$ արժեքականության մակարդակում չենք կարող մերժել, քանի որ այն մերժելու դեպքում սխալված լինելու հավանականությունը $p > 0.05$:



Նկար 3. NPV ստացված արժեքների հիստոգրամը

Այսպիսով, մոդելի փոփոխականների մասին հավասարաչափ բաշխման կամ նորմալ բաշխման ենթադրություններն ընդունելով՝ իմիտացիոն գործընթացի արդյունքները ցույց են տալիս, որ նախագծի ռիսկը բավականաչափ փոքր է:

³⁶ *Lilliefors H. W.* On the Kolmogorov-Smirnov test for normality with mean and variance unknown // *J. Am. Statist. Assoc.*, 1967. V.62. – P.399-402.

ԱՍՓՈՓՈՒՄ

Արդի շուկայական մրցակցության պայմաններում կազմակերպությունների համար շատ կարևոր է ներդրումների արդյունավետության գնահատման և ներդրումային որոշումներ կայացնելու խնդիրը: Հոդվածում ուսումնասիրվում է ներդրումային նախագծի արդյունավետության գնահատումը ռիսկի և անորոշության պայմաններում իմիտացիոն մոդելավորմամբ՝ Մոնտե-Կարլոյի եղանակով:

Gayane Ghukasyan

YSU, Ph. D., Associate Professor

Vehanush Marukhyan

‘IATC’ Fund, YSU, Ph.D

THE ASSESSMENT OF EFFICIENCY OF INVESTMENT PROJECT IN THE CONDITIONS OF RISK AND UNCERTAINTY WITH THE HELP OF IMITATION SIMULATION

Keywords – *efficiency of investment project, net present value, risk of project, imitation simulation, Monte-Karlo method.*

Under conditins of current market competition, one of the most important tasks for organizations is to evaluate the efficiency of the investment project and make investment decisions. The article considers simulation modeling of the evaluation of the efficiency of an investment project under conditions of risk and uncertainty using the Monte-Carlo method.

Гаяне Гукасян

ЕГУ, к.ф.-м.н., доцент

Веануш Маружян

‘Международный Центр по Обучению Бухгалтерии’, ЕГУ,

к.э.н.

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ИНВЕСТИЦИОННОГО ПРОЕКТА В УСЛОВИЯХ РИСКА И НЕОПРЕДЕЛЕННОСТИ С ПОМОЩЬЮ ИМИТАЦИОННОГО МОДЕЛИРОВАНИЯ

Ключевые слова – эффективность инвестиционного проекта, чистая приведенная стоимость, риск проекта, оценка эффективности инвестиционного проекта, имитационное моделирование, метод Монте-Карло.

При условиях текущей рыночной конкуренции одним из важнейших задач для организаций является вопрос оценки эффективности инвестиционного проекта и принятия инвестиционных решений. В статье рассматривается имитационное моделирование оценки эффективности инвестиционного проекта в условиях риска и неопределенности с помощью метода Монте-Карло.

Ներկայացվել է՝ 9.04.2018 թ.

Հնդանվել է տպագրության՝ 18.04.2018 թ.

Mels Sahakyan

YSU, 'IATC' Fund, Ph.D. in Phys.- Math. Sciences, Professor

Anna Bagdasaryan

YSU, Master Course Student

EFFECLIANCY ASSESSMENT OF THE ARMENIAN COMMERCIAL BANKS

Abstract: In recent years, the efficiency of banking system and its impact on the economy have been intensively studying in most countries. In this paper we have tried to assess the effectiveness of the Armenian banking system. The banking system was studied in 2010-2016, until the capitalization of banks has increased. Applying non-parametric (Data Envelopment Analysis) and parametric (Stochastic Frontier Analysis) models, the relative efficiency of commercial banks of Armenia was assessed. The estimates of relative efficiency, based on the official data of 17 commercial banks, allow assuming that commercial banks of Armenia are characterized by rather high and stable efficiency. Also, a strong and stable relationship has been found between efficiency and observed inputs and outputs.

Keywords – *Efficiency, banking system, commercial banks, DEA, SFA, specification.*

Introduction

The largest part of the financial system is the banking system, which accounts for 88.4% of the financial

system's assets³⁷. The big competition is quite noticeable for commercial banks in terms of getting people's and investors' confidence and attracting customers. This makes banks operate as effectively as possible.

Banks' efficiency is connected with the welfare of the population. Effective banking system helps to enhance the effectiveness of macroeconomic policy in the country. At the microeconomic level, banks' inefficiency is accompanied by numerous consequences. For example, high transaction prices. Low effectiveness of banks, ultimately, can lead to import of financial services.

Taking into account the importance of commercial banks for government, households and investors, the assessment of banks' efficiency becomes a necessary process.

In the paper, DEA non-parametric and SFA parametric methods have been used to estimate the relative efficiency of commercial banks of Armenia.

Assessment of relative efficiency of commercial banks by DEA

The comparative efficiency scores of Armenian banking sector are calculated by Data Envelopment Method. This technique allows to evaluate the effectiveness of each Decision Making Unit (DMU) in terms of its ability to transform resources into results³⁸. The DEA is based on

³⁷ Financial Stability Report of The Central Bank
https://www.cba.am/AM/ppperiodicals/fin_stab_17_1.pdf

³⁸ F. Kardiyen, H. Orkcü - "The Comparison of Principal Component Analysis and Data Envelopment Analysis in Ranking of Decision Making Units", G.U. Journal of Science, 2006, pp. 127-133

Pareto-Cumming effectiveness, which claims the following: the decision-making unit achieves full effectiveness only and only when one of the resources or the results can not be improved without wasting some other resources or results.

Taking into account the importance of cost minimization for each bank, a CCR model with a resource oriented approach has been used to analyze the effectiveness of the banking system, where efficiency is estimated from the point of view of transforming resources into product. The problem of mathematical programming may be presented in the following form:

$$h_{j_0}(u, v) = \frac{\sum_{r=1}^l u_r y_{rj_0}}{\sum_{i=1}^m v_i x_{ij_0}} \rightarrow \max$$

$$\frac{\sum_{r=1}^l u_r y_{rj}}{\sum_{i=1}^m v_i x_{ij}} \leq 1, \quad j = 1, \dots, n,$$

$$u_r, v_i \geq 0, \quad r = 1, \dots, l; \quad i = 1, \dots, m$$

Where $v_j, j = 1, 2, \dots, m$, are weights assigned to j -th input,
 $u_i, i = 1, 2, \dots, s$, are weights assigned to i -th output,

$y_{rj_0}(x_{ij_0})$ - quantified outputs (inputs) of unit

DMU_{j₀}

$\sum_{r=1}^l u_r y_{rj_0} (\sum_{i=1}^m v_i x_{ij_0})$ - weighted sum of outputs (inputs)

The CCR model, which is described above, has been used in the analysis, previously determining the resources and results³⁹ (this approach considers the conversion of deposits and other profitable assets into profitable assets).

First of all, taking into account that the purpose of banks as a commercial organization is maximizing profits, in this method net profit index is considered as an outcome. In calculating the relative efficiency of commercial banks, the cost structure has been studied. The major part of the cost structure is interest expenses which are paid or accrued for the Bank's liabilities. As 81.7% of the liabilities of commercial banks are deposits, we can say that interest expenses arise due to the acceptance of deposits. The main resource which is used by the Bank for the conversion of deposits to loans is the labor force. Staff expenditure is an indicator describing the size of the bank which has great weight in cost structure. Also, it is necessary to consider the commission fees that the bank performs for attracting funds. As for income, interest income is a dominant part of the commercial bank's revenue, and included in the model as an outcome indicator. It is also necessary to consider the commission income as an indicator describing payment and settlement functions.

Commercial banks' financial reports have also been studied. About 62% of the total assets of commercial banks are loans, the volume of which directly describes the main

39 L Hjalmarsson, SC Kumbhakar, A Heshmati DEA, DFA and SFA: a comparison // Journal of Productivity Analysis 7 (2-3), 303-327

activities of the bank, the conversion of deposits into credits, so loans are included in the model as an outcome. As for fixed assets and intangible assets, they are 4-5% of the bank's assets and do not directly affect the bank's core business effectiveness, so it is not advisable to consider this indicator in the model. As for securities, financial assets, it should be noted that all banks are not engaged in active investment activities, and since we estimate the relative efficiency of banks and the outcome should be the same for all banks, it is not advisable to include this index in the model. 81% of liabilities is deposits, and deposits are included in the model as a resource that the bank uses to provide loans.

It is clear that there is a strong correlation between loans and interest income, as well as interest expenses and deposits, but the model does not exclude and does not limit the existing relationships.

Thus, assessing the relative efficiency of Armenian commercial banks, we have the following inputs and outputs: **interest expense (v_1)**, **non-interest expenses (v_2)**, **deposits (v_3)**, **interest income (u_1)**, **non-interest income (u_2)**, **loans (u_3)**, **net profit (u_4)**. The data have been taken from the reports presented on the official websites of commercial banks. And, calculations have been made through Matlab program.

Table1. Relative Efficiency Assessments of Armenian commercial banks by DEA

Commercial Banks	2010	2011	2012	2013	2014	2015	2016
ACBA	0,76	0,96	0,69	1	1	1	1
Ameria bank	0,92	0,84	1	1	0,989	0,889	0,939
Anelik bank	1	1	0,77	0,722	0,903	0,734	0,818
Araratbank	0,61	0,97	0,81	1	1	0,834	0,917
Artsakhbank	0,72	0,81	0,71	0,868	0,868	0,604	0,736
Ardshinbank	0,6	0,87	0,62	0,763	0,763	0,93	0,846
Armbusinessbank	0,53	0,7	0,59	0,79	1	1	1
Armeconombank	0,83	1	1	0,71	0,864	0,797	0,83
ArmSwissbank	1	1	0,91	0,758	0,758	1	0,879
Biblosbank	0,55	0,74	0,72	0,65304	0,907	0,515	0,711
Converse	0,7	0,84	0,65	0,69	1	0,708	0,854
Evocabank	0,63	1	0,7	1	0,919	0,935	0,927
HSBC	1	1	0,58	0,725	0,682	1	0,841
Inecobank	0,7	0,88	0,85	1	1	1	1
Mellatbank	1	1	1	0,91	0,939	1	1
Unibank	0,58	0,77	0,64	0,95	1	0,784	0,892
VTB	0,62	0,78	0,57	1	1	0,678	0,839

For example, if we analyze the results, we can say that ACBA, Armbusiness, HSBC, ArmSwiss, Mellat and Ineco banks are considered effective by 1 efficiency rating, while other banks are characterized by certain ineffectiveness in the conversion of deposits into loans. For example, the relative efficiency of Ararat, ArmEconom and Converse banks are 83.4%, 79.7% and 70.8% in 2015, which means that Ararat, ArmEconom and Converse banks should increase their outputs, accordingly, by 16.6%, 20.3%, 29.2% fixing the level of resources, so that their activities are considered effective.

On the average, we can say that the relative efficiency of banks in the observed period is relatively stable and fluctuated from 0.74 to 0.91.

As for the efficiency of the entire banking system, assessed by using DEA method, we can say that the efficiency of

Armenian Banking System has stayed relatively stable and high during 2010-2016.




Chart1. Efficiency Assessments of Armenian Bankin System, according to DEA method

In the CCR model, the u_r and v_i show the weight of each factor in promoting this level of efficiency⁴⁰.

⁴⁰ F. Kardiyen, H. Orkcü - "The Comparison of Principal Component Analysis and Data Envelopment Analysis in Ranking of Decision Making Units", G.U. Journal of Science, 2006




Chart2. Weights of outputs and inputs

0 Interest revenues have the greatest influence on the level of effectiveness, and their growth will increase the level of efficiency to a greater extent than the growth of other outputs. As for inputs, the greater the value of the resource weight, the further growth of the resource (fixing the level of outputs) will significantly reduce the level of efficiency. In our case, such input is non-interest expenses.

Assessment of relative efficiency of commercial banks by SFA

In our research we will stop on a method of stochastic border (SFA). Being a part of big family of parametrical techniques of estimating the efficiency and his most popular representative, the method of stochastic border yields the most exact results. The specifics of this approach consist in break downing the remains of model on two components: usual random error and directly efficiency⁴¹. On the last, according to a technique, restriction in the form of non negativity is imposed, that points on its semi-normal distribution.

$$\ln(\text{TC/pl})_{it} = a_0 + a_1 \ln(\text{pk/pl})_{it} + a_2 \ln(\text{pd/pl})_{it} + a_3 \ln(\text{loan})_{it} + a_4 \ln(\text{res})_{it} + a_5 \ln(\text{nowass})_{it} + a_6 \cdot 1/2 \cdot \ln(\text{pk/pl}) \ln(\text{pd/pl})_{it} + a_7 \ln(\text{pk/pl}) \ln(\text{loan})_{it} + a_8 \ln(\text{pd/pl}) \ln(\text{loan})_{it} + a_9 \text{retail}_{it} + a_{10} \cdot t + a_{11} \cdot \text{id} - u_{it} + v_{it},$$

TC – relation of cumulative expenses

pl– price of labor /relation of labor costs on actives/

pk– price of capital /(OC-LC)/main capital/

pd– price of deposits /%exp/deposits/

loan– relation of credits to actives

res– reserves on possible losses

nowass– other non-working asset

retail– share of the retail credits in the total loan portfolio

t– time vector

id– indicator of bank;

u_{it} - The error responsible for efficiency (having semi-normal distribution)

v_{it}–random error

Cumulative expenses of a bank are expressed as the some of administrative, operating expenses and other expanses. After which, the values of cumulative expenses, as well as credits are corrected by a capital sixe. First, this transformation improves the descriptive force of model, smoothing a row, and secondly,

⁴¹ SC Kumbhakar, CAK Lovell Stochastic frontier analysis // Cambridge university press 2003

similar coefficients often are target for banks. Another correcting (normalizing) transformation has been conducted related to cumulative expenses, the prices of capital and funds by cost of a unit of labor. This restriction is imposed for the purpose of elimination of a heteroskedasticity in the model. As there isn't appropriate data for cost of unit of labor for each bank, we, therefore, follow Hasan and Marton (2003) and use the ratio of labor costs to total assets as the best available proxy measure. The variable which is responsible for specification of bank on retail crediting answers recent trends in the sector. Including time interval in the model gives an idea of dependence of the explained variable from time and also can be interpreted as extent of influence of technological changes, and, finally, the index of bank allows to consider specific features of an object more precisely⁴².

Before starting analyzing, first our data has been prepared (stationarity of time series). It is easy to notice that the main disadvantage of translogarithmic model, as a rule, is the high correlation between the explaining variables. Our research hasn't become an exception since there is a high dependence in both groups of variables.

So, for elimination of a problem of multicollinearity between parameters of model, we resort to a method of the main component. This approach implies reduction of dimension of a matrix of the explaining variables so that only significant observations are considered, while the others are rejected and become a part of a random error. To say differently, the objective of PCA is to find unit-length linear combinations of the variables with the greatest variance. The first principal component has maximal overall variance. The second principal component has

42 SC Kumbhakar, CAK Lovell Stochastic frontier analysis // Cambridge university press 2003

maximal variance among all unit length linear combinations that are uncorrelated to the first principal component, and etc. The last principal component has the smallest variance among all unit length linear combinations of the variables. All principal components combined contain the same information as the original variables, but the important information is partitioned over the components in a particular way. So, as a result, filtering only "main", the model doesn't lose the explaining force and after the above described procedure we receive uncorrelated linear combinations of the initial explaining variables:

$$\ln(\text{TC/pl})_{it} = b_0 + b_1 * f_{it} + b_2 * f_{2it} + b_3 * z_{it} + b_4 * \text{retail}_{it} + b_5 * t + b_6 * id + u_{it} + v_{it},$$

SFA assessment was carried out through Stata Statistical Package. As a result we have λ inefficiency "alert". In our case, $\lambda = 1.38619$, which means that although there is a certain level of inefficiency, but it is minimized and the deviation is mainly conditioned by random noise.

The quality of the received model and its adequacy is quite high, about which can be judged by high value of statistics of Wald as well as logical signs of coefficients before parameters of model (it is about the variables which are responsible for parameters of the prices of resources, release of bank and the fixed bank variables).

Influence of banks' specialization on retail is shown as negative. The logic before it is as follows: the bias of banks towards retail crediting promotes reduction of cumulative expenses.

Time factor, in case of Armenia, negatively affects the activity of banks for the following reasons:

- The 2014 international policies, sanctions against Russian economy considerably impacted the financial economic system of RA, because of strong interconnection because these 2 countries.

- In 2015 the Central Bank of Armenia made a decision to increase the minimum capital threshold of banks from 5 to 30 billion Armenian dram from 2017, which, in its turn leads to total cost increase and efficiency decrease (since the banks were concentrated not on profitability, but rather to provide the minimum size).

Table 2. Assessment of relative efficiency of Armenian commercial banks by SFA

Commercial Banks	2010	2011	2012	2013	2014	2015	2016
ACBA	0,873	0,896	0,914	0,930	0,943	0,954	0,962
Ameria bank	0,820	0,852	0,878	0,900	0,918	0,933	0,946
Anelik bank	0,816	0,720	0,767	0,806	0,840	0,868	0,892
Araratbank	0,832	0,862	0,886	0,907	0,924	0,938	0,949
Artsakhbank	0,804	0,788	0,713	0,777	0,801	0,836	0,865
Ardshinbank	0,819	0,898	0,877	0,899	0,917	0,932	0,945
Armbusinessbank	0,826	0,856	0,882	0,854	0,941	0,935	0,947
Armeconombank	0,958	0,934	0,946	0,956	0,964	0,971	0,976
Armswissbank	0,681	0,733	0,778	0,816	0,848	0,875	0,898
Biblosbank	0,589	0,652	0,707	0,755	0,797	0,832	0,862
Converse	0,955	0,929	0,942	0,953	0,962	0,969	0,975
Evocabank	0,525	0,593	0,655	0,710	0,758	0,791	0,834
HSBC	0,802	0,836	0,865	0,889	0,909	0,926	0,939
Inecobank	0,484	0,556	0,622	0,681	0,733	0,648	0,816
Mellatbank	0,953	0,962	0,969	0,975	0,980	0,983	0,987
Unibank	0,883	0,904	0,922	0,936	0,948	0,958	0,965
VTB	0,717	0,763	0,804	0,838	0,866	0,890	0,910

When we estimate efficiency using SFA, the relative efficiency of Ararat, ArmEconom and Converse banks are 93.8%, 97.1% and 96.9% in 2015, which means that Ararat, ArmEconom and Converse banks should decrease their costs, accordingly, by 6.2%, 2.9%, 3.1% so that their activities are considered effective.

In general, we can say that Armenian commercial banks have been operating quite effectively in recent years. In this

period the efficiency of Armenian banking system has grown, despite small but stable rates.





Chart3. Efficiency Assessments of Armenian Bankin System, according to SFA method

Comparison of DEA and SFA

To compare scores obtained by the two approaches, Armenian commercial banks are classified according to reduction of efficiency.

The results are very diversable. Some banks are characterized by a high efficiency score in the case of SFA, at the same time their efficiency scores are relatively low in the case of DEA. But other banks' relative scores coincide in the case of two approaches. It is clear that these are different approaches which are based on different assumptions, and in each case we used different outputs and inputs⁴³. So, the results of assessment different.

43 L Hjalmarsson, SC Kumbhakar, A Heshmati DEA, DFA and SFA: a comparison // Journal of Productivity Analysis 7 (2-3)






Chart 4. Classification of Commercial Banks

Conclusion

Efficiency of Armenian commercial banks during 2010-2016, when the efficiency of commercial banks is examined in terms of revenue/profit management, is high and relatively stable. Relative efficiency of banks changes from 75 to 93%. Therefore, there is no reason to worry about those who want to invest in a commercial bank, as well as do not need to worry about buying financial instruments issued by commercial banks.

The results of this survey clearly show that Armenian commercial banks operate quite efficiently, and effectively manage their expenses and revenues. The efficiency analysis of commercial banks of Armenia shows that the main factor promoting increase of efficiency is the share of retail loans in the loan portfolio, its growth reduces the gross expenses of the bank, thereby contributing to the increase of efficiency of the activity. And as for bank's resources, non-interest expenses have a negative impact on the efficiency of the banking system, so banks should manage non-interest expenses more efficiently.

Literature

1. B. Vujcic, I. Jemric - "Efficiency of banks in transition", D.E.C. , 2001
2. F. Kardiyen, H. Orkcü - "The Comparison of Principal Component Analysis and Data Envelopment Analysis in Ranking of Decision Making Units", G.U. Journal of Science, 2006, pp. 127-133
3. J. Hughes, L. Mester - "Efficiency in Banking: Theory, Practice, and Evidence", 2008
4. L Hjalmarsson, SC Kumbhakar, A Heshmati DEA, DFA and SFA: a comparison // Journal of Productivity Analysis 7 (2-3), 303-327
5. SC Kumbhakar, CAK Lovell Stochastic frontier analysis // Cambridge university press 2003
6. Tahir - "Evaluating Efficiency of Malaysian Banks"
7. Yiwei Fang – Iftekhar Hasan – Katherin Marton. Bank efficiency in transition economies: recent evidence from South-Eastern Europe. // Bank of Finland Research discussion papers. 2011.

8. www.ameriabank.am, <http://www.ardshinbank.am/>,
www.acba.am, <http://prive.unibank.am/>, <http://www.aeb.am/am/>,
<http://www.byblosbankarmenia.am/>, www.conversebank.am/hy/,
www.araratbank.am/home.html, www.evocabank.am/home.html,
<http://www.hsbc.am/1/2/am/hy/>,
<http://www.armbusinessbank.am/>, <http://www.vtb.am/>,
<http://www.artsakhbank.com/>, <http://www.inecobank.am/hy/>,
<http://www.mellatbank.am/>, <http://www.anelik.am/>,
<http://www.armswissbank.am/>

Մելս Սահակյան

«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն»,
ԵՊՀ, ֆ.-մ.գ.թ., պրոֆեսոր

Աննա Բաղդասարյան

ԵՊՀ, Տնտեսագիտության մագիստրոս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

*Հիմնաբառեր – արդյունավետություն, բանկային համակարգ,
առևտրային բանկեր, DEA, SFA, մասնագիտացում:*

Վերջին տարիներին արդյունավետ բանկային համակարգի ազդեցությունը տնտեսության վրա ինտենսիվորեն ուսումնասիրվել է շատ երկրներում: Հողվածում փորձել է արվել գնահատել Հայաստանի բանկային համակարգի արդյունավետությունը: Բանկային համակարգը ուսումնասիրվել է 2010-2016 թվականներին, մինչև առևտրային բանկերի կապիտալացման աստիճանի բարձրացումը: Ոչ պարամետրիկ

(տվյալների գնման վերլուծություն) և պարամետրիկ (ստոխաստիկ սահմանային վերլուծության) մոդելների կիրառմամբ գնահատվել է ՀՀ առևտրային բանկերի գործունեությունը՝ արդյունավետության տեսանկյունից: Առևտրային 17 բանկերի պաշտոնական տվյալների հիման վրա արդյունավետության գնահատումը թույլ է տալիս ենթադրել, որ ՀՀ առևտրային բանկերը բնութագրվում են բավականին բարձր և կայուն արդյունավետությամբ: Նաև ուժեղ և կայուն հարաբերություններ են բացահայտվել բանկային գործունեության արդյունավետության՝ և դիտարկվող մուտքային ու ելքային արդյունքների միջև:

Мелс Саакян

‘Международный Центр по Обучению Бухгалтерии’,
к.ф.-м.н., профессор ЕГУ

Анна Багдасарян

ЕГУ, Магистр экономики

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ В АРМЕНИИ

Ключевые слова – *эффективность, банковская система, коммерческие банки, DEA, SFA, специализация.*

В последние годы влияние эффективной деятельности банковской системы на экономику интенсивно изучалось во многих странах. В статье предпринято попытка оценить эффективность деятельности банковской системы Армении. С этой целью, банковская система РА изучана в период 2010-2016

гг, до уровня достижения большой степени капитализации коммерческих банков. Используя непараметрические и параметрические модели, коммерческие банки Армении были оценены с точки зрения эффективности. Исходя из официальных данных 17 коммерческих банков, оценка эффективности позволяет предположить, что деятельность коммерческих банков Армении характеризуется достаточно высокой и устойчивой эффективностью. Также выявлены сильные и слабые отношения между эффективностью банковской деятельности, и входящих-исходящих параметров использованных моделей.

*Ներկայացվել է՝ 6.04.2018 թ.
Ընդունվել է անադրույթի՝ 18.04.2018 թ.*

Սոնա Բալոյան

«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն»,
տնտեսագիտության մագիստրոս

Արման Ասրյան

Ցինխուայի համալսարան, մագիստրոս

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՐՓՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Հիմնաբառեր – Տվյալների Պարփական Վերլուծություն, արդյունավետ գործունեության եզրագիծ, համասեռ որոշում կայացնող միավոր, Պարետո-Կուլմանսի արդյունավետության սկզբունք, ֆինանսական գործակից, ֆինանսական հաշվետվություն, կորպորատիվ գործունեություն

Ներածություն: Ժամանակակից աշխարհում՝ առեվտրային բուռն գործունեությամբ և բարձր մրցակցային մակարդակով բնութագրվող տնտեսական միջավայրի պայմաններում աներկբա է կազմակերպություններում գործունեության գնահատման համակարգի գոյության անհրաժեշտությունը: Այդ կարիքն այնքան ակնհայտ է, որ կազմակերպության ներսում նման համակարգի բացակայությունը դիտվում է որպես անառողջության ախտանիշ: Գործունեության գնահատումը կազմակերպություններում ընկալվում է որպես անհրաժեշտ քայլ ինքնագնահատման մեթոդներ ձևավորելու և գործունեության իրականացման պատասխանատվությունը մեծացնելու տեսանկյունից: Որոշ հետազոտողներ գործունեության գնահատումը կապում են, այսպես կոչված, պա-

տասխանատվության շարժման հետ. նրանք հավատում են, որ գործունեության գնահատումը կազմակերպության կողմից պատասխանատու մոտեցում որդեգրելու էական չափանիշ է: Կորպորատիվ գործունեության գնահատումն, իր հերթին, հիմնված է որոշ գործակիցների վրա: Վերջիններս ուղենիշներ են հանդիսանում կազմակերպության համար՝ մատնանշելով, թե *որտեղ է այն ներկայում* և *ինչ դիրքում պետք է գտնվի ապագայում*: Կազմակերպությունների գործունեության գնահատումը հիմք է հանդիսանում ապագա ճշգրիտ որոշումների համար, որոնք վերաբերում են ներդրումներին, զարգացման ուղղությանը, գործունեության կառավարմանը և վերահսկմանը:

Ֆինանսական գնահատումները՝ հիմնված ֆինանսական հաշվետվությունների վրա, կազմակերպությունների գործունեության գնահատման ամենահին և, միաժամանակ, ամենաառանցքային մոտեցումներից են: Ֆինանսական վերլուծություններն արժեքավոր տեղեկություններ են տրամադրում կազմակերպությունների գործընթացների և դրանց կոռելյացիաների, կազմակերպության որակների և կորպորատիվ ուժեղ/թույլ կողմերի, կազմակերպության ներկա ֆինանսական դիրքի վերաբերյալ: Ֆինանսական վերլուծություններ իրականացնելիս կիրառվող չորս հիմնական գործիքներն են հորիզոնական, ուղղահայաց, գործընթացային և գործակիցների վերլուծությունները:

Կորպորատիվ գործունեության վերլուծությունը, շնորհիվ տնտեսական տարբեր պարբերաշրջաններում կազմակերպության ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ պարունակելու, օժանդակում է նաև անցյալի ու ներկայի այն փաստերի ճանաչմանը, որոնք էական են կազմակերպության ապագա դիրքավորման տեսանկյունից: Գործունեության գնահատումը պետք է իրակա-

նացվի, առաջին հերթին, որպես նպատակ ունենալով մենեջերներին որոշումների կայացման խնդրում օգտակար տեղեկություններ մատուցելը և կազմակերպության ապագա գործունեության համար որոշակի ուղենիշներ սահմանելը:

Աշխատանքի Հիմնական Նպատակը: Աշխատանքի առանցքային նպատակը ֆինանսական հաշվետվություններում առկա տվյալների հիման վրա կազմակերպությունների կորպորատիվ գործունեության գնահատման մոդելի ձևավորումն է՝ հիմք ընդունելով տվյալների պարփակման վերլուծության եղանակը: Ստեղծվելիք մոդելը թույլ կտա կազմակերպությանը համեմատական եզրեր անցկացնել իր և մրցակիցների միջև՝ հիմք ընդունելով արդյունավետության և արդյունքայնության չափանիշները, ինչպես նաև մենեջերներին կողողորդի կազմակերպության ապագայի վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում:

Հետազոտության Մեթոդոլոգիան: Մաթեմատիկական Մոդելը: DEA (տվյալների պարփակման վերլուծության) եղանակը պատկանում է համասեռ տնտեսվարող սուբյեկտների (որոնք օգտագործում են միատեսակ ռեսուրսներ և արտադրում միատեսակ արդյունքներ) գործունեության համեմատական արդյունավետության գնահատման էմպիրիկ եղանակների թվին, որը հիմնված է գծային ծրագրավորման վրա⁴⁴: Որոշում կայացնող յուրաքանչյուր սուբյեկտ գնահատվում է ռեսուրսները (մուտքերը) արդյունքներ (ելքեր) դարձնելու իր կարողությունների տեսանկյունից, յուրաքանչյուր սուբյեկտի գործունեության արդյունավետությունը համեմատվում է նմանատիպ սուբյեկտների գործունեության արդյունքների և լավագույն փորձի հետ: DEA եղանակը չի պահանջում ռեսուրսների և արդյունքների միջև ֆունկցիոնալ կապերի բացահայտ ձևակերպում, ինչպես նաև դրանց չա-

⁴⁴ St' u Charnes, A., Cooper, W.W., Rodhes, E. (1978). Measuring the Efficiency of Decision Making Unit. European J. Oper. Res. 2429-444

փողոնակությունների համադրելիություն: DEA եղանակը յուրաքանչյուր որոշում կայացնող միավորի (ՈԿՄ) համար լուծում է առանձին խնդիր, բացահայտում է անարդյունավետությունների աղբյուրները (ռեսուրսներ, արդյունքներ) և չափում յուրաքանչյուրի կշիռն ընդհանուր անարդյունավետության մեջ:

Համեմատական արդյունավետության գնահատման DEA եղանակը թույլ է տալիս գտնելու այն լավագույն եզրագիծը, որին կարելի է հասնել տվյալ միջավայրում որոշակի ռեսուրսներ տնօրինելու դեպքում, և որոշում կայացնող միավորները գնահատվում են այդ եզրագծի հետ համեմատության մեջ⁴⁵:

Նկարագրենք DEA եղանակի գործնական մոդելներից մեկը: Դիտարկենք n տնտեսվարող սուբյեկտներ: Դիցուք դիտարկվող ժամանակահատվածում j -րդ ($j=1,2,\dots,n$) սուբյեկտն օգտագործել է i -րդ ռեսուրսից ($i=1,\dots,m$) x_{ij} միավոր և թողարկել է r -րդ տեսակի ($r=1,\dots,l$) y_{rj} քանակով արդյունք ($x_{ij} \geq 0, y_{rj} \geq 0$): Յուրաքանչյուր j -րդ

($j=1,\dots,n$) սուբյեկտի համար կառուցվում է $\sum_{r=1}^l u_r y_{rj}$ «կշռված

արդյունքը» և $\sum_{i=1}^m v_i x_{ij}$ «կշռված ռեսուրսը», որտեղ u_r

($r=1,\dots,l$) և v_i ($i=1,\dots,m$) կշռային բազմապատկիչներ են, որոնք պետք է որոշվեն:

⁴⁵ Տե՛ս Մ. Սահակյան, Գ. Ղուկասյան (2012), Ուսումնական հաստատությունների գործունեության համեմատական արդյունավետության գնահատում, Ֆինանսներ և էկոնոմիկա, #7 (145), էջ 30-32

j_0 սուբյեկտի գործունեության համեմատական արդյունավետության գնահատումը ձևակերպվում է հետևյալ կոտորակագծային ծրագրավորման խնդրի տեսքով՝

$$h_{j_0}(u, v) = \frac{\sum_{r=1}^l u_r y_{rj_0}}{\sum_{i=1}^m v_i x_{ij_0}} \rightarrow \max \quad (1)$$

$$\frac{\sum_{r=1}^l u_r y_{rj}}{\sum_{i=1}^m v_i x_{ij}} \leq 1, \quad j = 1, \dots, n \quad (2)$$

$$u_r, v_i \geq 0, \quad r = 1, \dots, l; \quad i = 1, \dots, m \quad (3)$$

Նպատակային ֆունկցիայի (որը j_0 -րդ սուբյեկտի կողմից միավոր «կշռված ռեսուրսով» թողարկված «կշռված արդյունքի» քանակն է) օպտիմալ h_0^* արժեքը բավարարում է $0 \leq h_0^* \leq 1$ պայմանին և մեկնաբանվում է որպես գործունեության համեմատական արդյունավետության գնահատական: $h_0^* = 1$ արժեքը համապատասխանում է լրիվ արդյունավետության, երբ ռեսուրսներն օգտագործվում են առավելագույն արդյունավետությամբ, իսկ $h_0^* < 1$ արժեքը մատնանշում է, որ սուբյեկտի գործունեությունում առկա է անարդյունավետություն: Խնդրի լուծման արդյունքում ստացվող (u_r^*, v_i^*) օպտիմալ արժեքները u_r և v_i բազմապատկիչների այն լավագույն արժեքներն են, որոնցով ստեղծվում է $Y_{j_0} = \sum_{r=1}^l u_r^* y_{rj_0}$ օպտիմալ արդյունքը՝ օգտագործելով $X_{j_0} = \sum_{i=1}^m v_i^* x_{ij_0}$ ռեսուրսները:

Որոշ ձևափոխությունների շնորհիվ խնդիրը բերվում է հետևյալ գծային ծրագրավորման խնդրին՝

$$z^* = \max z = \sum_{r=1}^l u_r^* y_{rj_0},$$

$$\sum_{r=1}^l u_r y_{rj_0} - \sum_{i=1}^m v_i x_{ij} \leq 0, \quad j = 1, \dots, n,$$

$$(4) \quad \sum_{i=1}^m v_i x_{ij_0} = 1$$

$$u_r, v_i \geq 0, \quad r = 1, \dots, l; \quad i = 1, \dots, m$$

Ակնհայտ է այն, որ

$$h_{j_0}^* = z^* = \sum_{r=1}^l u_r^* y_{rj_0}$$

Սա բերում է Պարետո-Կուպմանսի արդյունավետության սկզբունքին, համաձայն որի, որոշում կայացնող միավորի կողմից լրիվ արդյունավետություն ձեռք է բերվում այն և միայն այն դեպքում, երբ ռեսուրսներից կամ արդյունքներից ոչ մեկը չի կարող բարելավվել՝ առանց վատացնելու որոշ այլ ռեսուրսներ կամ արդյունքներ:

Մոդելի երկակին է.

$$\begin{aligned} \min_{\theta, \lambda} \theta \\ - y_i + Y\lambda \geq 0 \\ \theta x_i - X\lambda \geq 0 \\ \lambda \geq 0 \end{aligned} \quad (5)$$

Երկակիության թեորեմի համաձայն՝ $z^* = \theta^*$: Լուծելով երկակի խնդիրը՝ կստանանք յուրաքանչյուր ռեսուրսի և արդյունքի ազդեցության չափը գնահատվող ՈԿՄ անարդյունավետության վրա:

Տվյալների Հավաքագրումը ու Մշակումը: Մեր խնդրում որոշում կայացնող միավորները ՀՀ բանկերն են: Դիտարկ-

ված է ՀՀ բանկերի գործունեությունը 2016 թվականի առաջին և երկրորդ եռամսյակներում⁴⁶:

Մուտքային փոփոխականները տարանջատված են երկու՝ իրացվելիության և կապիտալի ցուցանիշների խմբերի: Իրացվելիության ցուցանիշի խմբում ներառված են *Վարկ/Ակտիվ* և *Տնտեսական նորմատիվ Ն12* (բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ) գործակիցները: Կապիտալի ցուցանիշի խմբում ներառված են *Կապիտալի համարժեքության* (ընդհանուր կապիտալ /ընդհանուր ակտիվ) և *Տնտեսական նորմատիվ Ն1* (ընդհանուր կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ) գործակիցները:

Ելքային փոփոխականներն, իրենց հերթին, խմբավորված են միայն մեկ՝ շահութաբերության ցուցանիշի խմբում: Այստեղ ընդգրկվել են հետևյալ գործակիցները՝ *ROA-Ակտիվների միջին եկամտաբերություն* (հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ ավարտված վերջին 12 ամիսների զուտ շահույթը բաժանելով ակտիվների՝ նշված 12 ամիսների համար հաշվարկված միջին մեծությանը), *ROE-Կապիտալի միջին եկամտաբերություն* (հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ ավարտված վերջին 12 ամիսների զուտ շահույթը բաժանելով կապիտալի՝ նշված 12 ամիսների համար հաշվարկված միջին մեծությանը), *Շահույթի մարժա* (հաշվարկվում է հաշվետու ժամանակահատվածի զուտ շահույթը բաժանելով նույն ժամանակահատվածի ընդհանուր եկամտին), *Ծախսեր/Եկամուտ* հարաբերակցություն, *NIM-Ջուտ տոկոսային մարժա* (հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ ավարտված վերջին 12 ամիսների զուտ տոկոսային եկամուտը բաժանելով տոկոսային եկամուտ ապահովող ակտիվների՝ նշված 12 ամիսների համար հաշվարկված միջին մեծությանը): Կոնսոլիդացման նպատակով

⁴⁶ Տե՛ս Քեյ Փի Էմ Ջի, Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն, Երևան, 2016 թ. Մայիս, 44 էջ:

յուրաքանչյուր խմբի գործակիցներին փորձագետի կողմից տրվել են պայմանական կշիռներ (Աղյուսակ 1):

Տվյալների մշակման առաջին քայլում հաշվարկված է վերոնշյալ գործակիցների՝ երկու եռամսյակների արժեքների միջինը: Այնուհետև, համաձայն փորձագետի կողմից ընտրված կշիռների (Աղյուսակ 1), յուրաքանչյուր խմբի գործակիցները կոնսոլիդացվել են մեկ ընդհանուր ցուցանիշի մեջ (օրինակ՝ իրացվելիության կշռված գործակիցը հաշվարկվում է որպես Վարկ/Ակտիվ գործակցի և Տնտեսական նորմատիվ Ն12-ի կշռված միջին):

Աղյուսակ 1


Ֆինանսական գործակիցների պայմանական կշիռներ

		Կշիռ	
Կապիտալի կշռված գործակից	Կապիտալի համարժեքության գործակից	0.4	Մուտք I
	Տնտեսական նորմատիվ Ն1	0.6	
	Ընդհանուր	1	
Իրացվելիության կշռված գործակից	Վարկ/Ակտիվ	0.4	Մուտք II
	Տնտեսական նորմատիվ Ն12	0.6	
	Ընդհանուր	1	
Շահութաբերության կշռված գործակից	ROA	0.2	Ելք
	ROE	0.3	
	Շահույթի մարձա	0.2	
	Ճախտեր/Եկամուտ	0.2	
	ՉՏՄ	0.1	
	Ընդհանուր	1	

Գծապատկեր 2-ում նկարագրված է բանկերի արդյունավետության գնահատման վերջնական մոդելը: Այսպիսով,


որպես մուտքեր վերցվում են իրացվելության և կապիտալի կշռված (կոնսոլիդացված) ցուցանիշները, իսկ որպես ելք՝ շահութաբերության համապատասխան ցուցանիշը:

Կիրառելով DEA եղանակը՝ բանկերի գործունեության համար ստացվել են համեմատական արդյունավետության գնահատականները (Աղյուսակ 2):



Գծապատկեր 1. Վերջնական մոդել

Գծապատկեր 2. ՀՀ բանկերի գործունեությունների արդյունավետ գործունեության եզրագիծ



Աղյուսակ 2. Համեմատական արդյունավետության գնահատականներ

Համեմատական արդյունավետության գնահատականների հիման վրա կառուցվել է արդյունավետ գործունեության ընդհանրական եզրագիծը 2016 թ. առաջին և երկրորդ եռամսյակների համար (Գծապատկեր 1):

Աղյուսակ 2-ի z սյունակը (արդյունավետության ցուցանիշներ, որոնց հիման վրա էլ կառուցվել է ռադար գծապատկերը) ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում առավել արդյունավետ են գործել ՋՀԲ-ն, ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԸ և Մելլաթ Բանկը (անշուշտ, այստեղ պետք է հաշվի առնել նաև ՀՀ Կենտրոնական բանկի՝ բանկերի նկատմամբ ունեցած պահանջները նորմատիվների վերաբերյալ): Ամենաբարձր համեմատական արդյունավետու-

	z	u1	v1	v2
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ	0.73714	0.049639	0.028416	0.011311
Սմերիաբանկ	0.820511	0.054902	0.064725	0
ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ	0.350511	0.058418	0.068871	0
Սոֆիսթիքանկ-Գազպրոմբանկի խումբ	0.480053	0.04779	0.000187	0.023453
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	0.759373	0.046846	0.026817	0.010675
Արդշինբանկ	0.927672	0.069075	0.081433	0
ԱրմՍվիսԲանկ	0.691273	0.044383	0.000174	0.021781
Արցախբանկ	0.981719	0.055184	0.000216	0.027081
Բիբլոս Բանկ Արմենիա	0.983187	0.054125	0.000212	0.026561
ԲՏԱ Բանկ	0.711132	0.061331	0.00024	0.030098
Զարգացման Հայկական Բանկ	1	0.05469	0.031307	0.012462
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան	0.740651	0.048172	0.027577	0.010977
Ինեկոբանկ	0.791955	0.048172	0.027577	0.010977
Կոնվերս Բանկ	0.942838	0.057861	0.068213	0
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ	0.981934	0.074276	0.087566	0
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	1	0.050935	0.029158	0.011606
Մելլաթ Բանկ	1	0.055172	0.000216	0.027075
ՅՈՒՆԻԲԱՆԿ	0.796687	0.059567	0.070225	0
Պրոմեթեյ Բանկ	0.771104	0.05714	0.000224	0.028041
ՎՏԲ-Հայաստան Բանկ	0.77457	0.063396	0.074738	0

թյունն ունեցող բանկերի վերոնշյալ եղակին իրենց ցուցանիշներով փոքր-ինչ զիջում են Արցախբանկը, Բիբլոս Բանկ Արմենիան, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԸ և Կոնվերս Բանկը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն աշխատանքում ներկայացված է կազմակերպությունների կորպորատիվ գործունեության գնահատման մոդել՝ հիմնված տվյալների պարփակման վերլուծության եղանակի վրա, որն օգտագործվում է ՀՀ առևտրային բանկերի գործունեության գնահատման խնդրում. որպես մուտքեր վերցվում են բանկերի իրացվելիության և կապիտալի, իսկ որպես ելք՝ շահութաբերության կոնսոլիդացված (կշռված) ցուցանիշները: Սոդելի հիմքում ընտրված է ռեսուրսային (մուտքային) կողմնորոշմամբ CCR մոդելը: Սոդելի կիրառման արդյունքում դիտարկվող 20 բանկերից 3-ը ճանաչվել են արդյունավետ, մնացածները՝ համեմատաբար ոչ արդյունավետ:

Sona Baloyan

'International Accountancy Training Centre', Master Economics

Arman Asryan

Tsinghua University, Master Course Student

APPLICATION OF DATA ENVELOPMENT ANALYSIS METHOD TO THE PROBLEM OF EVALUATING THE CORPORATE PERFORMANCE OF COMPANIES

Keywords – *DEA (Data Envelopment Analysis), homogeneous decision making unit, Pareto-Koopmans efficiency, financial ratios, financial statement, corporate performance*

The present study has developed a model to evaluate corporate performance through data envelopment analysis and has examined the model on a group of banks. To do so, the means of financial performance ratios for a two-quarter period are collected: liquidity and leverage ratios are employed as input indices of the model and profitability ratios as output indices of the model. CCR input oriented model was used to evaluate the comparative efficiencies of banks. Of the 20 banks employed in this research, 3 were found efficient while the remaining 17 were regarded as comparatively inefficient.

Сона Балоян

‘Международный Центр по Обучению Бухгалтерии’,

Магистр экономики

Арман Асрян

Университет Цинхуа, магистрант

ПРИМЕНЕНИЕ МЕТОДА АНАЛИЗА СРЕДЫ ФУНКЦИОНИРОВАНИЯ ДЛЯ РЕШЕНИЯ ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТИ КОРПОРАТИВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ КОМПАНИЙ

Ключевые слова – АСФ (Анализ среды функционирования), однородная единица принятия решения, эффективность Парето-Коопманса, финансовые показатели, финансовый отчет, корпоративная деятельность

В настоящем исследовании разработана модель для оценки эффективности работы компании посредством анализа среды функционирования, и модель была применена в группе банков. Для этого рассчитываются средние коэффициенты финансовых показателей за двухквартальный период: коэффициенты ликвидности и капитала используются в качестве входных индексов модели и коэффициенты

рентабельности в качестве выходных индексов модели. Для оценки сравнительной эффективности банков была использована модель CCR, ориентированная на входы. Из 20 банков, принимавших участие в этом исследовании, 3 были признаны эффективными, а остальные 17 - сравнительно неэффективными.

*Ներկայացվել է՝ 13.04.2018 թ.
Ընդունվել է սպազրության՝ 18.04.2018 թ.*

Անի Առաքելյան

«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն»,
Որակի ապահովման կենտրոնի պատասխանատու

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Հիմնաբառեր –կրթության շուկա, կրթական ծառայությունների շահառուներ, մասնագիտական կրթական ծրագրեր, կրթության որակ:

ԲՈՒՀ-ական կրթությունը ներկայումս գտնվում է ւրցակցային դաշտում: Այս առումով, որակի ներքին ապահովման գործընթացի արդյունավետ կառավարումը բուհերի ւրցունակության ապահովման առաջնահերթ գրավականներից է կրթության շուկայում: Այսօր արդեն, կրթական ծառայությունների մատուցումը համալսարանական միջավայրում պահանջում է շահառուների պահանջմունքների և սպասելիքների լիարժեք բավարարում: Եթե տարիներ առաջ ուսանողության զգալի մասը ձգտում էր ավարտական դիպլոմի

ձեռքբերմանը և բարձրագույն կրթությամբ շրջանավարտները համեմատաբար հեշտ էին աշխատանք գտնում, ապա, հիմա արդեն, աշխատաշուկայի պահանջների դինամիկ փոփոխությունների պայմաններում, ուսանողությունը, առաջին հերթին, շահագրգռված է մասնագիտական մրցունակ կարողությունների և հմտությունների ձեռքբերումով, որով գնահատելի է դառնում գործատուների կողմից:⁴⁷

Բնականաբար, նման իրավիճակում, բուհերն, իրենց հերթին, շահագրգիռ են դառնում մատուցվող կրթական որակյալ ծառայությունների մատուցման որակի գծով՝ ձգտելով բավարարելու թե՛ շրջանավարտների և թե՛ գործատուների պահանջունքները: Սակայն, դրան զուգահեռ, որակյալ ծառայությունների մատուցումով համալսարանները ձգտում են նաև մրցունակ դիրքեր գրավել կրթության ներքին և, անգամ, միջազգային շուկաներում:

Այդ իսկ պատճառով, որակի ներքին ապահովումը ներկայումս հայտնվել է բուհերի կառավարման կիզակետում և ակադեմիական, կազմակերպչական և անգամ ֆինանսական կառավարման նոր պահանջներ է ներկայացնում, որպեսզի կրթօջախը դառնա գրավիչ իր շահառուների համար՝ լինեն դրանք ուսանողներ, գործատուներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմ, վերահսկիչ մարմիններ, թե գործընկեր համագործակցող կազմակերպություններ:

Մասնագիտական բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացի կազմակերպման նպատակը կրթագիտական գործունեության թույլ և ուժեղ կողմերի բացահայտումն է, որն իրականացվում է հստակ գործիքակազմի կիրառմամբ: Կիրառվող գործիքները բխում են բուհում գործող որակի ապահովման հայեցակարգից և միտված են գնահատելու կազմակերպության առաքելությունից բխող ռազմա-

⁴⁷ Ն. Խաչատրյան, Բարձրագույն կրթության տնտեսագիտություն, հեղ. հրատ., Եր. 2010, էջ 8:

վարական ծրագրի առաջնահերթությամբ իրականացվող գործընթացների որակը և դրա հիման վրա բարելավման նոր քայլեր մշակելուն:⁴⁸

Մրցակցային կրթական համակարգում կարևորվում են մասնագիտական կրթական ծրագրերով (ՄԿԾ) ուսումնառության ելքային հստակ ու միանգամայն չափելի արդյունքների մշակումը՝ որակավորումների ազգային շրջանակի և դուբլինյան բնութագրիչների հաշվառումով, ուսանողակենտրոն միջավայրի ապահովումը, ուսումնառության ելքային արդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանության մշակումն ու կիրառումը, որոնք իրենց հերթին վերանայում են որակի ապահովման գործիքակազմը (տե՛ս գծապատկեր 1):

Գնահատման գործիքակազմը մշակելիս բուհի որակի ապահովման ստորաբաժանումը պետք է առաջնորդվի հետևյալ սկզբունքներով.

- Որակի ապահովման գործիքները կազմվում են նպատակային ձևով, այսինքն՝ այնպես, որ հնարավորություն են ընձեռում խորությամբ պարզաբանել այս կամ այն գործընթացի որակն ամբողջությամբ և որքանով է այն բխում որակի ապահովման հայեցակարգի պահանջներից:
- Գործիքների նկատելի մասը միտվում են հաշվետվողականություն ապահովելուն, սակայն հնարավորություն են ընձեռում նաև խորքային վերլուծություն կատարելու համար:
- Հարցաթերթիկներում նշված հարցադրումները ձևակերպվում են հնարավորինս հստակ, հասկանալի, որպեսզի լրացնողը թյուրիմացության մեջ չհայտնվի և նրանց պատասխաններն էլ երկդիմի չլինեն: Շատ դեպքերում հարցաթերթիկում կան ծանոթագրություններ:


⁴⁸ Լ. Չաքարյան, Որակի ապահովման ձեռնարկ, Եր. 2015, էջ 34:

- Հարցաշարերը կազմվում են սեղմ և լրացնողից մեծ ժամանակ չեն պահանջում: Նրանցում արտացոլվող տեղեկատվությամբ հնարավոր է դառնում լուծել նաև այլ շահակիցների կարիքները վերհանելու կամ կատարված աշխատանքի որակը գնահատելու խնդիրը:
- Գործիքները հավաստի, անկողմնակալ և թարմ նյութ են տրամադրում որակի ապահովման վարչությանը և հանձնաժողովներին վերլուծություն կատարելու, թույլ և ուժեղ կողմերը բացահայտելու, արտաքին հնարավորությունները հաշվառելու, հնարավոր վտանգները չեզոքացնելու կամ մեղմացնելու համար:⁴⁹

Որակի ապահովման գործիքների կիրառում, առաջին հերթին, թիրախավորվում է բուհի առաքելությունից բխող որակի ապահովման պահանջներին: Այսպես, բուհի զարգացման ռազմավարական ծրագրում հատուկ նշանակություն է տրվում որակյալ կրթության կազմակերպմանը՝ նպատակ ունենալով տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնելու ուսանողների բավարարվածության մակարդակը բուհում ստացած կրթությունից:⁵⁰

⁴⁹ Լ. Չաքարյան, Որակի ապահովման ձեռնարկ, Եր. 2015, էջ 28

⁵⁰ Երիցյան Ս, Ճուղուրյան Ա., Բուհիայի գործընթացի մարտահրավերները, «Էդիթ Պրինտ», Եր., 2012, էջ 56:



Գծապատկեր 1. Որակի ներքին ապահովման գործիքների կիրառման ուղղությունները և շրջանակը

Բարձրագույն մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման գործիքների կիրառման ուղղությունները և շրջանակը ներկայացված է գծապատկեր 1-ում, որտեղ կրթության որակի ներքին ապահովման գործիքակազմի կիրառումն, առաջին հերթին, գալիս է վերհանելու բուհի ռազմավարական ծրագրային դրույթներին նպաստող թույլ և ուժեղ գործոնները՝ այդ նպատակով կիրառելի դարձնելով ֆոկուս-խմբերը:

Ֆոկուս-խումբը տեղեկատվության ստացման որակական հետազոտության տեսակ է: Այս մեթոդը կիրառվում է շահակիցների դիրքորոշումների և կարծիքների բացահայտման, կարիքների վերհանման նպատակով: Ֆոկուս-խմբեր անցկացնելով հետամուտ են լինում գտնելու «ինչու» հարցի պատասխանը: Ցանկալի է, որ ֆոկուս-խումբ անցկացնելիս վարողի հետ լինի նաև օգնական:

Ֆոկուս-խմբի անցկացման առավելություններից է այն, որ հետազոտության այս մեթոդը առավել «տնտեսող» է. լրացուցիչ նյութական ռեսուրսների գործածման կարիք չկա: Այն հնարավորություն է տալիս խնայել ժամանակը, և, որ ոչ պակաս կարևոր է, որպես որակական հետազոտության տեսակ, ֆոկուս-խումբը հնարավորություն է տալիս ուղղակիորեն դիտարկելու թիրախային լսարանը:

Հարցախույզները նույնպես որակի ապահովման կարեվորագույն գործիք են: Դրանք, հիմնականում, արդյունավետ են աշխատում, երբ իրականացվում են ուսանողների և գործատուների շրջանում: Անանուն հարցաթերթիկները ուսանողներին հնարավորություն են ընձեռնում անկաշկանդ ներկայացնելու իրենց կարծիքը մատուցվող կրթական ծա-

ռայությունների որակի մասին: Իսկ գործատուների շրջանում իրականացվող հարցախույզը բացահայտում է շրջանավարտների մասնագիտական կարողությունների ու հմտությունների բացթողումները և աշխատաշուկայի ժամանակակից պահանջները:

«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական հիմնադրամը պարբերաբար գործատուների շրջանում իրականացնում է «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությամբ մագիստրատուրայի շրջանավարտների մասնագիտական հմտությունների և կարողությունների գնահատման հարցում: Ըստ այդմ, 2017թ. գործատուների շրջանում իրականացվել է գրավոր հարցում՝ պարզելու համար վերջիններիս կողմից «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի շրջանավարտներին տրված գնահատականը: Հարցմանը մասնակցել են հայաստանյան շուկայի ֆինանսական, աուդիտորական, գործարարական և այլ ոլորտների առաջատար 7 (յոթ) ընկերություններ՝ «Պեպսի-Կոլա Բոթլեր Ջերմուկ Ինթերնեյշնլ» ՍՊԸ, «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ, «Փի-Էյջ-Փի Փարթնրզ» ՓԲԸ, «Այթի Ռիփորթս» ՍՊԸ, «Մետեո Թի-Վի» Ընկերություն, «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ, «Գործ Բոլորին» կադրային գործակալությունը: Ըստ հարցմանը մասնակցած գործատուների՝ «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի շրջանավարտների ստացած մասնագիտական գիտելիքները համապատասխանում են աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին: Սակայն, ըստ գործատուների, եթե շրջանավարտներն աչքի են ընկնում տեսական գիտելիքների բարձր մակարդակով, աշխատանքային կազմակերպվածությամբ, ապա ցանկալի կլինի առավել շատ ժամանակ տրամադրել նաև գործնական գիտելիքների փոխանցմանը: Վերջիններս կարևորել են ապագայի

շարունակական և փոխշահավետ համագործակցությունը՝ բարձր գնահատելով «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի դերն ու ներուժը բարձրորակ մասնագետներ պատրաստելու գործում:

«ՀՈՒՄԿ» ԿՀ-ն ստեղծել է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու նպատակով:

Ըստ այդմ, մագիստրատուրայի 2016-2017 ուստարվա առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների շրջանում «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում կազմակերպվել է հարցում՝ պարզելու, թե որքանով են վերջիններս տեղեկացված այդ ծառայությունից և ինչ միջոցներ են հնարավոր ձեռնարկել էլ ավելի բարելավելու ուղղությամբ: Հարցաթերթիկը ներառում է երեք հարց՝ «այո», «ոչ» կամ «մասամբ» կարճ պատասխաններով: Հարցաթերթիկը լրացրել է ընդհանուր առմամբ 38 ուսանող: Առաջին հարցին՝ տեղեկացված եք արդյոք Ձեզ վերաբերող խորհրդատվական ծառայությունների մասին, հարցմանը մասնակցած ուսանողների 89,4 տոկոսը տվել է «այո» պատասխանը: Երկրորդ հարցին՝ ընդգրկված եք արդյոք լրացուցիչ խորհրդատվական ծառայություններում, ուսանողների 78,9 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ» պատասխանը: Երրորդ հարցին՝ բավարարված եք արդյոք կենտրոնում գործող խորհրդատվական ծառայություններից, ուսանողների 92,1 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ» պատասխանը:

Մեր ուսումնական հաստատությունն ապահովում է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր՝ շենք, համակարգչային լաբորատորիա, ուսումնական լսարաններ, գրա-

դարան, անհրաժեշտ մասնագիտական գրականություն: «ՀՈՒՄԿ» ԿՀ-ն, 2016-2017 ուստարվա առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների շրջանում անց է կացրել հարցում՝ պարզելու, թե որքանով են վերջիններս բավարարված այդ ծառայություններից և ինչ միջոցներ են հնարավոր ձեռնարկել էլ ավելի բարելավելու ուղղությամբ: Հարցաթերթիկը ներառում է վեց հարց՝ «այո», «ոչ» կամ «մասամբ» կարճ պատասխաններով: Հարցաթերթիկը լրացրել է ընդհանուր առմամբ 38 ուսանող: Առաջին հարցին՝ բավարարված եք արդյոք կենտրոնի շենքային պայմաններից, հարցմանը մասնակցած ուսանողների 97,3 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ», իսկ 2,6 տոկոսը տվել է «ոչ» պատասխանը: Երկրորդ հարցին՝ բավարարված եք արդյոք համակարգչային լաբորատորիայի ծրագրային ապահովվածությունից, ուսանողների 94,7 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ», իսկ 5,2 տոկոսը՝ «ոչ» պատասխանը: Երրորդ հարցին՝ բավարարված եք արդյոք ուսումնական լսարանների պայմաններից, ուսանողների 97,3 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ», 2,6 տոկոսը տվել է «ոչ» պատասխանը: Չորրորդ հարցին՝ բավարարված եք արդյոք կենտրոնի գրադարանի ծառայություններից, ուսանողների 97,3 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ», 2,6 տոկոսը՝ «ոչ» պատասխանը: Հինգերորդ հարցին՝ արդյոք կենտրոնի գրադարանը ձեզ ապահովում է անհրաժեշտ ուսումնական նյութերով և դասագրքերով՝ հարցմանը մասնակցած ուսանողների 100 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ», պատասխանը: Վեցերորդ հարցին՝ բավարարված եք արդյոք սանհանգույցների մաքրությունից՝ ուսանողների 89,4 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ», 10,5 տոկոսը՝ «ոչ» պատասխանը:

Հարցումներ են կատարվել նաև վարչական ծառայությունների մատուցման որակի գծով: Հարցաթերթիկը լրացրել է ընդհանուր առմամբ 38 ուսանող: Առաջին հարցին՝ տեղեկացված էք արդյոք Ձեզ վերաբերող վարչական ծառայությունների մասին, հարցմանը մասնակցած ուսանողների 92,1 տոկոսը տվել է «այո» պատասխանը: Երկրորդ հարցին՝ օգտվում էք արդյոք այդ ծառայություններից, ուսանողների 89,4 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ» պատասխանը: Երրորդ հարցին՝ Ձեր ուսումնառության ընթացքում ծագել են արդյոք խնդիրներ, ուսանողների 71 տոկոսը տվել է «ոչ» պատասխանը: Չորրորդ հարցին՝ բավարարված էք, արդյոք, կենտրոնի վարչական ծառայություններից, ուսանողների 100 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ» պատասխանը:

Փոխադարձ դասալսումները (տե՛ս գծապատկեր 1) հնարավորություն են ընձեռնում դասախոսներին տեսնելու և փոխանակելու առաջավոր փորձը, վերհանելու դասավանդման գործընթացի թերի կողմերը: Հատկապես, փոխադարձ դասալսումները որակի ապահովման արդյունավետ գործիք են ծառայում, երբ դրանց արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերում:

Լավագույնին ձգտելու միտումը նույնպես որակի ապահովման կարևորագույն գործիքներից է, որն իրականացվում է բենչմարքինգի օգնությամբ: Այս դեպքում, կրթական ներքին և արտաքին միջավայրի վերլուծության արդյունքում բացահայտվում է լավագույն փորձը, որի գծով սահմանվում են էտալոնային նշանդրեր (բենչմարք): Որակի ապահովման գործընթացում կիրառելով բենչմարքինգ, բուհը ձգտում է հա-

սանելի դառնալ այն նշաձողերին, որոնք մրցակցային են համարվում կրթական միջավայրում:⁵¹

Որակի ներքին ապահովման գործընթացում չափազանց կարևորվում է հաշվետվողականությունը կրթական ծառայությունների գործընթացում ընդգրկված ներքին և արտաքին շահառուների նկատմամբ:

Բուհի ներքին շահառուներն են հանդիսանում ուսանողությունը, պրոֆեսորադասախոսական անձնակազմը, վարչական անձնակազմը: Իսկ արտաքին շահառուներն են կրթօջախի հիմնադիրները, պետական լիազորված մարմինը՝ ի դեմս ՀՀ ԿԳ նախարարության, գործատուները, համագործակցող ՀՀ և միջազգային բուհերը, կազմակերպությունները, հասարակական կառույցները:

Շահակիցներն, ունենալով իրենց առանձնահատուկ պահանջունքները բուհի գիտակրթական գործունեության նկատմամբ, պետք է պարբերաբար հաշվետվություններ ստանան վերջինից և հետադարձ կապի արդյունավետ համակարգի առկայության պարագայում ձգտեն բարեփոխումների ծրագրային առաջարկներ ներկայացնել:

Հաշվետվողականությունը համակարգ է, որում ներդաշնակ գործում են հաշվետվությունների կազմման և ներկայացման ստորաբաժանումները, թիրախավորված տեղեկատվություն ներկայացնելով օգտագործողներին իրենց հետաքրքրող տեղեկատվան նյութերի վերաբերյալ՝ ապահովելով նաև հետադարձ կապ տեղեկատվությունը ներկայացնողների և օգտագործողների միջև:

⁵¹ Գ. Կիրակոսյան, Որակի ապահովման աուդիտը բուհերում, Եր. «Տեսետագետ», 2004, էջ 14:

Հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը կախված է ներքին և արտաքին շահառուների պահանջից և, որպես կանոն, այն իրականացվում է առնվազն տարին մեկ անգամ: Հաշվետվությունները, կրելով պարբերական բնույթ, պարտադիր ներառում են ոչ միայն հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքները, այլև նախորդող հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված թերացումների շտկման գծով ձեռնարկված միջոցառումներն ու դրանց հետևանքները:

Ստորաբաժանումների հաշվետվությունները ներկայացվում են բուհի որդեգրած առաքելության տրամաբանությամբ և փոխկապակցվում են բուհի կառավարման խորհրդին ռեկտորի կողմից ներկայացվող համապարփակ տարեկան հաշվետվության դրույթներին: Ուսումնական տարվա սկզբին բուհի ռեկտորատի կողմից սահմանվում է բուհի տարբեր ստորաբաժանումների կողմից հաշվետվությունների ներկայացման ժամանակացույց, որտեղ հստակեցվում են հաշվետվության ներկայացման հասցեատերերը, հաշվետու ստորաբաժանումների պատասխանատուները:

Շահակիցներին հաշվետվողականության քաղաքականությունը արդյունավետ է իրագործվում, եթե կիրառվում է հետադարձ կապի մեխանիզմը հաշվետու ստորաբաժանման և շահառուների միջև: Հետադարձ կապի ապահովման նպատակով հաշվետվության մեջ տեղեկատվություն է գետեղվում նախորդող հաշվետվություններում նկարագրված բացթողումների և դրան հաջորդող բարելավման գործողությունների վերացման մասին:

Մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) մշտադիտարկումն ու վերանայումը նույնպես որակի ապա-

հովման կարևորագույն գործիքներից են, որի խնդիրներն են՝

- գնահատել և վերագնահատել ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչներին «ՀՈԻՄԿ» ԿՀ-ի ՄԿԾ-ի վերջնարդյունքների համապատասխանությունը,
- գնահատել և վերագնահատել ծրագրի և առանձին դասընթացների սահմանած նպատակներին հասնելու և ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման ընթացքը և մակարդակը,
- գնահատել և վերագնահատել ՄԿԾ-ի վերջնարդյունքների համապատասխանությունը աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին և դրանց արդիականությունը,
- գնահատել և վերագնահատել ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածությունը,
- գնահատել և վերագնահատել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման գործընթացների արդյունավետությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Որակի ներքին ապահովման գործընթացը բուհերից պահանջում է համալիր գործիքակազմի կիրառում՝ միտված կրթության ներքին և արտաքին շահառուների պահանջմունքների բավարարմանը: Ընդ որում, բուհերին որքանով որ հաջողվում է այդ պահանջմունքներին ընդառաջ գնալը և բավարարումը, այնքանով նրանք դառնում են մրցունակ կրթական շուկայում: Այս առումով, առավել հաջողակ են դառնում այն բուհերը, որոնք իրենց համար հստակ սահ-

մանում են որակի ներքին ապահովման գործիքների կիրառման ուղղություններն ու շրջանակը:

Ani Arakelyan

‘International Accountancy Training Centre’,
Head of Quality Assurance Centre

TOOLS OF QUALITY ASSURANCE IN UNIVERSITIES

Keywords – *education market, beneficiaries of educational services, vocational education programs, quality of education.*

The process of internal quality assurance of educational services requires universities to use a comprehensive set of tools aimed at meeting the needs of internal and external stakeholders. At the same time, as more universities manage to meet these requirements, as they are becoming increasingly competitive in the education market. In this regard, universities then become more advanced, when they clearly define the directions and extent of the use of internal quality assurance tools.

Ани Аракелян

‘Международный Центр по Обучению Бухгалтерии’,
Руководитель Центра обеспечения качества

ИНСТРУМЕНТЫ ОБЕСПЕЧЕНИЯ КАЧЕСТВА В ВУЗАХ

Процесс внутреннего обеспечения качества образовательных услуг требует от университетов применять

комплексный набор инструментов, направленных на удовлетворение потребностей внутренних и внешних заинтересованных сторон. В то же время, как больше вузам удастся удовлетворить эти требования, так и они становятся все более конкурентоспособными на рынке образования. В связи с этим, университеты тогда становятся все более продвинутовыми, когда четко определяют направлений и масштабы использования внутренних инструментов обеспечения качества.

Ключевые слова – рынок образования, бенефициары образовательных услуг, программы профессионального образования, качество образования.

*Ներկայացվել է՝ 04.04.2018 թ.
Ընդունվել է 18.04.2018 թ.*

Գիտական հանդեսը հրատարակության է երաշխավորել
«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական
հիմնադրամի Գիտական Խորհուրդը:

Գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է
«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական
հիմնադրամի պաշտոնական կայքէջում՝ www.iatc.am :

Երևան, Չարենցի 1, 9-րդ հարկ
հեռ.՝ (+37410) 575940, e-mail՝ info@iatc.am

Չափսը՝ 60x84 1/16
Տպագրություն օֆսեթ՝ 9,69 մամուլ
Տպաքանակ՝ 200
Տպագրված է՝ Ա/Ձ «Արսեն Ժամհարյան» տպարանում
Երևան-25, Ալեք Մանուկյան 1/5

Գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է
«Հաշվապահության Ռեսուրսների Միջազգային Կենտրոն»
կրթական հիմնադրամի պաշտոնական կայքէջում՝ www.iatc.am:



ՀՀ, Երևան 0025, Չարենցի 1, 9-րդ հարկ, www.iatc.am, info@iatc.am
հեռ.՝ 010 575 940, 055 575 940, 099 575 940